

Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն


Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ

ՀՀ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ

# 2013-2017

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



ԵՐԵՎԱՆ  
2016

Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն

---

Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ

---

---

ՀՀ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
**2013-2017**  
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

---

---

ԵՐԵՎԱՆ  
**2016**

---

**Հետազոտական թիմի անդամներ**

Լիլիթ Ավդալյան  
Հերմինե Կարապետյան  
Մարինա Գալստյան  
Տաթև Մարգարյան

**Մարզային հաճակարգողներ**

Լիլիթ Բադալյան  
Տիգրան Մաթևոսյան  
Օժենի Ավետիսյան  
Նելլի Մանուկյան  
Տիգրան Անտոնյան  
Նարե Հայրապետյան  
Իրինա Դարբինյան  
Հարություն Պողոսյան  
Հասմիկ Գևորգյան  
Արփինե Երիցյան

**Խմբագրողներ**

Անուշ Նալդրանյան  
Աշխեն Դավթյան  
Քնարիկ Գալավարյան

**Անգլերենի թարգմանիչներ**

Անուշ Նալդրանյան  
Աշխեն Դավթյան  
Քնարիկ Գալավարյան

## Բովանդակություն

Հապավումների ցանկ.....	5
Ներածություն.....	6

### **Մաս 1.33 Երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարության և երիտասարդության արդի կարիքների վերլուծություն .....**

**7**

1.1 Տեղեկատվության հավաքագրման մեթոդները և աղբյուրները .....	7
1.2 Ռազմավարության կառուցվածքի վերլուծություն .....	8
1.3 Ռազմավարության համապատասխանությունը պետական երիտասարդական քաղաքականության 2015-2025թթ. հայեցակարգին .....	12
1.4 Երիտասարդության կարիքների վերլուծություն .....	13
1.5 Երիտասարդական ռազմավարության վերաբերյալ կարծիքներ և առաջարկներ .....	24

### **Մաս 2. 33 Երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017թթ. ռազմավարության միջոցառումների ծրագրի մոնիթորինգ ծրագրերի գնահատման մեթոդաբանության փորձարկում .....**

**31**

2.1 Ռազմավարության մոնիթորինգի և գնահատման նպատակը և խնդիրները .....	31
2.2 33 երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017թթ. ռազմավարության միջոցառումների ծրագրի մոնիթորինգի արդյունքները.....	32
2.3 33 սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից հասարակական կազմակերպություններին տրամադրված դրամաշնորհային ծրագրերի հաշվետվությունների վերլուծության արդյունքներ .....	33
2.4 Ռազմավարության ծրագրերի փորձնական գնահատում .....	39

Հավելված .....	74
----------------	----

### **Report on the Monitoring and Evaluation of the 2013-2017 Strategy of State Youth Policy of the RA .....**

**76**

## **Շնորհակալության խոսք**

Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտը շնորհակալություն է հայտնում ՀՀ Սպորտի և երիտասարդության նախարարությանը Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի կողմից իրականացվող հետազոտական գործունեությանը մշտապես աջակցելու համար:

Շնորհակալություն ենք հայտնում հետազոտությանը մասնակցած երիտասարդության բոլոր շահագրգիռ կողմերին՝ քաղաքականություն մշակողներին, առանցքային տեղեկատուներին, երիտասարդական կազմակերպություններին, ում պատրաստական և բաց շփումը հնարավորություն ընձեռեց ստանալ ոլորտի համապարփակ պատկերը: Ուրախ ենք տեսնել, որ երիտասարդական ռազմավարության մշակման գործընթացը մեր երկրում շարունակաբար դառնում է ավելի մասնակցային երիտասարդներին հնարավորություն ընձեռելով ուղղակիորեն մասնակցելու ռազմավարական խնդիրների քննարկմանը:

Ինչպես նաև ցանկանում ենք շնորհակալություն հայտնել հետազոտությանը ներգրավված բոլոր մարդկանց, ովքեր այս կամ այն կերպ նպաստել են հետազոտության գաղափարի առաջադրմանը, մեթոդաբանության մշակմանը, դաշտային աշխատանքների իրականացմանը, արդյունքների հավաքագրմանը, տվյալների մշակմանը, ինչպես նաև արդյունքների վավերացման գործընթացներին:

## **Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի մասին**

Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտը (այսուհետ՝ ԵՈՒԻ-ն) հիմնադրվել է 2013թ. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի աջակցությամբ: Ինստիտուտի առաքելությունն է նպաստել փաստարկված երիտասարդական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացին երիտասարդների մասնակցությամբ:

Ինստիտուտի գործունեության ուղղություններն են երիտասարդական ուսումնասիրությունների իրականացումը, հետազոտությունների հիման վրա երիտասարդների համար արդիական խնդիրների լուծմանն ուղղված առաջարկությունների մշակումը, ինչպես նաև երիտասարդության ոլորտի տարբեր խմբերի հետ ցանցի ձևավորումը, ակադեմիական գիտելիքի տարածումը:

Ինստիտուտը իրականացրել է մի շարք հետազոտություններ, որոնց թվում կարելի է առանձնացնել՝

- ՀՀ երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրների ուսումնասիրություն,
- Երիտասարդական հասարակական կազմակերպությունների քարտեզագրում,
- Աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրություն,
- Երիտասարդական աշխատանքի եվ երիտասարդական աշխատողի վերաբերյալ հետազոտություն. ինստիտուտի ներկայիս վիճակը եվ կայացման հեռանկարները:

## Հաղավումների ցանկ

ԵՀԿ	Երիտասարդական հասարակական կազմակերպություն
ԵՄԻԿ	Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն
ԵՈՒԻ	Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ
ԶԼՄ	Ջանգվածային լրատվամիջոցներ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՍԵՀՆ	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏՏ	Տեղեկատվական տեխնոլոգիաներ
ՖԽ	Ֆոկուս խումբ

## Ներածություն

ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարությունը (այսուհետ՝ Ռազմավարություն) մշակվել է 2012թ.՝ հիմնվելով Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցի և Հայաստանի երիտասարդների ձգտումների և ակնկալիքների համապարփակ ուսումնասիրության վրա: Ըստ ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2015-2025թթ. հայեցակարգի՝ երիտասարդական պետական քաղաքականությունը ՀՀ պետական քաղաքականության բաղկացուցիչ մասն է և ունի ռազմավարական նշանակություն: Այն կոչված է ստեղծելու իրավական, տնտեսական և կազմակերպչական պայմաններ երիտասարդության համակողմանի զարգացման, ինքնահաստատման և ինքնադրսևորման համար: Երիտասարդական պետական քաղաքականությունը մշակվում և իրականացվում է պետական կառավարման լիազորմարմնի կողմից՝ պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, երիտասարդական պետական քաղաքականության սուբյեկտների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ:

Տվյալ հետազոտության անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2018-2022 թթ. ռազմավարությունը մշակելու համար կարիք կա գնահատելու նախորդ ռազմավարությունը երիտասարդների կարիքների համապատասխանության, տրամաբանական կառուցվածքի, չափելիության և այլ տեսանկյուններից:

Համապատասխանաբար, Ռազմավարության գնահատման և մոնիթորինգի հետազոտությունը ունի երկու բաղադրիչ: **Առաջին բաղադրիչը** Ռազմավարության կառուցվածքի գնահատումն է և երիտասարդների կարիքների վերլուծությունը, որի նպատակն է դիտարկումներ և առաջարկություններ ներկայացնել Ռազմավարության, մասնավորապես Ռազմավարության կառուցվածքի և առկա երիտասարդական կարիքների հետ դրա համապատասխանության վերաբերյալ:

Հետազոտության **երկրորդ բաղադրիչն** ուղղված է Ռազմավարության ծրագրերի մոնիթորինգին և գնահատմանը: Այս բաղադրիչի նպատակն է Ռազմավարության համալիր մոնիթորինգի և գնահատման մեթոդաբանության մշակումը և փորձարկումը:

Գնահատումն իրականացվել է Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի կողմից 2016թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՀՀ սպորտի և երիտասարդական հարցերի նախարարության աջակցությամբ:

Ակնկալվում է, որ հետազոտության արդյունքները կօգտագործվեն ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2018-2022թթ. ռազմավարության մշակման առավել արդյունավետ գործընթացի կազմակերպման համար:

# Մաս 1. ՀՀ երիտասարդական ղետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարության և երիտասարդության արդի կարիքների վերլուծություն

## 1.1 Տեղեկատվության հավաքագրման մեթոդները և աղբյուրները

Վերլուծությունը հիմնվում է ռազմավարական ծրագրի մշակման տեսությունների և հետազոտական աշխատանքներից ստացած տեղեկատվության վրա: Մասնավորապես, տեղեկատվություն է հավաքագրվել հետևյալ մեթոդներով՝ փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական հարցազրույցներ ու խմբային քննարկումներ:

Ռազմավարության գնահատման գործընթացի մասնակցայնության ապահովման նպատակով ԵՈՒ-ն ձևավորել է 5 փորձագետներից բաղկացած աշխատանքային խումբ, որը բաղկացած է տարբեր ոլորտների մասնագետներից՝ մոնիթորինգի և գնահատման, ռազմավարական պլանավորման, երիտասարդական, խոցելի խմբերի ներառման և միջազգային համագործակցության: Աշխատանքային խումբն իրականացրել է երկրորդային վերլուծություն, երիտասարդների կարիքների գնահատում, աջակցություն գնահատման գործիքների մշակմանը: Գնահատման գործընթացին մասնակցել են նաև ԵՈՒ մարզային համակարգողները, որոնք պատասխանատու են եղել մարզերում խմբային քննարկումների և առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցների իրականացման համար:

### Փաստաթղթային վերլուծություն

Փաստաթղթերի կազմում ուսումնասիրվել են 2013-2016թթ. երիտասարդական ոլորտում իրականացված հետևյալ հետազոտությունները և վերլուծությունները.

1. ՀՀ երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, 2013թ.
2. Երիտասարդական կազմակերպությունների քարտեզագրում և պետության կողմից ֆինանսավորվող երիտասարդական դրամաշնորհային ծրագրերի արդյունավետության գնահատում, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, 2014թ.
3. Գյուլրու երիտասարդության իրավիճակի վերլուծություն, Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն ՀԿ, 2015թ.
4. Գյուլական համայնքների երիտասարդության իրավիճակի վերլուծություն, Համայնքային և երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն ՀԿ, 2016թ.
5. Կարիքների գնահատում և ռազմավարական ուղղությունների մշակում՝ երիտասարդության հարցերի ոլորտում ՅՈՒՆԵՍԿ-ի Հայաստանի գրասենյակի ներգրավվածության համար, Youth Policy Labs, 2016թ.
6. Անկախության սերունդ. Հետազոտություն երիտասարդների շրջանում, Հայաստան 2016, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, 2016թ.

Ուսումնասիրվել է նաև ՀՀ երիտասարդական քաղաքականության 2015-2025թթ. հայեցակարգը և ռազմավարության գերակայություններում արտացոլված ոլորտներին առնչվող հիմնական պետական ռազմավարությունները.

- Առողջ ապրելակերպի խթանման ռազմավարական ծրագիր, 2014-2020,
- ՀՀ տարածքային զարգացման 2016-2025 թվականների ռազմավարություն,
- ՀՀ զբաղվածության 2013–2018 թվականների ռազմավարություն:

### Հարցազրույցներ

Փաստաթղթերի ուսումնասիրությունից զատ՝ Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի կողմից իրականացվել են փորձագիտական հարցազրույցներ և քննարկումներ երիտասարդների ու երիտասարդական ՀԿ-ների ներկայացուցիչների հետ, որոնցից ստացած տեղեկատվությունը ևս օգտագործվել է



երիտասարդական կարիքների բացահայտման, կարիքների առաջնահերթությունների սահմանման և երիտասարդական քաղաքականության ռազմավարության վերաբերյալ առաջարկությունների մշակման նպատակով:

Կարիքների գնահատման համար իրականացվել է **10 փորձագիտական** հարցազրույց, **13 հարցազրույց** առանցքային տեղեկատուների հետ, որոնցից 10-ը՝ մարզերում, 3-ը՝ Երևանում:

### **Խմբային քննարկումներ**

Իրականացվել է **14 ֆոկուս-խմբային քննարկում**, որոնցից 10-ը՝ մարզերում, 4-ը՝ Երևանում:

Ֆոկուս-խմբային քննարկումները իրականացվել են երիտասարդների կարիքների գնահատման նպատակով ԵՈՒ մարզային համակարգողների կողմից, որոնք նախապես անցել են համապատասխան վերապատրաստում և հրահանգավորում: Քննարկումներում քվեարկության միջոցով դուրս են բերվել առաջնահերթ լուծում պահանջող կարիքները, որոնց, երիտասարդների կարծիքների համաձայն, պետք է ուղղված լինի ՀՀ երիտասարդական քաղաքականության մշակվող նոր ռազմավարությունը:

Քննարկման ընթացքում կարիքների գրանցման աղյուսակում գրի են առնվել երիտասարդների մշած կարիքները, որոնցից յուրաքանչյուրի համար սյունակներում առանձնացվել են՝

- Կարիքի բավարարման խոչընդոտները,
- Համայնքում/մարզում, ով է զբաղվում/առնչվում կարիքի հասցեագրմամբ,
- Ինչ է արվել մինչ օրս համայնքում մշած կարիքի բավարարման համար:

Աղյուսակում առանձնացվել է նաև «միավոր» սյունակ, որտեղ խմբային քվեարկության արդյունքում մշվել է երիտասարդների կարիքների կամ խնդիրների առաջնահերթության/առաջնայնության ցուցանիշը:

## **1.2 Ռազմավարության կառուցվածքի վերլուծություն**

Այս գլխում կքննարկվի ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարության կառուցվածքն ըստ բաժինների, յուրաքանչյուր բաժնում արտացոլված բովանդակությունը, և առաջարկները կներկայացվեն բաժինների կառուցվածքի և ներառված թեմաների վերաբերյալ:

### **Բաժին I. Ընդհանուր դրույթներ**

Ռազմավարության առաջին բաժնում ներառված են հետևյալ գլուխները՝ Ռազմավարության նպատակը, պետական երիտասարդական քաղաքականության ներկա վիճակի վերլուծությունը, երիտասարդության վիճակի նկարագրությունը:

#### **Գլուխ 1. Ռազմավարության նպատակը**

Ռազմավարության նպատակի վերաբերյալ գլխում ներկայացված են պետական երիտասարդական քաղաքականության նպատակը, ռազմավարության հիմքում ընկած փաստաթղթերը, իրականացնող կողմերը, շահառուները: Ընդ որում, առաջին իսկ կետում թվարկված են ռազմավարության համար հիմք ծառայող վերլուծությունները: Նպատակահարմար կլիներ, սակայն, ռազմավարության ներածական մասի առաջին կետերում նախ ներկայացնել ռազմավարության մշակման շարժառիթը, տվյալ փաստաթղթի նպատակը, գործընթացի նախաձեռնողներին ու մասնակիցներին, և ապա նոր անցնել բուն փաստաթղթի նկարագրությանը, ինչպես սովորաբար արվում է փաստաթղթերի ներածական մասում: Այսպես՝ փաստաթղթի 7-րդ կետը անդրադառնում է երիտասարդների վերաբերյալ վիճակագրական տվյալներին և նրանց դերին հասարակության մեջ: Այս դատողությունները ռազմավարության անհրաժեշտության հիմնավորման մաս են, և կարելի է դրանք ներառել առաջին դրույթներում՝ որպես նախաբան, որից բխում է ռազմավարության մշակման անհրաժեշտությունը:

Միևնույն ժամանակ, հստակ մշված չէ պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգի և ռազմավարության կապն ու տարբերությունը: Նշվում են երիտասարդական քաղաքականության նկարագիրը (կետ 3-5), նպատակը, մշակողները, սակայն հասկանալի չէ, թե ինչպես են այդ նպատակը և մշակողները առնչվում տվյալ ռազմավարությանը. կարելի է տվյալ դեպքում համապատասխան անցումային դատողություններ ներառել:

6-րդ կետում մշվում է Ռազմավարության շահառուների մասին. միաժամանակ, մասնակցային մոտեցում որդեգրելու դեպքում առաջարկվում է «շահառու» բառի փոխարեն օգտագործել «շահագրգիռ կողմեր», քանի

որ, ենթադրվում է, երիտասարդները և երիտասարդական հասարակական կազմակերպությունները ռազմավարության ոչ միայն շահառուն են, այլև մշակման և իրականացման մասնակիցները:

Առաջին գլխի վերջին երկու կետերը վերաբերում են արդեն բուն ռազմավարության նպատակներին և ուղղություններին: Այս կետերը ամփոփում են այն գերակայությունները, որ շարադրված են հետագա տեքստում, որը տեղին է, եթե առաջին գլուխը ներկայացվում է որպես ռազմավարության ամփոփ նկարագիր: Այդ դեպքում այս գլխի անվանումն ու բովանդակությունն էլ պետք է համապատասխան լինեն, այսինքն՝ ամփոփ ներկայացնեն մնացած մասերում առկա տեղեկատվությունը: Սակայն եթե առաջին գլուխը ներածական բնույթ է կրում, նպատակներն ու առաջնություններն այստեղ ներկայացնելու անհրաժեշտություն չկա, փոխարենը, ինչպես նշվեց վերևում, այստեղ կարելի է ներկայացնել ռազմավարության մշակման գործընթացի նախածեռնման ու իրականացման գործընթացը, իսկ բովանդակային հարցերին անդրադառնալ հետագա գլուխներում:

## **Գլուխ 2. Պետական երիտասարդական քաղաքականության ներկա վիճակի վերլուծությունը**

Ռազմավարության երկրորդ գլխում ներկայացված է պետական երիտասարդական քաղաքականության ներկա վիճակի վերլուծությունը: Բացի պետական երիտասարդական քաղաքականության վերաբերյալ տեղեկատվությունից՝ այս գլխում ներկայացված են նաև երիտասարդության հետ աշխատող կառույցները, ծրագրերի առցանց համակարգը, կատարված վերլուծությունները: Այսինքն՝ կարելի է ասել, որ այս գլուխն ամփոփում է երիտասարդության ոլորտում գործող կառույցների ու իրականացված հիմնական հետազոտությունների պատկերը, որը ռազմավարական պլանավորման ընթացքում իրավիճակի վերլուծության մաս է կազմում: Միաժամանակ, 20-րդ և 21-րդ կետերը թռուցիկ անդրադառնում են նաև ոլորտում առկա խնդիրներին: Նպատակահարմար կլինի այդ խնդիրներին անդրադառնալ հաջորդ բաժնում, որտեղ նկարագրվում է երիտասարդության վիճակը, իսկ այս բաժնում թողնել առկա կառույցների, պատասխանատու մարմինների մասին տեղեկատվությունը, այսինքն՝ ոլորտային քաղաքականության (կազմակերպությունների, փաստաթղթերի) առումով առկա նախադրյալների ու բացերի (եթե դրանք կան) վերաբերյալ տեղեկատվությունը: Միևնույն ժամանակ, բացի պետական կառույցներում գործող կազմակերպություններից՝ այստեղ կարելի է ներառել նաև ոլորտում դերակատարություն ունեցող այլ կառույցները, մասնավորապես միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունները, նրանց իրականացրած ծրագրերը՝ ոլորտում առկա դերակատարների ու իրականացվող աշխատանքների ամբողջական պատկերն ունենալու համար:

## **Գլուխ 3. Երիտասարդության վիճակի նկարագրությունը**

Գլուխ 3-ի անվանումից բխում է, որ այստեղ ներկայացված է առկա իրավիճակի նկարագիրը, այսինքն՝ երիտասարդական ոլորտի հիմնախնդիրները, ձեռքբերումները և այլն: Սակայն դրա փոխարեն այս գլուխը սահմանում է հիմնախնդիրների լուծման ռազմավարական ուղղությունները: Ընդ որում, այս լուծումների ընտրության հիմնավորումն ու գործընթացը ներկայացված չեն: Ըստ էության, դրանց հիմնավորումները տրված են հաջորդ բաժնում՝ հետազոտական-վերլուծական աշխատանքների հիմնական արդյունքների ներկայացմամբ: Առաջարկվում է այս գլուխը տեղափոխել հիմնախնդիրների ներկայացումից հետո, որպեսզի հասկանալի լինի, թե ինչու են առաջարկվում հենց այս ուղղությունները:

### **Առաջարկներ բաժին I-ի վերաբերյալ**

Առաջարկվում է՝

1. Մինչ առաջին բաժինը ներածություն կամ նախաբան նախատեսել՝ Ռազմավարության մշակման անհրաժեշտությունը, նպատակը և գործընթացը ներկայացնելու համար: Ներածական մասում կարելի է նաև համառոտ ներկայացնել փաստաթղթի կառուցվածքը՝ ինչ մասեր է ներառում Ռազմավարությունը և ինչ հերթականությամբ:
2. Առաջին բաժնում ներառել իրավիճակի նկարագիրը՝ առանձին գլխով նկարագրելով երիտասարդական քաղաքականությունը՝ նախապատմությունը, մշակող կողմերը, հայեցակարգը և այլն, ոլորտում գործող կառույցները՝ ՊՈԱԿ-ներ, երիտասարդական կազմակերպություններ, առչվող փաստաթղթեր, որոշումներ, հետազոտություններ, ներառելով ոչ միայն պետական ֆինանսավորմամբ գործող կառույցների ու իրականացված ծրագրերի, այլև միջազգային ու տեղական կառույցների, նրանց ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն: Ըստ անհրաժեշտության՝ այս տեղեկատվությունը կարող է ամփոփվել առանձին գլուխներով: Այնուհետև ներառել երիտասարդության իրավիճակի նկարագիրը՝ առկա հիմնախնդիրները, վերլուծություններից և հետազոտություններից դուրս բերված առավել արդիական կարիքները, առկա զարգացումները և այլն:

3. Իրավիճակի նկարագրից բխող առաջնայնություններն ու ռազմավարական ուղղությունները ներկայացնել հաջորդ բաժնում:
4. Ըստ նախընտրության՝ ռազմավարության ամփոփ նկարագիրը՝ հիմնախնդիրները, գերակայությունները, նպատակները և այլն, ներառել առանձին բաժնում՝ որպես ամփոփ նկարագիր:

## **Բաժին II. Հիմնական գերակայությունները**

Ռազմավարության երկրորդ բաժնում ներկայացված են ռազմավարության ընտրված գերակայությունները և դրանց հիմնավորումը: Յուրաքանչյուր գերակայության հիմնավորում ներկայացված է առանձին գլխով, հետագոտական աշխատանքներից վերցված մանրամասն տվյալներով: Իհարկե, ռազմավարությունը պետք է պարունակի իրավիճակի նկարագրման մաս, սակայն կարելի է տվյալները ներկայացնել ավելի ամփոփ կերպով՝ նշելով միայն առավել էական, ամփոփ տեղեկատվություն հիմնախնդրի կամ հավաքագրված կարծիքների մասին և հղում կատարելով համապատասխան հետագոտությանը, որտեղից ընթերցողն արդեն ինքը կարող է ծանոթանալ լրացուցիչ մանրամասներին: Ռազմավարության բովանդակային մասում հիմնախնդրի նկարագիրը իր ծավալով պետք է համաչափ լինի առաջարկվող նպատակների ու գործողությունների նկարագրի հետ: Տվյալ դեպքում յուրաքանչյուր գլուխ գերազանցապես նվիրված է խնդրի նկարագրմանը՝ հազվադեպ անդրադառնալով առանձին խնդիրների վերաբերյալ լուծումներին: Այսպես, օրինակ, Գլուխ 6-ի 55-րդ կետում նշվում է, որ Ռազմավարությամբ նախատեսվում է շարունակել աշխատանքները «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի պայմանների շարունակական բարելավման ուղղությամբ, քանի որ նախորդ կետերում անդրադարձ կար բնակարանային խնդիրներին, սակայն դրան նախորդող մի շարք այլ խնդիրների վերաբերյալ լուծումներ չեն առաջարկվում: Այնուամենայնիվ, վերջին գերակայություններին նվիրված գլուխներում իրավիճակի նկարագրին հաջորդում են ամփոփ կետեր ռազմավարության մեջ նախատեսվող համապատասխան միջոցառումների վերաբերյալ: Սակայն, դատելով Ռազմավարության միջոցառումների ծրագրից, ակներև է, որ տեքստում միայն մի քանի միջոցառումներն են ընդգրկված, իսկ միջոցառումների գերակշռող մասը հայտնի է դառնում միայն միջոցառումների ծրագրում: Բացի այդ՝ նշված լուծումները հիմնականում վերացական են ձևակերպված, հասկանալի չէ, թե, օրինակ, քանի երիտասարդ ընտանիքի հնարավորություն կտրվի մատչելի գնով բնակարան ձեռք բերել, կամ ինչ արդյունքներ են ակնկալվում առանձին իրազեկման կամ քարոզչական ծրագրերի իրականացումից, ինչ ընդգրկվածություն են ունենալու այդ ծրագրերը և այլն:

### **Առաջարկներ բաժին II-ի վերաբերյալ**

1. Քանի որ առաջին բաժնում առաջարկվեց ընդգրկել նաև իրավիճակի նկարագիրը, ներկայիս ռազմավարության երկրորդ բաժնի բովանդակության հիմնական մասը՝ համառոտ ձևով, այդպիսով կարելի է ընդգրկել առաջին բաժնում:
2. Երկրորդ բաժնում առաջարկվում է սահմանել իրավիճակի նկարագրից բխող գերակա ուղղությունները և դրանց ընտրության հիմնավորումը (չափանիշները): Եթե այս ուղղությունները բխում են ոչ թե իրավիճակի նկարագրից, այլ, օրինակ, երիտասարդական քաղաքականության հայեցակարգից, ապա դա պետք է բացատրել առաջնությունները շարադրելիս և համառոտ ներկայացնել նաև այդ առաջնությունների ընտրության հիմնավորումը:
3. Առաջարկվող ուղղությունների իրականացման նպատակով սահմանել ռազմավարական նպատակները, որոնցից արդեն կբխեն համապատասխան միջոցառումները (դրանք կարելի է ձևակերպել որպես ենթանպատակ կամ խնդիր): Օրինակ, մատչելի բնակարան ծրագիրը կբխի երիտասարդներին բնակարանով ապահովման նպատակից, կամ առողջ ապրելակերպի մասին իրազեկման միջոցառումները կբխեն երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի մշակույթը տարածելու նպատակից և այլն:
4. Յուրաքանչյուր նպատակ ձևակերպելիս հղում կատարել համապատասխան խնդրին, կարիքին՝ հիմնավորել նպատակի ընտրությունը:
5. Նպատակները և խնդիրները ձևակերպել չափելի ձևով, որպեսզի պարզ լինի, թե կոնկրետ ինչ արդյունք կլինի տվյալ նպատակին կամ խնդրին հասնելուց հետո, իսկ հետագայում հնարավոր լինի ապահովել դրանց գնահատումը:

### **Առաջարկներ հետագա բաժինների վերաբերյալ**

Մինչ միջոցառումների ծրագրի շարադրումը, առաջարկվում է Ռազմավարության մեջ ընդգրկել մի շարք այլ բաժիններ, որոնք կնպաստեն Ռազմավարության ավելի արդյունավետ իրականացմանը: Մասնավորապես, առաջարկվում է ընդգրկել հետևյալ բաժինները.

1. *Իրականացնող կողմեր*. թեև միջոցառումների ծրագրում իրականացնող կողմերը նշված են, նպատակահարմար կլինի մեկ գլխի կամ բաժնի միջոցով ամփոփել ռազմավարության հիմնական դերակատարներին, յուրաքանչյուր կառույցում պատասխանատու անձին (օրինակ՝ պաշտոնը), այդ կառույցների աշխատանքի համակարգման գործընթացը, և հղում անել միջոցառումների ծրագրին՝ առանձին միջոցառումների համար պատասխանատուներին գտնելու համար: Այս բաժնում կարելի է նկարագրել նաև մասնակցության մեխանիզմները՝ երիտասարդների ու երիտասարդական կազմակերպությունների նախատեսվող մասնակցությունը ռազմավարության իրականացմանը:
2. *Ֆինանսավորման մեխանիզմներ*. ռազմավարության իրագործման համար կարող են անհրաժեշտ լինել թե՛ բյուջետային, թե՛ արտաբյուջետային միջոցներ: Այս գլխում կարելի է նկարագրել, թե արդյոք անհրաժեշտ են լրացուցիչ միջոցներ, ինչպես և որտեղից է պլանավորվում հայթայթել այս ռեսուրսները, ինչպես է կազմակերպվելու ֆոնդահայթայթման գործընթացը (օրինակ՝ կազմվելու է առանձին ֆոնդահայթայթման պլան կամ այլ), ինչ պայմանավորվածություններ կան դոնոր կազմակերպությունների հետ, և հղում կտրվի միջոցառումների ծրագրին, որտեղ մոտավոր կնշվեն պահանջվող միջոցները՝ դրամական արտահայտությամբ:
3. *Մոնիթորինգ ու գնահատում*. այս բաժնում կնկարագրվեն Ռազմավարության մոնիթորինգի մեխանիզմները, պատասխանատուները, ներգրավված կողմերը, մեթոդները, գնահատման պարբերականությունը և այլն:
4. *Հանրայնացման և հաղորդակցության պլան*. այս բաժինը ներառում է ռազմավարության հանրայնացման մեխանիզմները, թիրախ խմբերը, զանգվածային հաղորդակցության միջոցներով ռազմավարության հիմնական դրույթների և ուղերձների տարածման պլանը, ցանկության դեպքում կարելի է ներառել նաև ռազմավարության հետ կապված կարծ ուղերձներ, տարբերանշաններ և այլն:

## **Միջոցառումների ծրագիր**

Ռազմավարության վերջին մասում ներառված է միջոցառումների ծրագիրը: Այն իրենից ներկայացնում է մի աղյուսակ, որտեղ ներառված են ռազմավարության գործողություններն ըստ գերակայությունների, դրանց համար պատասխանատու (հավանաբար նկատի ունենալով իրականացնողին) և համագործակից կառույցները, իրականացման ժամկետները և ֆինանսավորման աղբյուրները: Ծրագիրը կազմված է մյուս պետական ծրագրերի կառուցվածքով և ըստ էության, ներառում է բոլոր անհրաժեշտ կետերը: Միակ խնդիրը կարող է լինել ժամանակային առումով անորոշությունը, քանի որ միջոցառումների մեծ մասը նախատեսված է բոլոր տարիների համար: Մյուս կողմից, այս ծրագիրը ավելի մանրամասն ծրագրեր է պահանջում, քանի որ յուրաքանչյուր գործողություն մի առանձին ծրագիր կամ ծրագրերի համախումբ է իրենից ներկայացնում: Միջոցառումների չափելիության ապահովման և ավելի մանրամասն քայլեր մշակելու նպատակով անհրաժեշտ կլինի մշակել մոնիթորինգի պլանը, որտեղ կնշվեն յուրաքանչյուր գործողության հաջողության ցուցանիշները, դրանց ստուգման մեթոդներն ու ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները, կարելի է նշել նաև առկա ռիսկերը: Այնուհետև, յուրաքանչյուր գործողության համար կարող է մշակվել գործողությունների պլան, որը կներառի նաև վերահսկման գործողությունները և ռիսկերը կանխարգելելու կամ դրանց ազդեցությունը նվազեցնելու ուղղությամբ քայլերը: Այս պլանը կարող է կազմել տվյալ գործողության համար որպես պատասխանատու սահմանված կառույցը:

Միջոցառումների ծրագրի բովանդակային կողմին առավել մանրամասն անդրադարձել ենք հաջորդ բաժնում և Հավելված 2-ում:

## **Առաջարկներ միջոցառումների ծրագրի վերաբերյալ**

1. Քանի որ ռազմավարության համար պատասխանատու կառույցը ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունն է, առաջարկվում է միջոցառումների ծրագրում առանձնացնել տվյալ գործողության համար ոչ թե պատասխանատու, այլ իրականացնող կառույցը, որը կստանձնի հիմնական իրականացնողի դերը:
2. Միջոցառումների ծրագիրը հավելել կատարողականության ցուցանիշներով, որոնք կարելի է ամփոփել նաև վերահսկման ու գնահատման պլանում՝ ներառելով ցուցանիշների ստուգման մեթոդները ու տեղեկատվության աղբյուրները:

3. Հարկավոր է հաշվի առնել իրականացման կամ ակնկալվող արդյունքների հետ կապված ռիսկերը և նախատեսել համապատասխան լրացուցիչ գործողություններ:
4. Յուրաքանչյուր գործողություն ինքնին կարող է դառնալ ծրագիր, որտեղ կնախանշվեն համապատասխան քայլերը՝ իրենց պատասխանատուներով, ավելի կոնկրետ ժամանակային սահմաններով, թիրախներով ու ներգրաված կառույցներով:

### **1.3 Ռազմավարության համադաստասխանությունը դետական երիտասարդական քաղաքականության 2015-2025թթ. հայեցակարգի**

ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարությունը (Ռազմավարություն) մշակվել է մինչ երիտասարդական քաղաքականության նոր հայեցակարգի ընդունումը: Այնուամենայնիվ, նոր հայեցակարգը մշակելիս հաշվի են առնվել ռազմավարությունում արտացոլված գերակայությունները՝ միաժամանակ ընդգրկելով այլ արդիական խնդիրներ:

Մասնավորապես, հայեցակարգի հետևյալ գերակայությունները արտացոլում են Ռազմավարության մեջ արտացոլված գերակայությունները.

- 1) ՀՀ հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության խթանում,
- 2) Երիտասարդության զբաղվածության և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ մեխանիզմների մշակում,
- 3) Երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի խթանում,
- 4) Երիտասարդների հոգևոր-մշակութային արժեքների զարգացում և ռազմա-հայրենասիրական դաստիարակություն,
- 5) Կրթության շարունակականություն և ոչ ֆորմալ կրթության ճանաչելիություն:

Հայեցակարգում ընդգրկված հետևյալ գերակայությունը թեև առանձնացված չէ ռազմավարությունում, բայց միջոցառումների ծրագրում ներառված է հոգևոր-մշակութային արժեքների զարգացման գերակայության ներքո.

- 6) Աջակցություն միջազգային երիտասարդական համագործակցությանը և միջմշակութային երկխոսության զարգացմանը:

Հայեցակարգում ընդգրկված հետևյալ գերակայությունը թեև առանձնացված չէ ռազմավարությունում, բայց միջոցառումների ծրագրում ներառված է քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության գործընթացների խթանում գերակայության ներքո.

- 1) Երիտասարդների շարժունակության խրախուսում, հատուկ ծրագրերի մշակում և իրականացում:

Հայեցակարգի մյուս գերակայությունները նոր են և չկան ներկա Ռազմավարության մեջ.

- 2) Ընտանեկան արժեքների պահպանում և զարգացում: Աջակցություն երիտասարդ ընտանիքներին,
- 3) Հետազոտությունների միջոցով երիտասարդության տարբեր շերտերի կարիքների գնահատում և երիտասարդական քաղաքականությանն առնչվող իրավական դաշտի շարունակական կատարելագործում:

Հայեցակարգում նոր է նաև երիտասարդական աշխատողի հասկացությունը, որը երիտասարդի, երիտասարդ ընտանիքի և երիտասարդական կազմակերպությունների հետ միասին հանդես է գալիս որպես երիտասարդական քաղաքականության սուբյեկտ:

Հայեցակարգում երիտասարդական քաղաքականության յուրաքանչյուր ուղղություն բացատրված և մանրամասն նկարագրված է մի շարք ենթակետերի միջոցով, որոնք մասամբ են համընկնում Ռազմավարության միջոցառումների ծրագրի գործողություններին: Մասնավորապես, նոր է Հայաստանի երիտասարդության ազգային խորհրդի դերի կարևորումը՝ որպես մասնակցության խթանման գործոն, կամավոր աշխատանքի զարգացման կարևորումը, երիտասարդական ձեռներեցության խթանումը և ռազմավարության մեջ չընդգրկված գերակայություններին վերաբերող հարցերը՝ երիտասարդ ընտանիքների ուսման, բժշկական աջակցությունը,

ծնելիության խթանումը, երիտասարդների շարժունակության խթանումը և այլն: Առաջարկվում է նոր ռազմավարության մշակման ընթացքում Հայեցակարգում տրված ենթակետերը հաշվի առնել ընտրված գերակայությունների ներքո նպատակների ու խնդիրների շարադրման գործընթացում:

## 1.4 Երիտասարդության կարիքների վերլուծություն

ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարությունը մշակվել է հիմնվելով Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցի և Հայաստանի երիտասարդների ձգտումների և ակնկալիքների համապարփակ ուսումնասիրության վրա: Այդ զեկույցների վերլուծությունը և զեկույցներում վերհանված կարիքների համեմատությունը Ռազմավարության մեջ արտացոլված գերակայությունների ու գործողությունների հետ ցույց են տալիս, որ Ռազմավարությունը ներառել է զեկույցներում արտացոլված բազմաթիվ կարիքներ, այդ թվում՝ կապված զբաղվածության, առողջ ապրելակերպի, քաղաքական և քաղաքացիական գործընթացների մասնակցության, արժեքային կողմնորոշումների հետ: Մյուս կողմից, Ռազմավարության մեջ չեն արտացոլվել այնպիսի կարիքներ, ինչպիսիք են՝ կրթության անբավարար որակը՝ ըստ երիտասարդների (խոսքը թե՛ միջնակարգ և թե՛ բարձրագույն կրթության մասին է), ժամանցային ենթակառուցվածքների բացակայությունը մարզերում, միգրացիայի խնդիրները: Ռազմավարության առաջին գերակայության անվան մեջ նշվում է քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության խթանման մասին, սակայն հետագա նկարագրում և միջոցառումների ծրագրում ներառված են միայն քաղաքական ու քաղաքացիական կյանքին մասնակցության վերաբերյալ դրույթներ, իսկ տնտեսական ու մշակութային մասնակցությունը բաց է մնացել: Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարությունը հիմնականում արտացոլել է այդ ժամանակահատվածի հետազոտություններում մատնանշված կարիքները, սակայն առանձին կարիքներ չեն հասցեագրվել:

Հետագա վերլուծության ընթացքում կներկայացվեն հետազոտության ընթացքում ուսումնասիրված հետազոտություններում և վերլուծություններում արտացոլված, ինչպես նաև դաշտային աշխատանքների արդյունքում բացահայտված կարիքները, որոնք հնարավորինս խմբավորված են ըստ ընթացիկ ռազմավարության ուղղություններում արտացոլված ոլորտների:

### 1. Մասնակցության գործընթացների խթանում

Ռազմավարության միջոցառումների ցանկում առավել ծավալուն մաս են կազմում երիտասարդների մասնակցության խթանման ուղղված գործողությունները՝ ներառելով նաև երիտասարդական կազմակերպությունների զարգացման միջոցառումներ: Տարբեր հետազոտություններում և հարցազրույցների ու ֆոկլուս-խմբային քննարկումների ընթացքում ևս հաճախ է նշվում երիտասարդների մասնակցության կարևորության ու տարբեր բաղադրիչների մասին: Ստորև առանձնացված են մասնակցային գործընթացների հետ կապված այն խնդիրները և կարիքները, որոնք նշվել են տարբեր հետազոտություններում, հարցազրույցների ու ֆոկլուս-խմբային քննարկումների ընթացքում: Միևնույն ժամանակ, տնտեսական ու մշակութային կյանքում երիտասարդության մասնակցության խնդիրները քննարկվում են երիտասարդների զբաղվածության ու մշակութային ոլորտների համատեքստում, որոնք կներկայացվեն հետագա բաժիններում:

- 1) Մասնակցություն քաղաքական և քաղաքացիական կյանքում, որոշումների ընդունման գործընթացներում

Բազմաթիվ հետազոտություններում և հարցազրույցների ընթացքում նշվում է քաղաքացիական և քաղաքական հարցերում երիտասարդության ոչ բավարար մասնակցության մասին: Ըստ «Անկախության սերունդ» հետազոտության՝ թեև երիտասարդները հետաքրքրվում են քաղաքական հարցերով, գործնական մտադրությունների մակարդակում ցուցաբերում են քաղաքական անտարբերություն, որը պայմանավորված է քաղաքական մարմինների և իշխող կուսակցության նկատմամբ ցածր վստահությամբ:

Երիտասարդների լայն շրջանում պետական կառավարման համակարգի, համայնքում որոշումների կայացմանը մասնակցության հնարավորությունների, մարդու իրավունքների վերաբերյալ տեղեկացվածության ու գիտելիքի պակաս կա: Այս բացը հնարավոր է լրացնել տեղեկատվական միջոցներով, սակայն, միևնույն ժամանակ, հետազոտության մասնակիցները առավել արդյունավետ են համարում հատուկ միջոցառումների, ակումբների ու ֆորումների կազմակերպումը, քանի որ դրանք հնարավորություն են տալիս նաև զարգացնել

երիտասարդների հաղորդակցման հմտությունները և ավելի արդյունավետ յուրացնել տեղեկությունները:

Գյուղական համայնքների երիտասարդության իրավիճակի հետազոտությունում շեշտվում է համայնքներում որոշումների ընդունման մակարդակում երիտասարդների մասնակցության ընդլայնման անհրաժեշտությունը, որի համար, բացի գիտելիքներից ու կարողություններից, անհրաժեշտ է նաև զարգացնել տեղական ինքնակառավարման մարմինների՝ որոշումների մասնակցային ընդունման մշակույթը և աշխատանքի թափանցիկությունը:

Ընդհանուր առմամբ, քաղաքացիական գիտակցության զարգացման կարիք է արձանագրվում, քանի որ առանց համապատասխան վերաբերմունքի, գիտակցության, թե՛ գիտելիքներ ստանալու մոտիվացիան, թե՛ հետազայում այդ գիտելիքների օգտագործումը իրական մասնակցային գործընթացներում քիչ հավանական են: «Անկախության սերունդ» հետազոտական զեկույցում ընդգծվում է, որ երիտասարդների մեծամասնության քաղաքացիական ինքնագիտակցությունն ու քաղաքացիական ներգրավվածության մշակույթը դեռևս բարձր մակարդակի վրա չեն: Փորձագետները նշում են, որ հաճախ երիտասարդները, կենտրոնանալով առօրյա ապրուստի խնդիրների վրա, չեն կարևորում համայնքային և կամ հասարակական կյանքում մասնակցության հարցերը: Ազատ ժամանակ ունենալու պարագայում երիտասարդներն այն չեն ուղղում համայնքային խնդիրների լուծմանը, գաղափարներ առաջարկելու և ի կատար ածելու կարողություններ և ցանկություն չունեն: Չասարակական կյանքի մասնակցության մոտիվացիայի պակասը մասամբ պայմանավորված է պետական կառույցների հանդեպ թերահավատությամբ և տեղեկատվության պակասով:

### 2) Կամավորական աշխատանքի խթանում

Չետազոտական զեկույցներում և փորձագիտական հարցազրույցներում կարևորվում է կամավորական աշխատանքը՝ որպես մասնակցության միջոց: Այս առումով նշվում է, որ անհրաժեշտություն կա քայլեր ձեռնարկել կամավորության գաղափարի ճանաչելիության բարձրացման, ընկալումների ու պատկերացումների փոփոխության ուղղությամբ: «Անկախության սերունդ» հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ երիտասարդության փոքր հատվածն է ընդգրկված հասարակական/կամավորական գործունեության մեջ, իսկ ընդգրկվածներից շատերի համար կամավորության պատճառները պայմանավորված են ժամանցի, սոցիալական շփման և աշխատանք գտնելու, այլ ոչ թե մյուսներին օգնելու նկատառումներով: Կամավորության զարգացման մասին են խոսում նաև երևանյան ֆոկլուս-խմբային քննարկմանը մասնակից ուսանողները: Միևնույն ժամանակ, կամավորության գաղափարը ներկայումս ավելի լայն տարածում ունի, քան տարիներ առաջ, նաև շնորհիվ երիտասարդների մասնակցությանն ուղղված բազմաթիվ ծրագրերի: Փորձագետներից մեկն առաջարկում է կամավորության գաղափարը ներառել կրթական համակարգում, ինչպես արվում է առանձին մասնավոր դպրոցներում: Ըստ փորձագետների՝ կամավորությունն օգտակար է թե՛ աշխատաշուկայում մրցունակ լինելու համար, քանի որ բացի տեխնիկական գիտելիքներից՝ այն նաև անձնային հմտությունների զարգացում է ապահովում և թե՛ մասնակցության, համայնքի իմացության առումով. «կյանքի դպրոց է, բայց լավ իմաստով, էլի»: Կամավորությունն օգնում է նաև մասնագիտության ընտրության հարցում:

### 3) Երիտասարդների ձայնի կարևորում և գնահատում

Մասնակցության մոտիվացիայի համար, ըստ երիտասարդների, խոչընդոտ է հանդիսանում նաև իրենց նկատմամբ համապատասխան ուշադրության բացակայությունը: Մասնավորապես, ՖԽ քննարկմանը մասնակից երիտասարդները նշել են, որ երբեմն պետությունը ձևական մասնակցություն է ապահովում՝ օգտագործելով երիտասարդներին քաղաքական նպատակների համար: Չետաքրքրական է, որ գրեթե բոլոր մարզերում ՖԽ քննարկումների մասնակիցները մասնակցության ոլորտում կարիքների թվում առավել հաճախ նշել են երիտասարդների հանդեպ ուշադրության, կարևորման պակասի խնդիրը՝ մասամբ դրանով պայմանավորելով երիտասարդների պասիվ մասնակցությունը: Մարզաբնակ երիտասարդների համար այս խնդիրը առավել արդիական է: Երևանի ուսանողական խումբ ներկայացնող ՖԽ մասնակիցները շեշտում են, որ անգամ համալսարանական կառավարման խորհրդի կազմում երիտասարդներ չկան, այսինքն՝ այստեղ էլ երիտասարդների ձայնը պատշաճ կերպով հաշվի չի առնվում:

Երիտասարդների ձայնը լսելի լինելու խնդրի մասին բարձրաձայնում են նաև փորձագետները.

*«Ընկալումը երիտասարդության նկատմամբ՝ որպես մարդկային կապիտալ, շատ թերի է, դյուրահավատություն կա, կարծում եմ չի գնահատվում այն պոտենցիալը, որ երիտասարդությունն ունի, և դա մշակութային արդեն առանձնահատկություն է, որ հատուկ է մեր ազգին»* (փորձագետ):

Այսինքն՝ երիտասարդները թերի են գնահատվում որպես երկրի զարգացման մեջ ներդրում ունենալու ունակ

շերտ, և քաղաքական, սոցիալական, տնտեսական գործընթացներում հենց պետական կառույցների կողմից նրանց ներգրավվածության կարևորությունը ընդունելու և համապատասխան գործընթացներ խթանելու խնդիր կա:

*«Ինձ թվում է՝ մեր երիտասարդների՝ արտագաղթ բռնելու պատճառներից մեկը հենց նա է, որ այստեղ իրենց արժևորված, գնահատված չեն զգում: Այստեղ էնպիսի միջավայր է ստեղծված, այնպիսի համակարգ է ձևավորված, որը հնարավորություն չի տալիս, դռներն ավելի շատ փակ են»* (փորձագետ):

4) Երիտասարդության ինքնարտահայտում և ինքնակազմակերպում

Կարողությունների պակասով և երիտասարդների պոտենցիալի հանդեպ թերահավատությամբ է պայմանավորված երիտասարդների ինքնարտահայտման և ինքնակազմակերպման խնդիրը, որը նշվում է առանձին հետազոտություններում և փորձագետների կողմից: «Երիտասարդները չունեն միջավայրում շփվելու ունակություն, այսինքն՝ չեն կարողանում հարիր կերպով ներկայանալ տարբեր բնագավառներում և ինքնարտահայտվել» (Գյուղական համայնքների երիտասարդության իրավիճակի վերլուծության զեկույց): Ինքնադրսևորման պակասի մասին են նշում նաև երևանյան ՖԻՄ քննարկմանը մասնակից երիտասարդները, ըստ որոնց՝ ինքնադրսևորման հնարավորությունները պետք է հասանելի լինեն՝ սկսած դպրոցից:

Ինքնարտահայտման առումով մասնակցությանը խոչընդոտ է հանդիսանում կաշկանդվածությունը, որը պայմանավորված է հասարակական վերաբերմունքով, ինչպես նաև նախկին փորձի բացակայությամբ:

*«Մեր բոլոր խնդիրների հիմքում ընկած են ինքնագարգացման, ինքնաբացահայտման, ինքնամոտիվացիայի խնդիրները, որոնք բացակայում են բացարձակորեն: Դա կրթական համակարգի խնդիր է ու նաև մշակութային խնդիր է, որովհետև մենք ժառանգել ենք մոտեցումներ կրթական և մնացած համակարգերում, որոնք պարտադրում են հանդուրժողականություն, համեստություն արհեստական համեստություն»* (փորձագետ):

Այսինքն՝ կրթական համակարգում հարկավոր է խրախուսել երիտասարդների ազատ արտահայտումը, ընդունված կարծիքների հանդեպ հարցադրումները, քննադատական մոտեցումը, որոնք կնպաստեն երիտասարդների անկաշկանդ մասնակցությանը, մտքերի արտահայտմանն ու նոր նախաձեռնությունների ձեռնարկմանը: Ինքնարտահայտման ու ինքնակազմակերպման կարողությունների զարգացմանը ներկայումս նպաստում են ոչ ֆորմալ կրթական ծրագրերը և համայնքային երիտասարդական խմբերի գործունեությանն աջակցող միջազգային ու տեղական կազմակերպությունները:

5) Խոցելի խմբերի ներառում և մասնակցություն

Ներառականության խնդիրը ընդգծվում է հետազոտությանը մասնակցած փորձագետների մեծամասնության կողմից, ինչպես նաև նշված է ՅՈՒՆԻՍԵՖ-ի համար իրականացված երիտասարդական կարիքների վերլուծության մեջ՝ որպես երիտասարդական քաղաքականության ներկա ռազմավարության բացերից մեկը: Փորձագետները նշում են, որ հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել առանձին խմբերի ներառմանը, քանի որ հաճախ տարբեր ծրագրերին ու միջոցառումներին նույն ակտիվ երիտասարդներն են մասնակցում, և խնդիր կա առավել խոցելի կամ պասիվ երիտասարդներին ներգրավելու:

*«Եթե ռազմավարական ծրագիրը բոլոր տեսակի երիտասարդների համար է, ապա դրա մեջ պետք է ներառվեն հատկապես այն երիտասարդները, որոնք համար պետությունը լրացուցիչ պաշտպանություն և գործողություն պետք է իրականացնի»* (փորձագետ):

Պետական աջակցությունը պետք է ուղղված լինի հատկապես ներառումից դուրս մնացած երիտասարդներին: Խոցելի խմբերի թվում են նշվում հաշմանդամություն ունեցող երիտասարդները, ազատագրված վայրերից կամ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառող հիմնարկներից վերադարձած անձինք, ԼԳՏԲ խմբերը, առանց ծնողական խնամքի մնացած երիտասարդները, սիրիահայ փախստականները, հեռավոր գյուղերում բնակվող երիտասարդները, մարզաբնակ և հատկապես գյուղաբնակ կանայք, ծայրահեղ աղքատները և այլն: Այս խմբերի ներառմանը խանգարում են կարծրատիպային պատկերացումները, առանձին թիրախավորված միջոցառումների պակասը, ինտեգրման խնդիրները:

*«Շատ կուզենայի նաև տեսնել խոցելի խմբերի երիտասարդության, և իրենց կարիքներն էլ պետք է առանձին վերլուծել, որովհետև այսօր մենք չենք աշխատում էն երիտասարդների հետ, ում հետ ամենաշատը պետք է աշխատենք՝ օրենքի հետ խնդիր ունեցող երիտասարդների մասին է խոսքը, մանկատներում գտնվող երիտասարդների, մի խոսքով՝ շատ տարբեր երիտասարդների խմբեր կան, որոնք տարբեր պատճառներով խոցելի վիճակում են գտնվում, և ցանկալի է իրենց ևս ուշադրություն դարձնել հատուկ»* (փորձագետ):



Ազգային փոքրամասնությունները ներկայացնող երիտասարդների մասնակցությամբ ֆոկլուս-խմբային քննարկման ընթացքում կարևորվել է ազգային փոքրամասնությունների երիտասարդների ներառումը պետության կողմից կազմակերպվող տարբեր երիտասարդական միջոցառումներում:

6) ՔՀԿ-ների զարգացում

Երիտասարդական քաղաքականության ռազմավարության մեջ հատուկ ուշադրություն է հատկացված մարզային հասարակության կազմակերպությունների զարգացմանը: Երիտասարդական ոլորտում ներգրավված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացումը կարևորվում է նաև ուսումնասիրված հետազոտություններում: Մասնավորապես, գյուղական երիտասարդության կողմից շեշտվում են գյուղական համայնքներում հասարակական կազմակերպությունների պակասը և քաղաքային համայնքներում տեղակայված երիտասարդական կազմակերպությունների սահմանափակ գործունեությունը գյուղական երիտասարդության խնդիրների լուծման և նրանց ներգրավման ուղղությամբ: Երիտասարդական կազմակերպությունների քարտեզագրման ուսումնասիրությունը ևս վկայում է, որ սակավաթիվ գյուղական համայնքներում են գործում հասարակական կազմակերպություններ: Սյուս կողմից, գյուղական համայնքներում վերջին տարիներին ընդլայնվեցին երիտասարդական և համայնքային ակտիվ խմբերը, որոնցից շատերը, սակայն, հանդիսանում են միջազգային կազմակերպությունների ծրագրերի, ոչ թե երիտասարդության ինքնակազմակերպման և քաղաքացիական մասնակցության դրսևորման արդյունք: Այնուամենայնիվ, փորձագետների վկայությամբ՝ այս խմբերի շարքում կան կայացած ոչ ֆորմալ խմբեր, որոնք ինքնուրույն ջանքերով շարունակել են իրենց գործունեությունը՝ երբեմն գրանցվելով որպես հասարակական կազմակերպություն: Մարզային փորձագետներից մեկն առաջարկում է պետական ֆինանսավորման հնարավորություններ տրամադրել նաև ֆորմալ գրանցում չունեցող երիտասարդական նախաձեռնող խմբերին:

Միաժամանակ, փորձագետներից մեկն ընդգծում է, որ կարիք չկա նոր կազմակերպությունների ստեղծումը խթանելու. «Նոր կազմակերպություններ զարգացնելը տրամաբանական է միայն այն դեպքում, երբ արդեն ունենք ոչ ֆորմալ խմբեր, ակտիվ խմբեր, որոնք երկարաժամկետ աշխատում են, թիմ են, իրենց արդեն ֆորմալ ստատուս տալ, որ ավելի լավ կարողանան ծրագրերը տանել, դրամաշնորհների դիմել»: Առավել անհրաժեշտ է աջակցել առկա կազմակերպությունների և խմբերի կարողությունների զարգացմանը:

Բացի հասարակական կազմակերպություններից՝ կարևորվում են նաև երիտասարդությանը միավորող ավելի լայն հարթակները: Թե՛ ուսումնասիրություններում, թե՛ փորձագիտական հարցազրույցներում ընդգծվում է ազգային, մարզային ու տեղական մակարդակով մասնակցության հարթակների պակասը. ազգային երիտասարդական խորհուրդները չեն գործում, մարզպետարանին կից երիտասարդական խորհուրդները սահմանափակ ներգրավում ունեն և պասիվ են, իսկ ուսանողական խորհուրդները քաղաքականացված են, այսինքն՝ երիտասարդներին համախմբող և նրանց ձայնը որոշում ընդունողներին հասցնող հարթակները չկան կամ բավականաչափ արդյունավետ չեն:

Մասնակցության ոլորտի ներկայացված խնդիրներից կարելի է եզրակացնել, որ այս ոլորտում դեռևս անելիքները շատ են, և հետագա ռազմավարության մեջ բացի իրազեկման, համայնքային մակարդակում մասնակցության բարելավմանն ու գեղերային հավասարությանն ուղղված միջոցառումներից (որոնք առկա են ընթացիկ ռազմավարության մեջ)՝ հատուկ ուշադրություն դարձնել խոցելի խմբերի ներառմանը, երիտասարդների ինքնարտահայտման ու ինքնակազմակերպման խթանմանը, կամավորության ինստիտուտի զարգացմանը, ինչպես նաև գործող հարթակների աշխատանքի արդյունավետության ու ներառականության բարելավմանը:

**2. Կրթություն և զբաղվածություն, սոցիալ-տնտեսական խնդիրներ**

Ռազմավարության մեջ ընդգրկված հաջորդ ուղղությունը երիտասարդների զբաղվածությունն ու սոցիալ-տնտեսական խնդիրներն են: Միևնույն ժամանակ, թե՛ հարցազրույցների ընթացքում, թե՛ վերլուծությունների մեջ ընդգծվում է, որ զբաղվածության խնդիրները սերտորեն կապված են մասնագիտական կրթության հետ, հետևապես այս բաժնում նպատակահարմար ենք գտել ներառել նաև կրթության ոլորտի խնդիրներն ու կարիքները: Հարկ է նշել, որ կրթության ու զբաղվածության հիմնախնդիրները առավել մեծ գերակայություն են համարվել ֆոկլուս-խմբային քննարկումների մասնակիցների կողմից:

1) Կրթության որակ և մատչելիություն

Կրթության հետ կապված առավել հաճախ նշված խնդիրներից են կրթական համակարգի կոռուպցիան և կրթության ցածր որակը, մասնագիտական կրթության և աշխատաշուկայի միջև կապի խնդիրը: Կրթական հա-

մակարգի կոռուպցիայի խնդիրը հաճախ է մատնանշվել մարզային և երևանյան ՖԽ մասնակիցների, ինչպես նաև առանձին փորձագետների կողմից: Կրթության որակի հետ կապված՝ մասնավորապես նշվում է վերապատրաստված որակյալ մասնագետների, արդիական գրականության, կիրառական հմտությունների ներառման պակասի մասին:

*«Կրթությունը ավելի շատ տեսական է: Մեր երիտասարդը ավելի շատ տեսական կրթություն է ստանում, որը պրակտիկայից շատ հեռու է, և փայլուն գիտելիքներով երիտասարդը գործատուի մոտ է մտնում ու թվում է, որ ոչինչ չգիտի»* (փորձագետ):

Նշվում է նաև կրթության մատչելիության խնդիրը՝ պայմանավորված բարձր վարձավճարներով և ուսանողների համար հասանելի կրթաթոշակների պակասով, իսկ մարզային երիտասարդության դեպքում՝ հեռավորությանը և տեղական բուհերում մասնագիտությունների սահմանափակ ցանկով:

*«Գյուղում կան երեխաներ, ովքեր դպրոցի ամենալավ սովորողներն են, բայց ֆինանսի [պակասի] պատճառով կրթությունը չեն շարունակելու»* (իգ. սեռ, գյուղ Արմաշ):

Բազմաթիվ հետազոտություններում ընդգծվում են միջին մասնագիտական կրթական համակարգի բացը, մասնագիտական կողմնորոշման համակարգի և աշխատաշուկայի պահանջարկի մասին տեղեկատվության բացակայությունը, որոնք բերում են աշխատաշուկայից կրթական համակարգի կտրվածությանը:

*«Մեր երիտասարդները այսօր հստակ կողմնորոշված չեն ո՞ր մասնագիտությունն ընտրեն, ինչու՞ ընտրեն այդ մասնագիտությունը: Առաջին գերխնդիրներից մեկը դա մասնագիտական կողմնորոշման համակարգի կայացումն է, նաև այդ մասնագիտությունների նկարագրերի բացակայությունն է»* (փորձագետ):

Երևանյան ՖԽ քննարկման մասնակիցները շեշտադրել են նաև գիտական գործունեության արժևորման պակասը՝ որպես երիտասարդության համար արդիական խնդիր, որից բխում է կրթության որակի ու հեղինակության ցածր լինելը:

## 2) Կրթության և աշխատաշուկայի կապը

Թեև այս խնդիրը ուղղակիորեն կապված է նախորդ կետում բերված խնդիրների հետ, այն շատ է շեշտադրվում թե՛ ուսումնասիրություններում, թե՛ փորձագետների կողմից, այդ պատճառով ավելի մանրամասն ներկայացնենք կրթության ու աշխատաշուկայի միջև կապի հետ կապված այն խնդիրները, որոնք նշվել են հետազոտության ընթացքում:

Ինչպես նշվեց, կրթական համակարգի առաջարկի անհամապատասխանություն կա աշխատանքային շուկայի պահանջարկի հետ, որը, ըստ փորձագետների, պայմանավորված է երիտասարդների կողմից մասնագիտությունների ոչ ճիշտ ընտրությամբ, միջին մասնագիտական կրթության պակասով և կրթական ծրագրերի անհամապատասխանությամբ շուկայի պահանջներին: Երիտասարդների շրջանում առկա է բարձրագույն կրթություն ստանալու ձգտում՝ պայմանավորված նաև հասարակական ճնշմամբ, ինչպես նաև «նորած» լինելու նկատառումներով:

*«Մասնագիտությունը ընտրում են ըստ հայտնիության աստիճանի, այլ ոչ ըստ անհրաժեշտության»* (փորձագետ): *«Միջին մասնագիտական կրթության ոլորտում առկա մասնագիտությունների նկատմամբ մոտիվացիայի պակաս կա: [...] երիտասարդները պարզապես չեն ուզում մտնել այս դաշտ, բայց էստեղ ռեալ պահանջարկ կա, և բավականին լավ աշխատավարձեր»* (փորձագետ):

Մյուս կողմից, կրթական համակարգն էլ համապատասխան առաջարկ չի ապահովում, քանի որ միջին մասնագիտական կրթության և կիրառական մասնագիտություններ տվող ուսումնական հաստատությունները քիչ են: Որպես լուծում, բացի կրթական համակարգի բարեփոխումներից և մասնագիտական կողմնորոշման համակարգի ներդրումից, առաջարկվում է արհեստագործության և այլ կիրառական մասնագիտությունների բնագավառում ոչ ֆորմալ կրթության հնարավորությունները զարգացնել:

*«Ոչ թե աշխատատեղեր պետք է բացել, այլ մասնագետներ պատրաստել, մասնագիտական ուսուցումներ, բայց այնպիսի մասնագիտություններ, որոնց պահանջարկը կա շուկայում»* (փորձագետ):

Կրթական ծրագրերը աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցնելու համար պետք է խթանել բուհերի և կրթական կենտրոնների համագործակցությունը գործատուների հետ: Անհրաժեշտ է նաև ներառել կիրառական հմտությունների զարգացումը թե՛ մասնագիտական, թե՛ դպրոցական կրթության բնագավառում:

*«Կրթությունը չի տալիս ինքնուրույնության, ստեղծագործականության հիմք՝ հետազայում ձեռներեցության զարգացման համար» (փորձագետ):*

Չետազոտության մասնակից երիտասարդների կողմից կարևորվում է բուհերում արդիական պահանջներին համապատասխան ուսումնական պրակտիկայի կազմակերպումը:

### 3) Զբաղվածություն

Կարելի է ասել, որ երիտասարդների զբաղվածության խնդիրը նախ և առաջ պայմանավորված է աշխատաշուկայի կարիքներին կրթական համակարգի անհամապատասխանությամբ: Այնուամենայնիվ, անդրադառնանք զբաղվածության ոլորտում առկա այլ կարիքների ևս:

Տեղեկատվական կարիքների շարքում նշվում է թափուր աշխատատեղերի մասին համալիր պետական տեղեկատվական բազայի բացակայության մասին: Նման բազան հնարավորություն կտար նաև ճիշտ կողմնորոշել երիտասարդներին մասնագիտության ու զբաղմունքի ընտրության հարցում: Այսպես՝ փորձագետներից մեկն առաջարկում է.

*«Պետական մոտեցում չի, նախարարության կամ մարզպետարանի կողմից պահանջ իջեցվի բոլոր կառույցներին, որ ազատ աշխատատեղ չենելու դեպքում բաց կայքերում դրվի հայտարարություն դրա մասին» (փորձագետ):*

Երիտասարդների զբաղվածության համար խոչընդոտ է հանդիսանում աշխատանքային փորձի պահանջը գրեթե բոլոր գործատուների կողմից, ընդ որում՝ կամավորական աշխատանքը չի ընդունվում որպես աշխատանքային փորձ, քանի որ չկա համապատասխան օրենսդրական կարգավորում: Գյուղական վայրերում զբաղվածության խնդիրը հատկապես արդիական է, քանի որ բացի գյուղատնտեսությունից, երիտասարդները քիչ հնարավորություն ունեն այլ ոլորտներում ընդգրկվելու, մասնագիտական կրթական հաստատություններն էլ նրանց համար համեմատաբար ավելի անմատչելի են:

Ֆև քննարկումների ընթացքում մատնանշած խնդիրներից են նաև աշխատաշուկայում գենդերային խտրականության առկայությունը, ծանոթի ու բարեկամի սկզբունքով աշխատանքի ընդունելու մոտեցումը, մրցակցության խոչընդոտները՝ պայմանավորված մենաշնորհների առկայությամբ, ինչպես նաև գործատուների անվստահությունը երիտասարդ աշխատուժի հանդեպ: Նշվում է նաև աշխատանքային փորձ ձեռք բերելու հարցում աջակցության անհրաժեշտության մասին.

*«Օրինակ՝ այն օրը քննարկում էինք լսարանում, որ Սովետական միության ժամանակ ավարտելուց հետո բոլորին ուղարկում էին աշխատանքների... մի քիչ դա միևնույնը ունի տնից հեռավորության առումով, բայց ավելի շատ պլյուսներ ունի, որովհետև աշխատանքով են ապահովում քեզ... Teach for Armenia կազմակերպության մասին գիտեն, որ աշխատանք է առաջարկում մարզերում... խրախուսելի կազմակերպություն է, բայց կարելի է ավելի մասշտաբային դարձնել այդ նախաձեռնությունը» (Երևան, արական սեռ, ուսանողների խումբ):*

Երիտասարդների զբաղվածության համար անհրաժեշտ գիտելիքի ու կարողությունների զարգացման թեմաների շարքում նշվում է հետևյալը.

- աշխատանք փնտրելու, ինքնակենսագրական կազմելու, աշխատանքային հարցազրույցի հմտություններ,
- հարկային դաշտի, վարկերի մասին տեղեկացվածություն,
- ձեռնարկատիրական կարողությունների զարգացում,
- աշխատանքային իրավունքների մասին տեղեկացվածություն:

Գործնական աջակցության ուղղությունների թվում նշվում են սկսնակ ձեռնարկությունների և հատկապես փոքր բիզնեսների աջակցությունը, վարկերի մատչելի տոկոսադրույքը, նպաստավոր հարկային քաղաքականությունը երիտասարդ գործարարների համար: Ներկայումս տեղական ու միջազգային կազմակերպությունների կողմից սոցիալական ձեռներեցության զարգացման ծրագրեր են իրականացվում, և այս ոլորտը ևս, ըստ փորձագետների, պիտի արտացոլվի երիտասարդական ռազմավարության մեջ:

Փորձագետներից մեկն առաջարկում է երիտասարդ կանանց համար առանձին հասցեական ծրագրեր իրականացնել, քանի որ երիտասարդ կանայք զգալի թիվ են կազմում տնտեսապես ոչ ակտիվ բնակչության կազմում, թեև նրանք տղամարդկանց հետ հավասարապես բարձրագույն կրթություն են ստանում: Մեկ այլ փորձագետի

պնդմամբ՝ բարձրագույն կրթություն ստացած կանանց տնտեսական ակտիվության պակասը «*ռեսուրսների վատնում է այն երկրում, որտեղ աճի կարիք կա*»:

#### 4) Սոցիալ-տնտեսական խնդիրներ

Ֆոկուս-խմբային (այսուհետ՝ ՖԽ) քննարկումների մասնակից երիտասարդները իրենց կարիքների թվում հաճախ են նշում սոցիալ-տնտեսական կարիքները: Թեև այս խնդիրը սերտորեն կապված է զբաղվածության հետ, այնուամենայնիվ աշխատանք ունենալու դեպքում էլ աշխատավարձերի ցածր մակարդակի պատճառով սոցիալ-տնտեսական խնդիրները շարունակում են արդիական մնալ:

«*Այսօր հայ երիտասարդը կարիք ունի հոգալու իր միմիմուն ծախսերը իր իսկ աշխատանքով, կարողանա հոգալ իր միմիմուն ծախսերը առանց ծնողների միջամտության*» (Իգ. սեռ, գյուղ Արմաշ):

Նշվում է պետության կողմից սոցիալական անբավարար աջակցության և սոցիալական աջակցության կոռումպացված համակարգի մասին: Երիտասարդները արժանագրել են նաև պետական աջակցության ծրագրերի մասին իրազեկման կարիքի, ապրանքների, սննդի ու կյանքի ցածր որակի խնդիրների մասին: Աղքատության բարձր մակարդակը Հայաստանում, մենաշնորհային տնտեսության համատեքստում փոքր և միջին բիզնեսի զարգացման ոչ նպաստավոր պայմանները, սոցիալական անարդարությունը, սոցիալական անհավասարության բարձր գործակիցը այն գործոններից են, որոնց անդրադառնում են ոլորտային հետազոտությունները՝ որպես երիտասարդության կյանքում հիմնարար նշանակություն ունեցող խնդիրներ:

Այսպիսով, երիտասարդների զբաղվածության և սոցիալ-տնտեսական վիճակի հետ կապված կարիքները արդիական են մնացել, սակայն դրանք հասցեագրելու համար նոր ռազմավարությունում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև կրթության և մասնագիտական կողմնորոշման բաղադրիչներին:

### 3. Առողջություն և առողջ ապրելակերպ

Երիտասարդության վերաբերյալ հետազոտությունները և տվյալ հետազոտության մասնակիցները անդրադառնում են առողջության ու առողջ ապրելակերպի հետ կապված կարիքներին՝ այս ոլորտում մատնանշելով մի շարք խնդիրներ:

#### 1) Առողջ ապրելակերպի մշակույթ

Ըստ հետազոտությունների՝ երիտասարդության շրջանում առկա է տեղեկացվածության ու մոտիվացիայի պակաս՝ առողջությանը հետևելու, ժամանակին բժշկական հաստատություններ այցելելու, բուժզննում անցնելու համար: Այս առումով, բացի տեղեկատվության ու գիտելիքի բարելավումից, կարևոր է նաև ընդհանուր վերաբերմունքի փոփոխությունն ու համապատասխան մշակույթի ներարկումը, քանի որ հաճախ տեղեկատվության չստացման ու բուժհաստատություններ այցելելու խնդիրը կապված է կարծրատիպերի հետ, մասնավորապես վերարտադրողական առողջության բնագավառում:

Առողջ ապրելակերպի վերաբերյալ իրազեկման, համապատասխան մշակույթի ամրապնդման ուղղությամբ որպես անհրաժեշտություն է նշվում նաև զանգվածային մարզական միջոցառումների անցկացումը:

#### 2) Մարզական ենթակառուցվածքներ

Քննարկումների մասնակից երիտասարդները բազմիցս նշում են մարզվելու համար անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայության մասին, մասնավորապես մարզային համայնքներում ու հատկապես գյուղերում, որտեղ չկան սպորտդահլիճներ, մարզական կենտրոններ, մարզադաշտեր: Նշվում է նաև անվճար մարզասրահների, մարզասարքերով հագեցած բաց հանրային վայրերի պակասի մասին: Առանձին շեշտվում է հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար համապատասխան մարզական ծառայությունների, ենթակառուցվածքների պակասի մասին: ՖԽ քննարկումներից մեկում նշվել է, որ անգամ դպրոցներում ֆիզկուլտուրայի առարկան պատշաճ չի դասավանդվում:

#### 3) Առողջապահական համակարգ

Առանձին փորձագետներ և ՖԽ մասնակիցներ բարձրաձայնել են առողջապահական համակարգի բացերի մասին, որոնք անմիջականորեն կապված են երիտասարդների առողջ ապրելակերպի հետ: Մասնավորապես, նշվել է բժշկական ապահովագրության համակարգի բացակայության, բուժօգնության անմատչելիության, մարզերում որակյալ բուժաշխատողների պակասի, երեխաների ու երիտասարդների առողջության ստուգումների բացակայության մասին, որի հետևանքով ժամանակին միջամտություն չի կատարվում, և երիտասարդ սերնդի առողջությունը վտանգվում է:

Այսպիսով, ներկա Ռազմավարությունն ընդգրկում է առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված մի շարք միջոցառումներ՝ ներառյալ զանգվածային միջոցառումների կազմակերպում, իրազեկում, մրցույթների և քարոզարշավների կազմակերպում: Այնուամենայնիվ, բաց է մարզական ենթակառուցվածքների ապահովման մասը: Հաշվի առնելով, որ 2014թ. ՀՀ կառավարության կողմից ընդունվել է առողջ ապրելակերպի խթանման ռազմավարությունը, որտեղ իրազեկման ու հանրային քարոզարշավների միջոցառումները հիմնականում արտացոլված են, կարելի է երիտասարդական քաղաքականության ռազմավարության մեջ առողջ ապրելակերպի ոլորտի մասով հղում կատարել այդ ռազմավարությանը և հիմնական ուշադրությունը կենտրոնացնել մարզական ենթակառուցվածքների ստեղծման ու զարգացման վրա, որը, ի պաշտոնե, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության լիազորությունն է<sup>1</sup>: Նմանապես, թրաֆիքինգի և մարդկանց շահագործման ոլորտում միջոցառումները նախատեսված են 2016-2018 թվականների մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագրով, որտեղ նախարարությունն ունի իր դերակատարությունը երիտասարդների իրազեկման մասով, հետևապես, այս խնդիրների ուղղությամբ առանձին միջոցառումներ նախատեսելու փոխարեն ևս կարելի է հղում կատարել համապատասխան ծրագրին:

#### 4. Հոգևոր-մշակութային արժեքներ

Ռազմավարության միջոցառումների ցանկում, այս ոլորտում համեմատաբար քիչ միջոցառումներ են ընդգրկված, որոնք հիմնականում անդրադառնում են հոգևոր ու հայրենասիրական դաստիարակությանը, հոգևոր-մշակութային արժեքների պահպանմանը, միջմշակութային երկխոսությանը: Նոր՝ 2015-2025թթ. երիտասարդական քաղաքականության հայեցակարգում միջմշակութային երկխոսության ուղղությունն առանձնացված է հոգևոր-մշակութային արժեքների զարգացման ու ռազմահայրենասիրական դաստիարակության ոլորտից և ներառում է նաև միջազգային համագործակցությունը: Այս ոլորտներում առկա կարիքները քիչ են արտացոլված ուսումնասիրված հետազոտություններում. ըստ էության, մյուս կարիքների նկատմամբ դրանք երկրորդական տեղ են գրավում: Միաժամանակ, հոգևոր-մշակութային միջոցառումները կարևորվել են երիտասարդների ժամանցի համատեքստում, որը հատկապես գյուղական համայնքների երիտասարդների համար արդիական կարիք է: Այսպիսով, նկարագրենք այն կարիքները, որոնք պայմանականորեն ներառել ենք այս ոլորտում:

##### 1) Մշակութային հաստատություններ և միջոցառումներ

Մարզային քննարկումների ընթացքում հաճախ նշվել է համապատասխան կառույցների՝ մշակույթի տներ, արվեստի դպրոցների, երաժշտական դպրոցների պակասի կամ բացակայության մասին: Խորհրդային ժամանակվանից առկա մշակութային օջոխները հիմնականում անմխիթար վիճակում են գտնվում, իսկ նոր կենտրոններ գրեթե չկան: Այս խնդիրը հատկապես զգալի է գյուղական համայնքներում: Մարզում հարցված փորձագետներից մեկը նշում է, որ բազմաթիվ լքված շենքեր կան, որոնք կարելի է օգտագործել, ստեղծել արվեստի կենտրոններ, խրախուսել նկարիչներին: Առանձին մարզերում երիտասարդները նշում են կինոթատրոնի, թատրոնների, արվեստի դպրոցների, կենտրոնների, գրադարանների բացակայության մասին, որը, ըստ իրենց, կարևոր բաց է մշակութային կյանքին մասնակցելու և մշակութային արժեքների ներարկման առումով: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները շեշտադրում են ազգային-մշակութային սովորույթների վերաբերյալ իրազեկման միջոցառումների անհրաժեշտությունը:

##### 2) Ժամանցի կազմակերպում

Մշակութային կենտրոնների կարիքը փոխկապակցված է մշակութային միջոցառումների պակասի և ժամանցի կազմակերպման կարիքի հետ: Հետաքրքիր ու արդյունավետ ժամանցի կազմակերպումը հետազոտության մասնակից երիտասարդների կողմից առավել հաճախ նշված կարիքներից է, որը կրթության և զբաղվածության խնդիրներից հետո առավել գերակա խնդիր է համարվել ՖԻԽ քննարկումների մասնակիցների կողմից: Ժամանցի կազմակերպման անհրաժեշտության մասին են նշում նաև փորձագետները, որոնք հատկապես շեշտադրում են քննարկումների, ֆորումների կարիքը. դա կարող է լինել երիտասարդական ակումբի, համայնքային կենտրոնի կազմակերպման միջոցով: Ժամանցի ճիշտ կազմակերպումը երիտասարդների զբաղվածության ապահովման միջոց է, որը կարևոր նշանակություն ունի նաև արտագաղթի կանխման տեսանկյունից. «Միշտ չէ, որ երիտասարդը միայն աշխատանքի բացակայության պատճառով է գնում, պատճառներից է նաև, որ ոչ մի անելիք չկա: Սա պետք է լինի քաղաքականության մեջ շեշտված, ընդգծված մի կետ, հատկապես երևանից դուրս գտնվող երիտասարդների զբաղվածությանն ուղղված կոնկրետ քայլեր լինեն»: Ըստ փորձագետների, լայն իմաստով զբաղվածության ապահովումը կարող է նպաստել նաև հանցագործության ռիսկի կանխմանը:

1 <http://www.minsportyouth.am/nakhararoutyan-hamakargi-karouycner.html>

### 3) Արժեքային համակարգ

Հոգևոր-մշակութային ոլորտը, ըստ փորձագետների, շաղկապված է երիտասարդների ընդհանուր արժեքային համակարգի կայացման հետ. «Առաջին հերթին երիտասարդներից, որպես մարդ, քաղաքացի ձևավորելու խնդիրն է, որ էդ լինի, արդեն մնացածն էլ կլինի, այսինքն՝ մարդը երբ սկսում է իր մարդկային արժեքները գնահատել, հոգևոր արժեքները ինքնըստիներքյան սկսում են զարգանալ, որովհետև դրանք միասին են, իրարից անկախ չեն կարող լինել»: Երիտասարդների մոտ արձանագրվում է անկախության, ազատագրման պահանջմունքը, գաղափարների արտահայտման կարիքը, որը միաժամանակ կարող է հակասության մեջ մտնել ծնողների և հասարակության կողմից ներարկված արժեքների հետ: Քննարկումների ընթացքում երիտասարդները որպես արտահայտման խոչընդոտ են նշել ավանդական մտածելակերպը, կարծրատիպերը, ընտանեկան գերխնամքը: Նրանք խնդրահարույց են համարում երիտասարդների անձնային զարգացմանն ու ինքնուրույն մտածելակերպին միտված ծրագրերի և հնարավորությունների պակասը: Հետազոտություններում նշվում է, որ անգամ անկախության քսանհինգ տարիներից հետո էլ շատ երիտասարդներ շարունակում են իրենց խնդիրների լուծման համար ապավինել արտաքին ուժերին՝ պետությանը, այլ կազմակերպություններին, ընտանիքին, և բավականաչափ պատասխանատվություն չեն ստանձնում իրենց կյանքի ու համայնքի համար: Այս խնդիրները անմիջականորեն առնչվում են մասնակցության ոլորտում նշված ինքնակազմակերպման, ինքնարտահայտման կարիքների հետ և անդրադառնում երիտասարդների մասնակցության մակարդակի վրա:

Հոգևոր-մշակութային արժեքների ոլորտը կարևորվում է փորձագետների կողմից որպես մյուս ոլորտների համար անհրաժեշտ հիմք, որը չպետք է թերագնահատվի երիտասարդական ծրագրերի իրականացման ընթացքում:

*«Ինքնաճանաչողությունը նույնպես առաջնային է... Մասնագիտությունն ու փողը միջոց են հիմնական նպատակին հասնելու համար, նպատակը մեր սեփական երկրին տեր կանգնելն է, մեր հայրենիքը, մեր արժեքները, մեր մշակույթը առաջ տանելն է: Երբ այսպես ենք հարցը դնում, այդ մասնագետը չի թողնում իր երկիրը և գնում արտերկիր» (փորձագետ):*

Այսպիսով, մշակութային ոլորտի կարիքները կապված են մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության հնարավորությունների սահմանափակության, առհասարակ ժամանցի կազմակերպման հետ. այս կարիքները կարելի է ներառել նաև երիտասարդների մասնակցության ոլորտում: Ինչ վերաբերում է հոգևոր արժեքներին, փորձագետները կարևորում են հանդուրժողականության, քաղաքացիական պատասխանատվության ու ազգային ինքնաճանաչողության արժեքների զարգացումը, կարծրատիպերից ու պահպանողական մտածելակերպից ազատագրումը:

### 5. Ոչ ֆորմալ կրթություն

Ըստ փորձագետների՝ ոչ ֆորմալ կրթության ոլորտում վերջին տարիներին բավականին շատ աշխատանք է իրականացվել, թեև այս ոլորտում էլ դեռևս չլուծված հարցեր են մնացել: Մասնավորապես, երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրների վերաբերյալ զեկույցում առաջարկվում է ներդնել ոչ ֆորմալ կրթության արդյունքների ճանաչելիության համակարգ, որպեսզի գործատուների կողմից ոչ ֆորմալ կրթության միջոցով ստացած գիտելիքները և հմտությունները համարվեն նվազագույն պահանջներին համապատասխանող:

Հետազոտության մասնակից փորձագետները ևս նշում են ոչ ֆորմալ կրթության ճանաչելիության անհրաժեշտության մասին.

*«Խոսքը ոչ թե դեկլարատիվ մակարդակում ասելն է, որ, այո՛, մենք ճանաչում ենք ոչ ֆորմալ կրթությունը, այլ ռեալ մարդիկ հասկանան ոչ ֆորմալ կրթության արժեքը. դրա համար պիտի լինեն ոչ ֆորմալ կրթության որակյալ ծրագրեր, պիտի լինի որակյալ ինստիտուտ, և պիտի լինեն որակյալ կադրեր» (փորձագետ):*

Ընդգծվում է նաև ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական համակարգի փոխկապակցման կարիքը.

*«Կրթության ոլորտում ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության եզրերը մի քիչ ավելի մոտիկացվեր, այսինքն դպրոցում չլիներ միայն ֆորմալ կրթություն, մի քիչ բաց լինեին ոչ ֆորմալ կրթության նկատմամբ՝ սեմինարների, քննարկումների, հանդիպումների համար» (փորձագետ):*

Քննարկումների մասնակից երիտասարդները ևս կարևորում են ոչ ֆորմալ կրթությունը, և առաջարկում այն ներդնել՝ սկսած դպրոցից:

Ոչ ֆորմալ կրթությունը սերտորեն կապվում է մասնագիտական կրթության հետ և կարող է ներառվել ռազմավարությունում կրթության ու զբաղվածության ոլորտների ներքո:

## 6. Այլ ոլորտներ

Բացի թվարկված վեց ոլորտներից, որոնք պայմանականորեն խմբավորվեցին 2013-2017թթ. ռազմավարության գերակայությունների շարքում, հետազոտության ընթացքում բացահայտվել են մի շարք այլ կարիքներ: Դրանցից մի քանիսը արտացոլված են 2015-2025թթ. երիտասարդական քաղաքականության հայեցակարգի գերակայություններում, ինչպես օրինակ երիտասարդական ընտանիքի աջակցությունը, շարժունակության խրախուսումը, երիտասարդական աշխատողի գաղափարը: Ընթացիկ ռազմավարության և հայեցակարգի մեջ սակավ ընդգրկված է տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը: Առանձին կանդիդատները նաև գաղափարների իրագործման կենտրոնի ստեղծման և խոցելի խմբերի ներառման գաղափարներին, որոնք առնչվում են ռազմավարության մի քանի գերակայությունների հետ:

### 1) Երիտասարդների շարժունակություն

Չետազոտություններից կարելի է վերհանել շարժունակության հետ կապված հետևյալ խնդիրները՝ ավանդույթներ, որոնք կաշկանդում են երիտասարդներին և հատկապես երիտասարդ կանանց ճանապարհորդել, կրթության կամ աշխատելու նպատակով տեղափոխվել այլ բնակավայր, տեղեկացվածության պակաս առկա հնարավորությունների մասին, ինչպես նաև ֆինանսական միջոցների և լեզվի իմացության խնդիրներ: Աշխարհագրական դիրքի պատճառով շատ գյուղական համայնքներ գրկված են մշակութային, մարզական ենթակառուցվածքներից, իսկ հանրային տրանսպորտը բացակայում է կամ սահմանափակ է, ինչը երիտասարդներին թույլ չի տալիս դուրս գալ համայնքի սահմաններից, տեղեկացված լինել, մասնակցել մշակութային, սպորտային, այլ երիտասարդական միջոցառումների, ինչպես նաև ներդրում ունենալ համայնքներում հասարակական գործունեության մեջ: Համայնքային ճանապարհների ու տրանսպորտային խնդիրները հաճախ են նշվել մարզային քննարկումների մասնակից երիտասարդների կողմից՝ որպես առաջնային կարիք, քանի որ դրանց վատ վիճակը կամ բացակայությունը խոչընդոտում է իրենց մասնակցության, կրթության, զբաղվածության կարիքների բավարարմանը: Այսպես, ՖԻ քննարկումների ժամանակ նշվել է, որ առկա տրանսպորտային միջոցները անսարք են, աշխատում են ոչ հարմար գրաֆիկով և քիչ հաճախականությամբ:

*«Տրանսպորտի խնդիր կա... Օրինակ, խոչորացված համայնք Հարթաշենում են ապրում և կապի բացակայության պատճառով չեն կարողանում մասնակցել Գորիսի որևէ մշակութային միջոցառման կամ մամուլատիպ բաների. կարելի է ժամերը պայմանավորվել և հարմարեցնել համայնքից համայնք տեղափոխությունը»* (իգական սեռ, Գորիս):

Բացի այդ, ոչ բոլոր մարզերում կա ուսանողական տրանսպորտ, որը հնարավորություն կտար մատչելի գնով երթևեկել ուսումնական հաստատություն:

### 2) Աջակցություն երիտասարդ ընտանիքներին

Փորձագետների կողմից ընտանեկան կյանքին նախապատրաստելու անհրաժեշտությունը որպես երիտասարդների համար որպես կարևոր կարիք է նշվել առանձին հետազոտություններում և փորձագետների կողմից: Փորձագետները գտնում են, որ պատանի տարիքից սկսած երիտասարդները պետք է պատրաստվեն ընտանիք կազմելուն, ստանան սեռական դաստիարակություն, հասկանան ծնողի դերը և դաստիարակության սկզբունքները: Այսօր Հայաստանում ծնողավարության հազվագյուտ դասընթացներ են իրականացվում, մինչդեռ ծնողավարության հիմունքներին ծանոթանալը կարող է հինք դնել առողջ ընտանիքի ու առողջ սերնդի դաստիարակության համար: Այսպիսով, բացի բնակարանային խնդիրների հարցում երիտասարդ ընտանիքներին հատկացվող աջակցությունից, անհրաժեշտ է նախատեսել նաև ընտանեկան կյանքի վերաբերյալ համապատասխան կրթական միջոցառումներ վաղ տարիքում և խորհրդատվական ու տեղեկատվական աջակցությունը նորաստեղծ ընտանիքներին՝ երեխաների դաստիարակության հարցում:

### 3) Երիտասարդական աշխատող

Երիտասարդական աշխատողի ինստիտուտը ներդրման ընթացքում է, և այս ոլորտին են անդրադարձել այն փորձագետները, որոնք ընդգրկված են այս ինստիտուտի կայացման գործընթացներում: Նրանք առաջարկում են նոր ռազմավարության մեջ ընդգրկել համապատասխան գործունեության ուղղություններ, մասնավորապես երիտասարդական աշխատողի ճանաչելիության ապահովում:

*«Եթե այսօր ուզում ենք զարգացնենք երիտասարդական աշխատողի ինստիտուտ, մենք պիտի նաև որոշակի տրադիցիոն լուծումներ տանք, օրինակ՝ որոշակի մագիստրոսական ծրագրեր ունենանք, որտեղ հնարավոր լինի, ասենք, մանկավարժ կամ սոցաշխատող ես, վերապատրաստվես որպես երիտասարդական աշխատող»:*

*Պետք է նաև հասկանանք՝ որտեղ ենք մենք ներառում երիտասարդական աշխատողին: Ի դեպ, բավական հետաքրքիր աշխատանք արել ենք, տարբեր սցենարներ ենք առաջարկել, թե ինչպես կարելի է զարգացնել այդ ինստիտուտը Հայաստանում, ու միայնակ զարգացնելը այնքան էլ շատ ոչ իրատեսական է» (փորձագետ):*

4) Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործում

Տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառը մասնակցության, կրթության, զբաղվածության և ժամանցի ոլորտներին առնչվող մեկ այլ ոլորտ է, որը, որպես ուշադրության կարիք ունեցող զարգացման ուղղություն, նշվում է թե՛ հետազոտություններում, թե՛ փորձագետների կողմից: Սա զարգացող բանագավառ է և մեծ ներուժ ունի երիտասարդների մասնակցության հնարավորությունների ընձեռնան տեսանկյունից, քանի որ քիչ ռեսուրս է պահանջում և մեծ հասանելիություն ապահովում: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը նաև կրթության և զբաղվածության կարևոր ուղղություն կարող է լինել:

*«Այսօր ՏՏ ոլորտը Հայաստանում գերակա ճյուղ է համարվում, բավականին հեշտությամբ կարելի է մասնագիտանալ ու աշխատել, ու շատ արագ յուրաքանչյուրը իր ունակություններով ու մոտեցումներով կարող է հասնել արդյունքների ու դառնա բարձր վարձատրվող մասնագետ 2-3 տարվա ընթացքում: Այսինքն ռազմավարության մեջ կարելի է շեշտը դնել ՏՏ-ի զարգացման վրա մարզերում ու ինչ-որ ֆինանսական հոսքերով աջակցել ստարտ-ափերին, մարդկանց բացատրել՝ ինչ է ստարտ-ափը, նմանատիպ մասնագիտական դասընթացներ իրականացնել, այդ դասընթացների ընթացքում ծնված գաղափարների համար գտնել ֆինանսներ, և այդ երիտասարդներին, եթե ունեն լավ ստարտ-ափեր, տալ հնարավորություն այն իրագործելու» (փորձագետ):*

Հետազոտություններում նշվում է նաև երիտասարդների՝ տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու հմտությունների, համացանցից օգտվելու մշակույթի պակասի մասին, քանի որ երիտասարդները ավելի շատ օգտվում են սոցիալական ցանցերից, սակայն չեն կարողանում լիարժեք օգտագործել համացանցի ընձեռնած տեղեկատվական ու զարգացման հնարավորությունները և հաճախ չգիտեն համացանցից անվտանգ օգտվելու կանոնները:

Փորձագետներից մի քանիսը նշում են, որ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը կարող է մի առանձին ուղղություն լինել երիտասարդական ռազմավարության մեջ՝ որպես ներկա իրականության մեջ կարևորագույն մշակույթում ունեցող ոլորտ:

5) Գաղափարների իրագործման կենտրոն

Քննարկումների և փորձագիտական հարցազրույցների ընթացքում ընդգծվել է երիտասարդների նորարարական, գիտական կամ ստեղծագործական գաղափարների իրագործման աջակցության կարիքը: Այս գաղափարը վերաբերում է մի շարք ոլորտների՝ մասնակցություն, զբաղվածություն, ժամանց, այդ իսկ պատճառով հարկ գտանք առանձնացնել այն որպես յուրահատուկ մի կարիք, որը գտնվում է նշված ոլորտների հատման կետում:

Այսպես, քննարկման մասնակից երիտասարդները առաջարկում են «գաղափարների իրագործման ֆոնդ» ստեղծել, որը կօգնի հետաքրքիր գաղափարների իրագործմանը: Ինչպես նշեց փորձագետներից մեկը, աշխարհի շատ երկրներում պատանիներն ու երիտասարդները կարողանում են իրենց նորարարական գաղափարները կյանքի կոչել:

*«Ինչու՞ մենք չունենք գիտական կենտրոններ, որտեղ որ երեխան, եթե ունի հետաքրքիր մտքեր, կարողանա ռեալիզացնել, կարողանա փորձարարություններ անի: Մենք Հայաստանում այսօր կարիք ունենք երիտասարդական կապիտալը սպառելու: Անգործության է մատնված, չգնահատված մեծ պոտենցիալ կա: Շատ լուծումներ էլ երիտասարդության մեջ են» (փորձագետ):*

Համապատասխան ներդրումներ ներգրավելու դեպքում հնարավոր կլինի փորձարկել և կյանքի կոչել երիտասարդների գաղափարները: Չնայած որոշակի պետական և միջազգային ծրագրեր ուղղված են նմանատիպ նորարարական գաղափարների զենեացման և իրագործման ֆինանսավորմանը, սակայն նման կենտրոն Հայաստանում դեռևս չի գործում (100 գաղափար, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի Կոլբա Լաբ և այլն): Անգամ միջոցների բացակայության դեպքում, նմանատիպ կենտրոնները կծառայեն որպես երիտասարդների զբաղվածության հնարավորություն, քանի որ այդտեղ նրանք կկարողանան հաղորդակցվել, արդյունավետ ժամանակ անցկացնել, նոր հմտություններ սովորել և իրենց գաղափարները օգտագործել ձեռներեցության զարգացման կամ համայնքին աջակցելու նպատակով:



6) Խոցելի խմբերի ներառում և խտրականության բացառում

Թեև խոցելի խմբերի ներառումը դիտարկվեց որպես մասնակցության ապահովման կարևոր բաղադրիչ, հնարավոր է, որ ներառումն ու խտրականության բացառումը առանձին ուղղություն դառնան ռազմավարության մեջ, քանի որ դրանք վերաբերում են երիտասարդական ռազմավարության մեջ ընդգրկված բոլոր ոլորտներին և պետք է հաշվի առնվեն յուրաքանչյուր գերակայության գործողությունների իրականացման ընթացքում: Խտրականության հետ է կապված փորձագետների կողմից որպես խնդիր նշված հանդուրժողականության պակասը երիտասարդների շրջանում, որն ի թիվս այլ գործոնների, պայմանավորված է կրթական համակարգում համապատասխան գաղափարների հասցեագրման պակասով:

Հատուկ ուշադրություն է պահանջում նաև գենդերային հավասարության սկզբունքի ներառումը ռազմավարությունում, ներառյալ զբաղվածության, առողջապահության, կարողությունների զարգացման բնագավառում: Ավելին, ինչպես խորհուրդ են տալիս փորձագետները, երիտասարդ կանանց ու աղջիկների կարիքներն ու խնդիրները պետք է հաշվի առնվեն նաև մոնիթորինգի ու գնահատման գործընթացներում, այսինքն կիրառվի տվյալների՝ ըստ սեռի տարաբաժանման սկզբունքը:

Բացի թվարկված կարիքներից, հետազոտություններում և քննարկումների մասնակիցների կողմից մտահոգություններ են հնչել նաև շրջակա միջավայրի պահպանման ու պաշտպանության, անվտանգության ու սահմանային լարվածության, ներքին և արտաքին միգրացիայի խնդիրների վերաբերյալ:

**7. Առանցքային կառույցների քարտեզագրում**

Բոլոր մարզերում երիտասարդները մատնանշել են այն կառույցները, որոնք պատասխանատու են այս կամ այն խնդրի համար: Այդ կառույցներից առավել հաճախ նշվում են համայնքապետարանները, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, միջազգային կառույցները, մարզպետարանները, առանձին ոլորտներում՝ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, դպրոցները, բուհերը և այլ կրթական հաստատությունները՝ կրթության հետ կապված հիմնախնդիրների մասով, բիզնես կառույցները, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, զբաղվածության գործակալությունները՝ զբաղվածության մասով, մշակութային հաստատությունները՝ ժամանցի և մշակութային արժեքների մասով, հասարակական կազմակերպությունները՝ մասնակցության մասով, եկեղեցին և հայրորդաց տները՝ հոգևոր-մշակութային արժեքների մասով: Հասարակական կառույցներից նշվում է մասնավորապես Հայաստանի երիտասարդական հիմնադրամը, եկեղեցու երիտասարդաց միությունները, Վորլդ Վիժնը, Հայկական Կարիտասը, «Առաջընթաց» ԵՀԿ-ն՝ Աշտարակում, Սկաուտական շարժումը՝ Արմավիրում, Եվրասիա համագործակցության հիմնադրամը և Հույսի Կանուրջ ՀԿ-ն՝ Տավուշում, Իստիգեյթ և Օգնենթար կազմակերպությունները՝ Սյունիքում, Երեխաների աջակցության հիմնադրամը՝ Կոտայքում:

**1.5 Երիտասարդական ռազմավարության վերաբերյալ կարծիքներ և առաջարկներ**

Այս բաժնում կքննարկենք ռազմավարության մշակման, քննարկման և իրագործման հետ կապված այն կարծիքներն ու առաջարկները, որոնք ամփոփվել են հետազոտության ընթացքում ուսումնասիրված վերլուծությունների և փորձագիտական հարցազրույցների հիման վրա:

**1. Իրազեկում և ներառում**

Ռազմավարության մասին խոսելիս փորձագետները կարևորում են ռազմավարության վերաբերյալ իրազեկման աշխատանքները՝ առաջարկելով իրազեկման բաղադրիչը ներդնել հենց ռազմավարության մեջ՝ որպես ուղղություն կամ գործողություն: Ռազմավարության մեջ հանրայնացման և հաղորդակցության պլանի ներառումը կնպաստի իրազեկման աշխատանքների կազմակերպմանը:

Ըստ երիտասարդական կազմակերպությունների քարտեզագրման 2014թ. զեկույցի՝ հարցված 363 կազմակերպություններից միայն 21%-ը կամ 76 կազմակերպություն էր ծանոթ երիտասարդական քաղաքականության 2013-2017թթ. ռազմավարությանը: Երիտասարդական կազմակերպություններից զատ, կարևոր է հենց երիտասարդների իրազեկվածությունը ռազմավարության մասին, որը կարող է սկսվել բուն մշակման գործընթացում ընդգրկելուց:

*«Լիքը լավ բաներ է անում նախարարությունը, բայց երիտասարդությունը տեղյակ չի, որ իր համար էդքան լավ բաներ է անում» (փորձագետ):*

Ռազմավարության հանրայնացման համար առաջարկվում է օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաները, հեռուստատեսությունը, կազմակերպել հետաքրքիր միջոցառումներ, մրցույթներ: Հանրայնացումը ոչ միայն իրազեկում կապահովի, այլև կշահագրգռի երիտասարդներին մասնակից լինել ընթացող գործընթացներին՝ նպաստելով հենց ռազմավարության գերակայություն հանդիսացող մասնակցության իրագործման նպատակներին, ինչպես նաև կհանգեցնի այլ շահագրգիռ կազմակերպությունների ներգրավմանը:

Երիտասարդների և ոլորտում շահագրգիռ կազմակերպությունների մասնակցությունը ռազմավարության մշակման սկզբունքներից է: 2013-2017թթ. ռազմավարությունը մշակման ընթացքում բոլոր մարզերում հասարակական կազմակերպությունների և երիտասարդության հետ քննարկումներ են կազմակերպվել՝ մարզպետարանների աջակցությամբ: Այնուամենայնիվ, ռազմավարության մասնակցային լինելու մասին արտահայտված կարծիքները միանշանակ չեն: Երիտասարդական կազմակերպությունների քարտեզագրման շրջանակներում իրականացված հարցման ընթացքում բացահայտվել է, որ ռազմավարության տարբեր բնութագրիչների գնահատականների շարքում մասնակցային գործընթացի գնահատականը համեմատաբար ավելի ցածր է: Ըստ նույն հետազոտության շրջանակներում իրականացված խորին և փորձագիտական հարցազրույցների՝ մասնակցությունը այնքան էլ ներկայացուցչական չի եղել, այսինքն, քննարկումներին առավելապես մասնակցել են նախարարության ու մարզպետարանի հետ համագործակցող կազմակերպությունները, որն, ըստ էության, կարող է պայմանավորված լինել իրազեկման սահմանափակ միջոցներով: Մեկ այլ հետազոտության մեջ նշվում է, որ ըստ երիտասարդների, երիտասարդական քաղաքականության մշակմանը մասնակցող կազմակերպությունները որոշակի «էլիտա» են հանդիսանում, և այնքան էլ բաց չեն երիտասարդների համար («Կարիքների գնահատում և ռազմավարական ուղղությունների մշակում՝ երիտասարդության հարցերի ոլորտում ՅՈՒԵՍԵՖ-ի Հայաստանի գրասենյակի ներգրավվածության համար» զեկույց):

Փորձագետների կողմից կարևորվում է բազմազան խմբերի ու կազմակերպությունների խմբերի ներգրավումը քննարկումներում:

*«Նույն էլեմենտար ֆոկուս խմբերը կազմակերպեն ոչ միայն ակտիվ երիտասարդների հետ, ովքեր առանց նախարարության, առանց որևէ կառույցի արդեն ինչ-որ ձևով իրենց ճանապարհը գտել են, այլև այն երիտասարդների հետ, ովքեր ընդհանրապես ո՛չ նախարարության տեղը գիտեն, ոչ գիտեն որ ռազմավարություն կա, ոչ էլ ուզում են ընդհանրապես Հայաստանում մնալ, օրինակ»* (փորձագետ):

Այս քննարկումների կազմակերպմանը կարող են օգնել տեղական երիտասարդական կազմակերպությունները:

*«Մարզպետարանների միջոցով կազմակերպմանը ես մի քիչ դեմ եմ: Ավելի լավ է ավելի ոչ ֆորմալ լինի: Օրինակ, ես ծանոթեմ Գյումրիի, Վանաձորի և այլն, մի քանի քաղաքներում ՀԿ-ների, վստահ եմ, որ շատ ավելի լավ կկազմակերպեն, օրինակ, մեր նման ՔՀԿ կառույցները, ովքեր քիչ թե շատ ակտիվություն, պոտենցիալ ունեն, քան, օրինակ, ասենք, մարզպետարանի էդ բաժնի պատասխանատուն»* (փորձագետ):

Որպես մասնակցության միջոց առաջարկվում է օգտագործել առցանց հարթակները, որոնք ներկայումս ակտիվորեն օգտագործվում են երիտասարդների կողմից, հնարավորության դեպքում հատուկ ինտերակտիվ պլատֆորմ ունենալ: Կարևորվում է բոլոր մարզերից երիտասարդների ներգրավումը, երիտասարդների ու շահագրգիռ կողմերի մասնակցությամբ ֆորումների կազմակերպումը:

*«Սկիզբը լինի էդ ֆորումները, որ մի հատ շոշափեն, թե որոնք են իրականում երիտասարդների կարիքները: Իրենք կարող են, իհարկե, ուղղություններ տալ, որ մի քիչ ավելի կառուցվածքային լինի, ինչ-որ մի կառուցվածքի մեջ լինի քննարկումը, բայց, ամեն դեպքում, թող մի հատ խոսեն, դաշտը խոսի, թե ինչի կարիք ունի, հետո աշխատանքային խումբը ձևավորեն, որը կդնի այդ ամենը ռազմավարության նախագիծ կսարքի, դրանից հետո կուղարկվի արդեն ֆորմալ կարծիքի: Դա կլինի և շատ մասնակցային, և մեծ հնչեղություն կստանա այդ ամենը: Այսինքն, հենց սկզբից, երբ որ դու մի բանի մասնակիցն ես դառնում, դու շատ ավելի ուզում ես դրա իրականացման մասը լինես»* (փորձագետ):

Հարկ է նշել, որ առանձին կազմակերպությունների ներկայացուցիչներ պատրաստականություն հայտնեցին աջակցել ռազմավարության շուրջ երիտասարդների լայն խմբերի քննարկումների կազմակերպման գործում՝ թե՛ կազմակերպչական, թե՛ ֆինանսական առումով:

## 2. Մշակման գործընթաց

Երիտասարդների ներգրավումից զատ, կարևորվում է նաև ռազմավարության մշակման գործընթացում տարբեր կառույցների ներգրավման գործընթացը, որը հնարավորինս բաց ու թափանցիկ պետք է լինի: Հարցազրույցներից պարզվում է, որ աշխատանքային խմբի կազմի ընտրության սկզբունքները հստակ չեն եղել առանձին կառույցների համար: Հարցվողները գտնում են, որ աշխատանքային խումբը պետք է բաց լինի տարբեր մարզերի՝ երիտասարդական ոլորտում ակտիվ գործունեության վարող կազմակերպությունների, փորձագիտական կարողություն ունեցող մարդկանց համար:

*«Գիտեմ, որ ռազմավարությունը մշակվում է ներկայացուցչական խմբի, խորհրդի կողմից, եթե ներկայացուցչական լիներ, ավելի արդյունավետ և ճիշտ ռազմավարություն կմշակվեր, այսինքն բոլոր մարզերից ներկայացուցիչ լիներ, այդ ամեն ինչը պարզ գրված լիներ, հայտարարություն լիներ, որ այսպիսի բան է արվում, ընտրությունը ինչ կերպ է կայացվում» (փորձագետ):*

Բացի դրանից, ռազմավարության համատեղ մշակումը կօգնի ստացված փաստաթղթի հանդեպ պատասխանատվություն ձևավորել գործընթացի մասնակիցների մոտ:

*«Ես կարծում եմ, որ ռազմավարության ոչ էդքան փաստաթուղթն է կարևոր, ինչքան այդ փաստաթղթի ստեղծման պրոցեսը, ownership ասածը, այսինքն սեփականատիրոջ զգացումը պիտի կարողանա էս անգամ ստեղծել թե՛ 34 սեկտորի մոտ, թե՛ միջազգային սեկտորի, թե՛ այլ պետական մարմինների ու այդ ժամանակ ինքնըստիներյան բավական լավ փաստաթուղթ կստեղծվի» (փորձագետ):*

Միաժամանակ, ինչպես նշում է ՍԵՅՆ ներկայացուցիչը, աշխատանքային խումբը պետք է քննարկումը վարի ընդհանուր համաձայնեցված հարցերի շուրջ՝ բացառելով առանձին կազմակերպությունների կողմից, բացառապես իրենց մանդատին համապատասխան հարցերի ու կարիքների շեշտադրումը. «Շատ ժամանակ ներգրավված են լինում կառույցների ներկայացուցիչներ, որոնք հավասար իրավունքով այլ ներկայացուցիչների հետ այնպիսի հարցեր են առաջ քաշում, այնպիսի գործողություններ են առաջարկում (դրանք հիմնականում կարող են լինել միջազգային կառույցների ներկայացուցիչներ), որը այնքան էլ մեզ համար, մեր պետության համար առաջնահերթ չի, այսօրվա երիտասարդի համար առաջնահերթ չի որովհետև մենք կարող է ունենք շատ ավելի առաջնահերթ խնդիր, բայց քանի որ այդ կառույցի մանդատի մեջ այդ առաջ քաշած հարցն է ավելի կարևոր, նա այդ հարցն է առաջ քաշում»: Մյուս կողմից, միջազգային կազմակերպություններ ներկայացնող փորձագետները գտնում են, որ միջազգային դոնոր կառույցների կարծիքի ներառումը կարող է շահավետ լինել ռազմավարության իրականացման գործում:

*«Նույն դոնորը վաղը ֆանդրայզինգ կանի, որովհետև կիմանա, որ իրեն լսել են էս հարցը բարձրացնելիս, և ինքն էլ շահագրգիռ կլինի փող բերել, որ դա իրականացնի, էլի, այսինքն երկուստեք շատ նպատակահարմար է, որ խիստ մասնակցային լինի էս պրոցեսը» (փորձագետ):*

Դոնոր կառույցների ներկայացուցիչները համագործակցելու պատրաստակամություն են հայտնում, եթե նախարարության կողմից նման առաջարկ լինի, քանի որ հետաքրքրված են երիտասարդության ոլորտում աշխատել և ներդրում կատարել: Առհասարակ, հետազոտության մասնակիցները շեշտադրում են միջազգային հատվածի հետ համագործակցելու կարևորությունը, քանի որ բազմաթիվ մեծածավալ ծրագրեր են իրականացվում երիտասարդական ոլորտում, որոնց նախարարությունը պետք է շահագրգռված լինի հետևել, համապատասխան տեղեկատվություն հավաքել և համակարգել:

*«Նախարարության աշխատակիցները պետք է նայեն, թե Եվրամիությունը ոնց է աշխատում, Բաց հասարակության ինստիտուտը ոնց է աշխատում, էս, էն, հետները կոնտակտ լինի... Հայաստանում ամենամեծ դոնոր կազմակերպությունը էս պահի դրությամբ Եվրամիությունն է: Հարց՝ ե՞րբ է նախարարությունը Եվրամիության հետ հարաբերություններ հաստատելու որևէ քայլ արել» (փորձագետ):*

Փորձագետների կողմից նշվում է, որ մշակման գործընթացի մասնակցությունը չպետք է սահմանափակվի առաջարկների հղմամբ: Ըստ ռազմավարության մշակման աշխատանքային խմբի ներկայացուցիչների՝ իրենց մասնակցությունը ավելի շատ հիմնված է եղել արդեն իսկ առկա նախնական նախագծի քննարկման ու արձագանքների մեխանիզմի, այլ ոչ թե սկզբից ևեթ նախագծի համատեղ մշակման վրա, որն, ըստ նրանց, ավելի արդյունավետ կլիներ:

*«Եթե աշխատանքային խումբ գոյություն ունի, ապա այն պետք է ոչ միայն ստանա նախագիծ, դրա վերաբերյալ դիտողություններ անի և այլն, այլ ընդհանուր պրոցեսը դիզայն անի, թե ոնց պետք է ունենանք այդ ռազմավարությունը և այլն: Ինչ պրոցեսով պետք է մշակվի, ինչ պրոցեսով պետք է քննարկվի, ինչ պրոցեսով*

պետք է վերջնականացվի, էդ պրոցեսը ևս ցանկալի է դիզայն արվի համապատասխան մասնագետների ներգրավմամբ» (փորձագետ):

Առաջարկվում է նաև ենթախմբեր ստեղծել ռազմավարության մեջ արտացոլված առանձին ոլորտների շուրջ, որպեսզի յուրաքանչյուր ոլորտի ուղղությամբ համապատասխան փորձագետներ աշխատեն, և հետո նոր առանձին մասերը համատեղել միասնական տարբերակի մեջ:

Կարևորվում է նաև մյուս պետական մարմինների սերտ ներգրավվածությունը գործընթացում:

*«Երիտասարդության հարցերով զբաղվող այլ պետական մարմիններից ավելի շատ մասնակցություն լինել, ոչ թե ուղարկվել ու ասվել սա է մեր ռազմավարությունը, ով ինչ ունի ասելու, այլ մի հատ լրջորեն նստել նայել ով ինչ է անում երիտասարդության ոլորտում»* (փորձագետ):

Նման դեպքում հնարավոր կլինի ընդգրկել այլ նախարարությունների ոլորտներին առնչվող խնդիրները և ապահովել նրանց մասնակցությունը: Նախարարության ներկայացուցիչները նշում են, որ ֆորմալ առումով չեն կարող համակարգել կամ որևէ վերահսկողություն ունենալ մյուս նախարարությունների լիազորությունների ներքո ընկած ոլորտները, ինչպիսիք են օրինակ՝ զբաղվածությունը, կրթությունը, առողջապահությունը: Սակայն, ըստ փորձագետների, ՍԵՅՆ իրավասությունը չպիտի սահմանափակվի այն գործունեությամբ, որը ներառված չէ այլ նախարարությունների մանդատում:

*«Ես կուզենայի, որ ռազմավարություն չլինել միայն սպորտի և երիտասարդության նախարարությանը: Երեխայի պաշտպանության ռազմավարությունը մեկ փաստաթուղթ է, որ բոլոր նախարարություններում շրջանառվում է: Եթե կա երիտասարդության ռազմավարություն, բայց ընդգրկված չեն բոլոր շահագրգիռ կառույցները, և միջոցառումները բոլոր նախատեսված չեն, հատկապես խոցելի և ռիսկային խմբի երիտասարդների համար, ապա նոր ռազմավարությունը պետք է շտկել այդ թերությունը և լինի ավելի համալիր: Ռազմավարական ծրագիրը պետք է դուրս լինի գերատեսչական շահից, ծրագրերից, լինի համալիր, և բոլոր նախարարությունները, ինչու չէ՞ արդարադատության նախարարությունը նույնպես ունենա իր միջոցառումների շարքը»* (փորձագետ):

Փորձագետները առաջարկում են նաև, որ մյուս նախարարությունների ծրագրերը երիտասարդական կարիքների ներառման վերաբերյալ փորձաքննություն և մոնիթորինգ անցնեն: Մասնավորապես, շատ են կարևորվում կրթության, զբաղվածության ու առողջապահության ոլորտները, որոնք առանցքային դեր ունեն երիտասարդության կյանքում և ըստ այդմ չեն կարող անտեսվել երիտասարդական ռազմավարությունում:

### **3. Կիրառելիություն և տեղայնացում**

Հետազոտության մասնակիցները համաձայնում են, որ ներկա ռազմավարությունը արտացոլում է երիտասարդության հիմնական կարիքները, սակայն իրականացման առումով որոշակի խնդիրներ կան: Ինչպես արդեն նշվեց, ռազմավարության իրականացման գործում նախ կարևոր է միավորել և ուղղորդել տարբեր կազմակերպությունների և գերատեսչությունների ջանքերը: Կարևոր է նաև իրագրելնան, երիտասարդների ներգրավման, երիտասարդների կողմից ռազմավարության կարևորման գաղափարը: Առանձին փորձագետներ նշում են, որ ռազմավարության շրջանակներում թերևս առավել հաջողված և ճանաչում ձեռք բերած ծրագիրը «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» ծրագիրն է, մինչդեռ մյուս ծրագրերն համեմատաբար ավելի քիչ են հանրայնացված և շոշափելի արդյունքներ դեռևս չեն բերել:

Փորձագետները նաև կարևորում են ռազմավարության տեղայնացումը մարզերում, որը կօգնի ավելի կիրառելի դարձնել այն:

*«Ռազմավարությունը մշակված է շատ ընդհանուր, հանրապետության մասշտաբով, իհարկե՝ հիմնվելով որոշ կարիքների գնահատման վրա. ես դա չեմ բացառում, բայց խնդիրն այն է, որ բուն կիրարկման պրոցեսում, երևի ի դեմս նախորդի, որ տեսնենք արդեն, համայնքներում խնդիրներ են առաջանում: Այսինքն՝ տեղական մակարդակով այն կիրառելիության խնդիր ունի»* (փորձագետ):

Ֆևս քննարկումների մասնակիցները և մարզային փորձագետները ևս կարևորում են տեղերում երիտասարդների կարիքներին ուղղված ծրագրերի ու միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը:

*«Ռազմավարությունն ընդհանրացված է, սակայն իրականում այն պետք է իր մեջ ներառել այնպիսի մեթոդներ և գործիքներ, որ վերաբերել կոնկրետ տարածաշրջանի երիտասարդին և նրանց կարիքները ևս լուծել: Այսինքն՝ ծրագրերը և քաղաքականությունը չվերաբերի միայն քաղաքաբնակ երիտասարդությանը, այլև ներառի նաև գյուղական համայնքների երիտասարդներին»* (փորձագետ):

Ընդ որում, փաստացիորեն տեղական մակարդակում երիտասարդների խնդիրների լուծումը ներկա պահին հիմնականում կախված է տվյալ տարածքում գործող միջազգային ու տեղական կազմակերպությունների առկայությունից ու գործունեությունից:

Տեղական մակարդակում ռազմավարության իրագործմանը կարող է նպաստել տեղական երիտասարդական խորհուրդների գործունեությունը.

*«Պետք է ստեղծվի մի խումբ գոնե երիտասարդների, ովքեր քաղաքապետին կից, չասեմ լիազորություններ կունենան, բայց իրենց ձայնը խորհրդատվական կերպով կանցնի գոնե: ՏԻՄ մարմնի, տեղային կառավարման մեջ իրենք կարողանան ինտեգրված լինել»* (փորձագետ):

Թեև ըստ ռազմավարության՝ մարզպետարանին կից խորհուրդներ են ստեղծվել, հետազոտության մասնակիցները դրանք համարում են ձևական և չգործող, իսկ երիտասարդներից շատերը, ըստ երևույթին, տեղյակ չեն դրանց մասին: Մինչդեռ նմանատիպ կառույցները կարող էին դերակատարում ունենալ երիտասարդության վերաբերյալ մարզերում իրականացվող գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման ու ջանքերի համակարգման գործում:

#### **4. Չափելիություն և ճոհիթորինգ**

Կիրառելիության համար կարևոր մյուս գործոնը ռազմավարության չափելիությունն է, որի մասին նշվել է բազմաթիվ հետազոտություններում: Ըստ երիտասարդական կազմակերպությունների քարտեզագրման հետազոտության բացահայտումների՝ չափելիության բացակայությունը հանգեցնում է ռազմավարության իրատեսականության և կիրառելիության պակասին, և առանց հստակ ցուցանիշների, այն, ըստ էության, դառնում է ավելի շուտ հայեցակարգային փաստաթուղթ, այլ ոչ թե գործողությունների պլան:

ՍԵՅՆ ներկայացուցիչը նշում է, որ ռազմավարության միջոցառումների ցանկում նշված գրեթե բոլոր միջոցառումներն իրականացվել են: Ռազմավարության գնահատման համապատասխան բաժնում անդրադարձ կարվի նաև, թե ըստ գերակա ուղղությունների քանի ծրագիր է իրականացվել: Սակայն ցուցանիշների բացակայության պայմաններում իրականացման արդյունքների մասին դատողություններն անհնար են դառնում: Համապատասխանաբար, ռազմավարության մեջ ներդրված չէ մոնիթորինգի և գնահատման մեխանիզմ, ազդեցության գնահատման հնարավորություն: Դրամաշնորհային համակարգով իրականավող ծրագրերը մոնիթորինգ անցնում են, բայց, ըստ փորձագետների, չի իրականացվում դրանց արդյունքների գնահատում բացահայտելու համար, թե արդյոք ծրագիրը հասավ նախանշված արդյունքներին: Չկա ռազմավարության պարբերական գնահատման մեխանիզմ և պատասխանատու.

*«Եթե ուրիշ մարմին չկա, նախարարությունը կարող է անել, բայց մյուս կողմից նախարարությունը դրա ռեսուրսը չունի, բացի էդ, լավ կլիներ, որ էդտեղ ներգրավված լիներ ոչ միայն նախարարությունը, այլև ուրիշ մարմիններ, որովհետև իրենք առաջին պատասխանատու են, իրենք իրենց մոնիթորինգ անելը՝ լշահերի բախում] կա էդտեղ»* (փորձագետ):

Փորձագետները միանշանակ գտնում են, որ մոնիթորինգի համակարգը պետք է ներդրված ռազմավարության մշակման փուլից և եթ և նկարագրված լինի փաստաթղթում: Երիտասարդների կարիքների՝ Յունիսեֆի համար իրականացված վերլուծության մեջ նշվում է, որ մոնիթորինգի ու գնահատման «գործընթացների բացակայությունը նշանակում է, որ ռազմավարության իրականացման և երիտասարդների վրա դրա ազդեցության նկատմամբ քիչ վերահսկողություն և հաշվետվականություն կա: Ռազմավարությունը առաջնայնություններն իրականացնելու համար հենվում է երիտասարդական ՀԿ-ների վրա և առանց արդյունավետ համակարգման կառուցվածքի ու խիստ մշտադիտարկման՝ ռազմավարությունը գտնվում է պատահական լինելու վտանգի տակ»:

#### **5. Համագործակցություն և համակարգում**

Ռազմավարության իրականացման ջանքերի և առհասարակ երիտասարդական ծրագրերի համակարգման խնդիրը բազմիցս նշվել է գրեթե բոլոր ոլորտային հետազոտություններում և տվյալ հետազոտության փորձագետների կողմից: Վերջին տարիներին իրականացված հետազոտություններում և հարցազրույցների ընթացքում արձանագրվում է համագործակցության պակաս տարբեր հատվածների (միջազգային, պետական, հասարակական) միջև ու տարածքային տարբեր մակարդակներում: Այսպես, նշվում է, որ երիտասարդների մասնակցությանն ուղղված ծրագրերը համաձայնեցված չեն, երբեմն նույն տարածքում մի քանի ծրագիր է իրականացվում, իսկ մեկ այլ տարածքում՝ ոչ մի: Փորձագետներից մեկի խոսքով, «նմանատիպ շատ ծրագ-

րեր են տեղի ունենում առանց որևէ կոորդինացիայի՝ և՛ միջազգային դոնորների կողմից ֆինանսավորվող, և՛ պետական միջոցներով ֆինանսավորվող և այլն, կարծում են՝ կոորդինացիայի խնդիր կա և շատ կուզենայի մյուս ռազմավարության մեջ տեսնել ջանքերի որոշակի կոնսոլիդացիա, ու կարծում են, որ երիտասարդության հարցերով զբաղվող պետական մարմինն այն մարմինը պիտի լինի, որն այդ կոնսոլիդացիան իր ձեռքն է վերցնում»։ Մեկ այլ փորձագետ նշում է, որ եթե հնարավոր լիներ երիտասարդության ոլորտում աշխատող տեղական ու միջազգային բազմաթիվ ակտիվ հասարակական կազմակերպությունների աշխատանքի ազդեցությունն ուղղորդել ռազմավարության ուղղությամբ, ծրագրերի ու ծախսերի արդյունավետությունը մեծապես կավելանար։

Ոլորտում իրականացվող աշխատանքների ջանքերի համակարգումը կարելի է հենց ռազմավարության շուրջ համատեղ աշխատանքի միջոցով իրականացնել։ Ինչպես նշում է փորձագետներից մեկը.

*«Ամեն դեպքում, եթե ռազմավարություն ունենք, ամեն ինչը պետք է ինչ-որ ձև [համատասխան]արվի էդ ռազմավարության հետ: Որովհետև էդ դեպքում դուրս է գալիս, որ բոլորս մի ուղղությամբ ենք աշխատում... Իմ տեսանկյունից, լավագույն դեպքն է, որ իրար հետ համագործակցենք, նույնիսկ եթե քննադատելու ենք, եթե խորհուրդ ենք տալու փոխել ինչ-որ բան, միասին անենք, որովհետև բոլորս նույն ուղղությամբ ենք աշխատում» (փորձագետ):*

Շահագրգիռ կողմերի ներառումը ռազմավարության մշակման գործընթացում կարող է ապահովել նրանց ներդրումը ռազմավարության գործողությունների իրականացման գործում։ Հասարակական կազմակերպությունների ներգրավվածությունը ռազմավարության իրականացման գործում նախարարությունը ապահովում է դրամաշնորհային համակարգի միջոցով, որտեղ ֆինանսավորումը իրականացվում է ռազմավարության գերակայությունների կամ նպատակային ծրագրերի ուղղությամբ։ Այնուամենայնիվ, ըստ հետազոտությունների, բազմաթիվ երիտասարդական կազմակերպություններ նախընտրում են չդիմել ՍԵՀՆ դրամաշնորհներին և գերադասում են օգտվել միջազգային ֆինանսավորման հնարավորություններից։ Փորձագետներից մեկն առաջարկում է ՀԿ-ների հետ ավելի արդյունավետ համագործակցության նպատակով նախ ավելի լայն ընդգրկում ապահովել ռազմավարության մշակման գործընթացում և հետո՝ փոքր տոկոսով համաֆինանսավորման ծրագրեր առաջարկել, որով կապահովվի ավելի շատ ՀԿ-ների ներգրավումը և նրանց կողմից իրականացվող այլ ծրագրերի հետ սինխրոնացումը։

Ներկա ռազմավարության միջոցառումների ծրագրում ֆինանսավորման հստակ մեխանիզմներ չեն նախատեսված, իսկ իրականացումը, բացի ՍԵՀՆ և մասնավորապես ԵՄԻԿ ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող միջոցառումներից, նաև դրված է այլ կազմակերպությունների վրա՝ համաձայնությամբ, սակայն յուրաքանչյուր ենթաօլորտում իրականացվող գործունեության մասին տեղեկատվության հավաքագրման կամ գործունեության համակարգման և ուղղորդման որևէ մեխանիզմ նախատեսված չէ.

*«Ռազմավարության շատ կետերում, որտեղ որ, ասենք, խնդիրը կա, լուծումը տեսնում էին միջազգային կառույցների կամ ընդհանրապես հասարակական կազմակերպությունների միջոցով: Ինչը էլի հնարավոր է, ելնելով ռեսուրսների սակավությունից և այլն, բայց իրենք տեսնելով երրորդ կողմի միջոցով այդ խնդրի լուծումը, իրենք հանդես չեն գալիս որպես կոորդինացիոն մարմին: Էդ երրորդ կողմերը, տարբեր ձևերով ամենքը էդ խնդիրը լուծում են, շատ հաճախ նույն երիտասարդը օգտվում է տարբեր միջազգային տեղական կառույցներից, մի մեծ խումբ երիտասարդներ ոչ մի բանից չեն օգտվում: Իսկ եթե լիներ կոորդինացիոն մարմին, նախ շատ թիրախավորված կլինեին ծրագրերը, թե՛ պետական, թե՛ ոչ պետական, և երկրորդը՝ շատ ավելի շատ մարդ կշահեր էդ ծրագրերից, նույնիսկ ոչ պետական ֆոնդերով» (փորձագետ):*

Առհասարակ, առանձին փորձագետներ մտահոգություն են հայտնել, որ ՍԵՀՆ կողմից երիտասարդական ոլորտում իրականացվող գործընթացների համակարգման և տեղեկատվության հավաքագրման բացակայությունը բացասաբար է ազդում նախարարության՝ որպես երիտասարդական քաղաքականության ոլորտի պատասխանատու դերակատար ընկալման վրա, ինչպես նաև վտանգ է պարունակում ոլորտում առանց որևէ վերահսկման իրականացվող գործընթացների հնարավոր ազդեցության տեսանկյունից։

*«Ես երբևէ կողմ չեմ, որ պետությունը պետք է իմանա հստակ կամ վերահսկի՝ որտեղ ինչ են անում, բայց ամեն դեպքում, մեծ հաշվով, կազմակերպություններն աշխատում են ազգաբնակչության մի կարևոր հատվածի՝ երիտասարդության հետ: Ինչ ասես կարող են իրենց սովորացնել, մատուցել: Պետությունն անտարբեր է այդ առումով, չի հետաքրքրվում, չի տեսնում, թե ինչ են անում: Մենք երկու տարի է, փաստորեն, աշխատում ենք երիտասարդների հետ, բայց մենք նախարարությունից երբևէ չենք տեսել, որ մեկը ասի՝ ինչ եք անում, մի հատ եկեք, պատմեք, որևէ արձագանք պետությունից չենք տեսնում» (փորձագետ):*

Ինչպես նշվեց մշակման գործընթացի վերաբերյալ բաժնուն, փորձագետները համագործակցության և համակարգման խնդիր են նկատում նաև պետական տարբեր կառույցների միջև և գտնում են, որ միջգերատեսչական համագործակցությունը ռազմավարության մաս պետք է կազմի: Երիտասարդական կարիքների վերաբերյալ Յունիսեֆի համար մշակված գեկույցում նշվում է, որ «չնայած 2013-2017 թվականների երիտասարդական պետական քաղաքականությունը որդեգրել է թեմատիկ գերակայություններ և միջոցառումներ, ոչ մի տեսանելի միջնախարարական կամ միջոլորտային աշխատանք չի եղել ՍԵՅՆ-ի և երիտասարդության վրա ազդեցություն ունեցող այլ համապատասխան նախարարությունների, օրինակ՝ կրթության, առողջապահության կամ զբաղվածության համար պատասխանատու նախարարությունների միջև»: Նախարարությունների չհամակարգված աշխատանքը հանգեցնում է նրան, որ յուրաքանչյուր մարմին մշակում է գործունեության իր ուղղությունները և ռազմավարությունները՝ առանց դրանց սինխրոնացման, որի արդյունքում հնարավոր է տարբեր խնդիրների ուղղությամբ թիրախ խմբերի հետ տարվող աշխատանքների անհամաձայնեցվածություն (եթե ոչ հակասություն) և ֆինանսական միջոցների անարդյունավետ օգտագործում: Համագործակցությունը կնպաստի նաև ռազմավարության իրականացման համար ֆինանսավորման ապահովմանը:

*«Ռազմահայրենասիրականը, օրինակ, ոչ միայն երիտասարդության նախարարության գումարը պիտի ծախսվեր, այլև օրինակ պաշտպանության նախարարությանը: Կամ երիտասարդության մասնակցությունը մշակութային կյանքին, բնականաբար, մշակույթի նախարարության գումարները պիտի այդտեղ ներգրավված լիներ: Առողջ ապրելակերպը՝ առողջապահության և այլն» (փորձագետ):*

Այսինքն, ընդհանուր առմամբ, ոլորտում իրականացվող ներդրումների ու ջանքերի համախմբումը դիտարկվում է որպես ռազմավարության իրականացման նախապայման և ՍԵՅՆ գործառույթ:

*«Պետք է հասկանալ՝ պետությունը ինչ կարող է անել, նույն ՉԿ-ները ինչ կարող են անել, միջազգային կառույցները ինչ կարող են անել: Քարտեզագրման նման մի բան պետք է անել էսօր, մի տեսակ էդ ինֆորմացիային չի տիրապետում մեր մարմինը և հետևաբար կորոդիմացված չեն աշխատանքները» (փորձագետ):*

Փորձագետները նշում են, որ եթե ՍԵՅՆ-ը չունի որպես կորոդիմացիոն մարմին հանդես գալու ռեսուրսները, հնարավոր է դա անել տարբեր մարմինների ներկայացուցիչներից բաղկացած աշխատանքային խմբի, խորհրդի կամ որևէ այլ ձևաչափով կազմված մարմնի միջոցով: Երիտասարդական ոլորտում գործող խորհրդի կամ որևէ այլ հովանոցային կազմակերպության անհրաժեշտությունը արդեն իսկ նշվել է մասնակցության կարիքների վերաբերյալ բաժնուն: Թեև նախորդ տարիներին մի շարք կառույցներ են ստեղծվել այս գործառույթի իրականացման համար, դրանք կամ արդյունավետ չեն եղել, կամ ժամանակավոր բնույթ են ունեցել: Փորձագետները նշում են, որ առավել արդյունավետ կարող է լինել նախարարությանը կից խորհրդի ստեղծումը:

*«Ավելի լավ է դա լինի սպորտի նախարարին կից հասարակական խորհրդի լիազորությունը, և բոլորս փորձենք որպես քաղաքականություն մշակող մարմին, որ նաև պատասխանատու է այդ ուղեցուցիչների համար, այդտեղ տանել բոլոր խնդիրները և որոշումները այդտեղից ստանալ, որովհետև այլապես ուրիշ տեղ լինելը շատ տրամաբանական չէ» (փորձագետ):*

Խորհուրդը կարող է նաև ծառայել որպես հարթակ՝ ոլորտի շահագրգիռ կողմերին միավորելու և ռազմավարության իրականացման հետագա աշխատանքներին հետևելու ու դրանք գնահատելու առումով:

*«Հարթակ չկա էս ամեն ինչը քննարկելու շատ հաճախ: Ես շատ լավ ծանաչում եմ նախարարություն, վարչություն և այլն, մենք պարբերաբար աշխատանքային շփումներ ունենում ենք և թե՛ իրենց, թե՛ իմ նախածեռնությամբ, երկխոսություն կա, բայց հարթակ աշխատանքային պրոֆեսիոնալ նստելու, խոսելու, գնահատելու ռազմավարությունը, ուղղությունը շտկելու՝ չկա: Ռազմավարությունը հինգ տարվա մշակեցիք, ամեն տարի պիտի գնահատվի ինչ-որ ձև, ու ցանկալի է այդ հարթակը ստեղծել: Հասկանում եմ, որ բոլորս շատ-շատ զբաղված ենք, բայց դա որոշ առումով ավելի պատասխանատու կդարձնի սեկտորին, որը, իմ կարծիքով, շատ տխուր վիճակում է այսօր» (փորձագետ):*

Այսպիսով, ռազմավարության մշակման, իրականացման ու գնահատման ընթացքում մյուս գերատեսչությունների, տեղական ու միջազգային կազմակերպությունների համագործակցությունը, ոլորտում իրականացվող աշխատանքների ու ծրագրերի համակարգումը մեծապես կարևորվում է տարբեր շահագրգիռ կողմերի կողմից՝ որպես երիտասարդական ռազմավարության արդյունավետության նախապայման, հետևապես և՛ ՍԵՅՆ գործունեության արդյունավետության ցուցանիշ:

## **Մաս 2. ՀՀ երիտասարդական ղետական քաղաքականության 2013-2017թթ. ռազմավարության միջոցառումների ծրագրի մոնիթորինգի ծրագրերի գնահատման մեթոդաբանության փորձարկում**

### **2.1 Ռազմավարության մոնիթորինգի և գնահատման նպատակը և խնդիրները**

Երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017թթ ռազմավարության մոնիթորինգի և գնահատման նպատակներն են՝

- Բացահայտել, թե որքանով են ռազմավարության նախատեսված միջոցառումները և գործողությունները իրականացվել
- Հետազայում նոր ռազմավարության մոնիթորինգի և գնահատման պլանի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել:
- 5 տիպական ծրագրերի գնահատման միջոցով մշակել հետագա ռազմավարության գնահատման համար ցուցիչների համախումբ և դրանց չափման մեթոդաբանություն:
- Բացի այդ, պարզել, թե որքանով են ընտրված 5 տիպական ծրագրերը համապատասխանում երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017թթ ռազմավարության ընդհանուր նպատակներին:

#### **Ռազմավարության մոնիթորինգ**

Ռազմավարության մոնիթորինգի նպատակով ԵՈՒ ստեղծել է 2013-2016թթ օնլայն դրամաշնորհային համակարգով իրականացված ծրագրերի բազա և բազայի միաչափ վերլուծություն, որը ներկայացված են «Ռազմավարության մոնիթորինգ» բաժնում և Հավելված 1-ում:

Ինչպես նաև իրականացվել է ռազմավարության միջոցառումների ծրագրի վերլուծությունը ըստ տարիների, որը ևս ներկայացված է «Ռազմավարության մոնիթորինգ» բաժնում և առավել մանրամասն Հավելված 2-ում:

#### **Ռազմավարության գնահատում**

Ռազմավարության գնահատման նպատակով 5 ծրագրերի ընտրությունը իրականացվել է ըստ՝

- Գերակայության.յուրաքանչյուր գերակայությունից ուսումնասիրության մեկական միավոր
- Ըստ պատասխանատուի,
- Ըստ միավորի տեսակի:

Ընտրության հիմնական չափանիշներից է այն հանգամանքը, որ գործողություն/ծրագիրն ունենա ավարտուն արդյունք և պարբերաբար կրկնվող բնույթ:

Արդյունքում հինգ գերակայությունների համար ընտրվել են հետևյալ գործողություն/ծրագրերը՝

<b>Գերակայություն</b>	<b>Ծրագիր</b>
Գերակայություն 1. Քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության գործընթացների խթանում	«Հայաստանի Հանրապետության երիտասարդական մայրաքաղաք» ծրագիր
Գերակայություն 2. Երիտասարդների սոցիալ-տնտեսական և զբաղվածության հիմնախնդիրներ	«Երիտասարդ ընտանիքին մատչելի բնակարան պետական նպատակային ծրագրի պայմանների բարելավման նպատակով առաջարկություններ ՀՀ կառավարություն ներկայացնելը» գործողություն
Գերակայություն 3. Երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի խթանում	«Հայաստանի Հանրապետության 2015 թվականի երիտասարդական մայրաքաղաք Ստեփանավանի երիտասարդները ընդդեմ թրաֆիքինգի. «Գիտելիքների մրցարշավ ընդդեմ թրաֆիքինգի» ծրագիր
Գերակայություն 4. Երիտասարդների հոգևոր-մշակութային արժեքների զարգացում և ռազմախայրենասիրական դաստիարակություն	«Գյուղն է պահում սահմանը» ծրագիր
Գերակայություն 5. Կրթության շարունակականությունը և ոչ ֆորմալ կրթության ճանաչելիությունը	«100 գաղափար Հայաստանի համար» ծրագիր



Ծրագրերի գնահատման արդյունքները ներկայացված են ըստ գերակայությունների հերթականության:

Ծրագրերի գնահատման նպատակով կիրառվել են որակական մեթոդներ՝ որակական հարցազրույցներ, փաստաթղթերի վերլուծություն: Յուրաքանչյուր ծրագրի գնահատման ընթացքում կիրառված տեղեկատվության ստացման մեթոդների վերաբերյալ մանրամասն ներկայացված է յուրաքանչյուր ծրագրի բաժնում:


## 2.2 ԴՅ երիտասարդական ղետական քաղաքականության 2013-2017թթ. ռազմավարության միջոցառումների ծրագրի մոնիթորինգի արդյունքները

Ինչպես արդեն նշվեց, ռազմավարության մոնիթորինգի և գնահատման շրջանակներում իրականացվել է ռազմավարության միջոցառումների ծրագրի վերլուծություն ըստ տարիների, որը ևս ներկայացված է ստորև:

Աղյուսակ 1. Միջոցառումների թիվն ըստ տարիների և գերակայությունների


Գերակայություն	2013	2014	2015	2016	Ընդհանուր
1. Քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության գործընթացների խթանում	39 ծրագիր 43 ուղևորության դրամաշնորհի 8 միջազգային ծրագրի մասնակցություն	84 ծրագիր 38 ուղևորության դրամաշնորհի 18 միջազգային ծրագրի մասնակցություն	121 ծրագիր 43 ուղևորության դրամաշնորհի 21 միջազգային ծրագրի մասնակցություն	180 ծրագիր 32 ուղևորության դրամաշնորհի 15 միջազգային ծրագրի մասնակցություն	<b>424</b> ծրագիր 156 ուղևորության դրամաշնորհի 62 միջազգային ծրագրի մասնակցություն
2. Երիտասարդների սոցիալ-տնտեսական և զբաղվածության հիմնախնդիրներ	2	11	15	12	<b>40</b>
3. Երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի խթանում	10	19	27	15	<b>71</b>
4. Երիտասարդների հոգևոր-մշակութային արժեքների զարգացում և ռազմահայրենասիրական դաստիարակություն	5	19	24	18	<b>66</b>
5. Կրթության շարունակականությունը և ոչ ֆորմալ կրթության ճանաչելիությունը	2	5	9	10	<b>26</b>
<b>Ընդհանուր</b>	<b>58</b>	<b>138</b>	<b>196</b>	<b>235</b>	<b>627<sup>1</sup></b>

Ինչպես ցույց տվեցին մշտադիտարկման արդյունքները, ծրագրերի հիմնական մասն իրականացվել է 1-ին գերակայության՝ Քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության գործընթացների խթանում, շրջանակներում՝ **67%**:



Գծապատկեր 1. 2013-2016թթ. ծրագրերի բաշխումն ըստ գերակայությունների (%)

Ծրագրերի մեծ մասն իրականացվել են 2015 և 2016թթ.՝ համապատասխանաբար **31%** և **38%**: Ծրագրերի բաշխումն ըստ տարիների ներկայացված է Գծապատկեր 2-ում:



Գծապատկեր 2. 2013-2016թթ. ծրագրերի բաշխումն ըստ տարիների (%)

ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017թթ. ռազմավարության գործողությունների ծրագրերում առկա հիմնական խնդիրները՝

- միևնույն ծրագիրը ներկայացված է տարբեր տողերում, ինչը խոչընդոտեց պարզել, թե հստակ քանի ծրագիր է իրականացվել,
- միջոցառումներում հստակ չեն գործողությունների տրամաբանությունը և կապը տվյալ գերակայության հետ,
- որոշ տողերում նշված ծրագրերի շարադրանքը հնարավորություն չէր տալիս հասկանալ տվյալ ծրագրի առնչությունը տողի կամ գերակայության հետ:

Մասնավոր այլ դիտարկումներ նշված են Հավելված 2-ի համապատասխան բաժնում:

### 2.3 ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից հասարակական կազմակերպություններին տրամադրված դրամաշնորհային ծրագրերի հաշվետվությունների վերլուծության արդյունքներ

2016 թ. երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի կողմից իրականացված «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական 2013-2017թթ. Ռազմավարության» գնահատման շրջանակներում ինստիտուտը կազմեց նաև Առցանց դրամաշնորհային համակարգով իրականացված ծրագրերի հաշվետվությունների տվյալադարան, որի հիման վրա մշակվեց ծրագրերի հաշվետվությունների պարունակած տեղեկատվության քանակական նկարագրողական վերլուծություն:

#### Հիմնական բացահայտումներ՝

- Առցանց դրամաշնորհային ծրագրերի **29%-ը (53 ծրագիր)** համապատասխանել է մեկից ավել գերակայությունների միևնույն ժամանակ:
- Առավել շատ ծրագրեր (**55.2%, թվով 101 ծրագիր**) ուղղված են եղել առաջին գերակայությանը՝ «Քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության գործընթացների խթանում»:
- Բացի ՍԵՀՆ և ԵՄԻԿ ՊՈԱԿ-ից նաև այլ պետական կառույցի հետ համագործակցել են ծրագրերի **47%-ը (86 ծրագիր)**, հասարակական կազմակերպությունների հետ՝ շուրջ **48%-ը**, մասնավոր կազմակերպությունների հետ՝ շուրջ **20%-ը**, միջազգային կազմակերպությունների, կառույցների հետ՝ **16%-ը**, քաղաքացիական նախաձեռնությունների, չգրանցված խմբերի հետ համագործակցությունը շուրջ **6%-ը** նշել է հաշվետվություններում:
- Երևանում իրականացվել է ընդհանուր ծրագրերի շուրջ 22%-ը, Լոռի և Շիրակ մարզերում համապատասխանաբար՝ 20% -ական՝ թվով 37-ական ծրագրեր:
- Ծրագրերի շուրջ **6%-ը** իրականացվել է Արցախում:

- Ոչ ֆորմալ կրթությունը որպես ծրագրի ձևաչափ նշված է եղել ընդհանուր ծրագրերի 66%-ի հաշվետվություններում:

**Ծրագրերի բաշխումն՝ ըստ գերակայությունների:** Մուտքագրվել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման, 2013-2016թթ. առցանց դրամաշնորհային համակարգով իրականացված ծրագրերը՝ ընդհանուր թվով 183 ծրագիր, ընդ որում որոշ ծրագրեր միաժամանակ համապատասխանել են մեկից ավել գերակայությունների<sup>2</sup>:

Ինչպես ներկայացված է Աղյուսակ 2-ում, ծրագրերի 29%-ը (53 ծրագիր) համապատասխանել է մեկից ավել գերակայությունների միևնույն ժամանակ:

**Աղյուսակ 2. Ծրագրերի բաշխումն՝ ըստ գերակայությունների**

Գերակայությունը	Քանակ	Միայն մեկ գերակայություն	Մեկից ավել գերակայություններ	%
Գերակայություն 1 (միայն)	53	53		29
Գերակայություն 1, 3, 4	1		1	0.5
Գերակայություն 1, 4, 5	2		2	1.1
Գերակայություն 1, 2	13		13	7.1
Գերակայություն 1, 3	8		8	4.4
Գերակայություն 1, 4	10		10	5.5
Գերակայություն 1, 5	14		14	7.7
Գերակայություն 2 (միայն)	9	9		4.9
Գերակայություն 2, 3	1		1	0.5
Գերակայություն 2, 5	1		1	0.5
Գերակայություն 3 (միայն)	12	12		6.6
Գերակայություն 4 (միայն)	45	45		24.6
Գերակայություն 4, 5	3		3	1.6
Գերակայություն 5 (միայն)	11	11		6
Ընդամենը	183	130	53	100
%	100%	71%	29%	

Աղյուսակ 3-ի մեջ ներկայացված ծրագրերի քանակը գերազանցում է 183-ը, քանի որ ծրագրերի զգալի մաս ուղղված է եղել մեկից ավել գերակայությունների: Տվյալ աղյուսակում փորձել ենք ցույց տալ, թե Ռազմավարության յուրաքանչյուր գերակայությանն առանձին-առանձին քանի ծրագիր է ուղղված եղել:

Առավել շատ ծրագրեր (**55.2%, թվով 101 ծրագիր**) ուղղված են եղել առաջին գերակայությանը՝ «Քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության գործընթացների խթանում»:<sup>2</sup> Հաջորդ առավել ուշադրություն հատկացված գերակայությունը չորրորդն է՝ «Երիտասարդների հոգևոր-մշակութային արժեքների զարգացում և ռազմահայրենասիրական դաստիարակություն» (**33%, թվով 61 ծրագիր**): Հինգերորդ գերակայությանը ուղղված է եղել ծրագրերի **17%-ը՝ թվով 31 ծրագիր**: Երկրորդ և երրորդ գերակայությունները գրեթե հավասարաչափ են ուշադրության արժանացել իրականացված ծրագրերի համատեքստում. դրանց ուղղված են եղել ծրագրերի համապատասխանաբար 13% և 12%-ը:

<sup>2</sup> Ծրագրերի՝ ըստ գերակայությունների համապատասխանեցումը իրականացվել է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ամենամյա հաշվետվություններում ծրագրերի հիշատակման, և փորձագետի օգնությամբ մնացած ծրագրերի գերակայությունների պատկանելիության որոշման հիման վրա:

**Աղյուսակ 3. Յուրաքանչյուր գերակայությանն ուղղված ծրագրերի համամասնությունը**

Գերակայություն	Քանակ	%	Ղեկավարի %
Գերակայություն 1. Քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության գործընթացների խթանում	101	42.3%	55.2%
Գերակայություն 2. Երիտասարդների սոցիալ-տնտեսական և զբաղվածության հիմնախնդիրներ	24	10.0%	13.1%
Գերակայություն 3. Երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի խթանում	22	9.2%	12.0%
Գերակայություն 4. Երիտասարդների հոգևոր-մշակութային արժեքների զարգացում և ռազմահայրենասիրական դաստիարակություն	61	25.5%	33.3%
Գերակայություն 5. Կրթության շարունակականությունը և ոչ ֆորմալ կրթության ճանաչելիությունը	31	13.0%	16.9%
Ընդամենը	239	100.0%	130.6%

Եթե փորձենք հասկանալ, թե Ռազմավարության գերակայությունները իրականացված ծրագրերի տեսանկյունից չորս տարիների ընթացքում ինչ ծածկույթ են ունեցել, կատարվի մոտավորապես հետևյալ պատկերը՝

1. Գերակայություն 1՝ **55%**,
2. Գերակայություն 4՝ **26%**,
3. Գերակայություն 5՝ **17%**,
4. Գերակայություն 2՝ **13%**,
5. Գերակայություն 3՝ **12%**:

**Համագործակցություն:** Աղյուսակ 4-ում ներկայացված են ծրագրերի իրականացման համագործակից կառույցները: Ծրագրերի քանակը ներկայացված է կառույցների յուրաքանչյուր տիպի համար առանձին-առանձին, և քանի որ ծրագրերի շուրջ 45%-ում ծրագրի իրականացման գործընթացում ներգրավված է եղել երրորդ կողմ, ուստի աղյուսակում ներկայացված ծրագրերի քանակը գերազանցում է 183-ը:

Բացի ՍԵՀՆ և ԵՄԻԿ ՊՈԱԿ-ից նաև այլ պետական կառույցի հետ համագործակցել են ծրագրերի **47%-ը (86 ծրագիր)**, հասարակական կազմակերպությունների հետ՝ շուրջ **48%-ը**, մասնավոր կազմակերպությունների հետ՝ շուրջ **20%-ը**, միջազգային կազմակերպությունների, կառույցների հետ՝ **16%-ը**, քաղաքացիական նախաձեռնությունների, չգրանցված խմբերի հետ համագործակցությունը շուրջ **6%-ը** նշել է հաշվետվություններում:

**Աղյուսակ 4. Ծրագրերում ներգրավված երրորդ կողմ**

Համագործակիցներ	Քանակ	%	Ղեկավարի %
Պետական կառույց	86	34.4%	47%
Հասարակական կազմակերպություն	88	35.2%	48.1%
Քաղաքացիական նախաձեռնություն /ՔՀԿ	10	4.0%	5.5%
Միջազգային կազմակերպություն	29	11.6%	15.8%
Մասնավոր կազմակերպություն	37	14.8%	20.2%
Ընդամենը	250	100.0%	136.6%

Աղյուսակ 5-ից կարող ենք տեսնել, որ դրամաշնորհային ծրագրերի **29%-ը (թվով 53 ծրագիր)** չի ունեցել որևէ համագործակցող կառույցի մասին նշում ներկայացված հաշվետվություններում: Ծրագրերի շուրջ 26%-ը համագործակցել է միայն 1 արտաքին կառույցի/կազմակերպության հետ, շուրջ 28%-ը՝ 2, 15%-ը՝ 3, և միայն 2%-ը՝ 4 արտաքին կառույցների և կազմակերպությունների հետ:

**Աղյուսակ 5. Համագործակից կառույցների/կազմակերպությունների թիվը**

<b>Համագործակից կառույցների/կազմակերպությունների թիվը</b>	<b>Քանակ</b>	<b>%</b>
1 համագործակից կառույց	47	25.7
2 համագործակից կառույց	51	27.8
3 համագործակից կառույց	28	15.3
4 համագործակից կառույց	4	2.2
Չկա այլ համագործակից կառույցի մասին նշում	53	29
<b>Ընդամենը</b>	<b>183</b>	<b>100</b>

Աղյուսակ 6-ում ներկայացված է, թե ինչ կազմակերպությունների կամ կառույցների ետևե ն համագործակցել ՅԿ-ները ծրագրերի իրականացման ժամանակ: Ընդամենը մեկական համագործակից ունեցել է ծրագրերի շուրջ 26%-ը՝ ծրագրերի **10%-ը** համագործակցել է միայն պետական կառույցների հետ: ԵՐԿու գործընկեր ունեցել է ծրագրերի շուրջ 28%-ը՝ ընդհանուր ծրագրերի մոտ **16%-ը** համագործակցել է միաժամանակ Պետական կառույցների և այլ ՅԿ-ների հետ: 15%-ը համագործակցել է երեքական կառույցների/կազմակերպությունների հետ. ծրագրերի շուրջ 8%-ը միաժամանակ համագործակցել է պետական կառույցների, հասարակական և մասնավոր կազմակերպությունների հետ:

**Աղյուսակ 6. Ծրագրերի համամասնությունը՝ ըստ արտաքին համագործակցող կառույցների/կազմակերպությունների**

<b>Պետական կառույց</b>	<b>ՅԿ</b>	<b>ԲՅԿ</b>	<b>Միջազգային կազմ.</b>	<b>Մասնավոր կազմ.</b>	<b>Համագործակից կազմ.-երի քանակ</b>	<b>Ծրագրերի քանակ</b>	<b>%</b>
				1	1	5	2.7
			1		1	5	2.7
		1			1	2	1.1
	1				1	19	10.4
1					1	16	8.7
			1	1	2	1	0.5
	1			1	2	2	1.1
	1		1		2	6	3.3
	1	1			2	3	1.6
1				1	2	7	3.8
1			1		2	3	1.6
1	1				2	29	15.8
	1		1	1	3	1	0.5
1			1	1	3	2	1.1
1			1	1	3	1	0.5
1	1			1	3	14	7.7
1	1		1		3	7	3.8
1	1	1			3	3	1.6
1	1		1	1	4	3	1.6
1	1	1		1	4	1	0.5
Չկա այլ համագործակից կառույց						53	29
<b>Ընդամենը</b>						<b>183</b>	<b>100</b>

**Ծրագրերի տարածական ծածկույթ:** Աղյուսակ 7-ում պատկերված է, թե ծրագրերն ինչպիսի տարածական ծածկույթ են ապահովել, ու քանի որ եղել են ծրագրեր, որոնք մեկից ավել համայնքներում և մարզերում են միաժամանակ իրականացվել, ուստի դիտարկված դեպքերի տոկոսը գերազանցում է 100-ը:

Ինչպես տեսնում ենք աղյուսակից երևանում իրականացվել է ընդհանուր ծրագրերի շուրջ 22%-ը, Լոռի և Շիրակ մարզերում համապատասխանաբար՝ 20% -ական՝ թվով 37-ական ծրագրեր:

Արցախում իրականացվել է ընդհանուր ծրագրերի 6%-ը (թվով 12), Վրաստանում՝ ծրագրերի 1%-ը, 2 ծրագիր: 33 մարզերից առավել քիչ ներկայացուցչություն ապահովվել է Արմավիրի (1 ծրագիր), Արարատի (2 ծրագիր) և Վայոց Ձորի (3 ծրագիր) մարզերի համար:

**Աղյուսակ 7. Յուրաքանչյուր մարզում իրականացված ծրագրերի քանակը**

Մարզ	Քանակ	%	% դեպքերի մեջ
Երևան	40	19.7	21.9
Լոռի	37	18.2	20.2
Շիրակ	37	18.2	20.2
Սյունիք	20	9.9	10.9
Կոտայք	19	9.4	10.4
Գեղարքունիք	13	6.4	7.1
Արցախ	12	5.9	6.6
Տավուշ	12	5.9	6.6
Արագածոտն	5	2.5	2.7
Վայոց Ձոր	3	1.5	1.6
Արարատ	2	1.0	1.1
Վրաստան	2	1.0	1.1
Արմավիր	1	0.5	0.5
Ընդամենը	203	100	110.9

Եթե փորձենք ավելի մանրամասն հասկանալ, թե ծրագրերը ինչպիսի ծածկույթ են ունեցել, ապա հարկ է նշել, որ մեկ ծրագիր իրականացվել է միաժամանակ Արցախում և Վրաստանում, 11 ծրագիր՝ միայն Արցախում ևս 1 ծրագիր՝ միայն Վրաստանում:

**Աղյուսակ 8. Ծրագրերի ներկայացրած մարզերի թիվը**

	Քանակ	%
1 մարզ	137	74.9
2 մարզ	13	7.1
3 մարզ	2	1.1
6 մարզ	1	0.5
7 մարզ	2	1.1
Պատասխան չկա	28	15.3
Ընդամենը	183	100

Անդրադառնալով 33 վարչատարածքային ներկայացուցչությանը, Աղյուսակ 8-ից տեսնում ենք, որ ծրագրերի շուրջ 75%-ը ներգրավել է միայն մեկական մարզ, սակայն եղել են նաև հազվադեպ ծրագրեր, որոնք իրականացվել են միաժամանակ 6 -7 մարզում:

**Ծրագրերի ձևաչափը:** Ծրագրի ձևաչափի մասին տեղեկատվություն առկա է եղել ծրագրային հաշվետվությունների շուրջ 71%-ի մոտ (թվով 129 ծրագիր<sup>3</sup>): Քանի որ եղել են ծրագրեր, որոնք բաղկացած են եղել մի քանի մասից, և հետևաբար յուրաքանչյուր մասն իր ձևաչափն է ունեցել, ուստի եղել են դեպքեր, երբ մեկ ծրագրի համար նշվել է մեկից ավել ձևաչափեր: Այդ պատճառով Աղյուսակ 9-ում ներկայացված ծրագրերի համամաս-

3 Ծրագրերի հաշվետվությունների ներկայացման ձևաչափը տարբերվում է ծրագրերի մոտ, ուստի ներառած տեղեկատվությունը նույնպես տարբերվել է:

նությունների գումարը գերազանցում է 100%-ը: Ոչ ֆորմալ կրթությունը որպես ծրագրի ձևաչափ նշված է եղել ընդհանուր ծրագրերի 66%-ի հաշվետվություններում:

**Աղյուսակ 9. Ծրագրերի ձևաչափը**

	Դեպքերի քանակ	Դեպքերի %	Դեպքերի %-ը ընդհանուրի մեջ
Ոչ ֆորմալ կրթություն	121	93.8	66.1
Ցուցահանդես, ցուցադրություն	11	8.5	6.0
Փառատոն	6	4.7	3.3
Հետազոտություն, ուսումնասիրություն	3	2.3	1.6
Առաջնություն, մրցույթ	6	4.7	3.3
Գիտաժողով, քննարկումներ	3	2.3	1.6
Ընդամենը	150	116.3	82

**Այլ բնութագրական տեղեկատվություն:** Աղյուսակ 10-ում ներկայացված են ծրագրերի բովանդակային պարունակության փոփոխականների արժեքները:

Թեպետ ծրագրային հաշվետվությունների բովանդակության ընթերցման ժամանակ ակնհայտ են դառնում ծրագրի մշակման թերություններ (մասնավորապես ծրագրի նպատակի, խնդիրների, համապարփակության համապատասխանության, չափելիության, իրատեսականության և մի շարք այլ խնդիրներ), այնուամենայնիվ այսօր երիտասարդական ՀԿ դաշտում առկա է ծրագրային գրագիտության ամրապնդման հեռանկարներ:

**Աղյուսակ 10. Ծրագրային հաշվետվություններում առկա տեղեկատվության հիման վրա այլ փոփոխականների ներկայացում**

Փոփոխականի անվանում	Քանակ	%
Ծրագրի նպատակի առկայություն	156	85.2
Ակնկալվող արդյունքների մասին հիշատակում	148	80.9
Փաստացի արդյունքների նշում	155	84.7
Ծրագրի շարունակականության մասին նշում	142	77.6
Արդյունքների գնահատման մոտեցման առկայություն	127	69.4
Տեսանելիության մասին նշում	154	84.2
Ծրագրի սահմանափակումների ներկայացում	112	61.2
Հաշվետվության մեջ ծրագրի արդյունքների վերաբերյալ եզրակացություն	108	59
Եզրակացություն հաշվետվության վերաբերյալ	94	51.4

**Առաջարկություններ:** Հաշվի առնելով ԵՄԻԿ ՊՈԱԿ-ում առկա ծրագրային նկարագրողական հաշվետվությունների տվյալների հիման վրա իրականացված նկարագրողական վերլուծության արդյունքները՝ Ռազմավարության իրականացման տեսանկյունից ծրագրերի արդյունավետության բարձրացման նպատակով ներկայացվում են հետևյալ առաջարկները՝

- Քանի որ գերակայություններին ուղղված ծրագրերի քանակները զգալի տարբերվում են, անհրաժեշտ է հասկանալ, արդյոք ծրագրերի այդպիսի բաշխումը՝ ըստ գերակայությունների համապատասխանում է Ռազմավարության նպատակներին, և խնդիրների առավել օպտիմալ իրականացմանը:
- Թեպետ ՀԿ-ները հակված են ծրագրերի իրականացման ժամանակ համագործակցել այլ կառույցների և կազմակերպությունների հետ, սակայն նկատվում է ավելի թույլ համագործակցություն մասնավոր կազմակերպությունների հետ: Այսօր Հայաստանում բազմաթիվ ոլորտներում իրականացվում են աշխատանքներ հանրային և մասնավոր սեկտորների համագործակցության հաստատման նպատակով, մեծ մթնոլորտում կարող է արդյունավետ լինել ՀԿ-ների՝ մասնավոր կազմակերպությունների հետ առավել սերտ համագործակցության խրախուսումը/դրդումը:
- Նկատվում է ծրագրերի տարածական բևեռացում: Ուստի անհրաժեշտ է հասկանալ արդեն իսկ իրա-

կանացված ծրագրերի նպատակային լինելը, ավելի քիչ ներգրավված մարզերի երիտասարդական կարիքները, և անհրաժեշտության դեպքում մշակել ծրագրերի իրականացման տարածական ուղղորդման ծրագիր:

- Ծրագրերի գերակշռող մասն իրականացվել է միայն մեկական մարզում: Անհրաժեշտ է թիրախավորել միանման երիտասարդական կարիքներ ունեցող մարզերը կամ համայնքները՝ մի ծրագրի մեջ միավորելու նպատակով: Դա կարող է նպաստել միջմարզային երիտասարդական համագործակցության հաստատմանը:

Ինչպես նաև ծրագրերի արխիվացման աշխատանքների բարելավման նպատակով առաջարկվում է՝

- Վերանայելու միջոցառումների ծրագիրը՝ յուրաքանչյուր գերակայության համար հստակեցնելով իրեն հատուկ խնդիրները՝ սահմանելով հնարավոր լուծումները, մեխանիզմները:
- Վերաարխիվացնել ծրագրերի նկարագրողական հաշվետվությունները՝ մշակելով կողավորման և համարակալման ավելի մատչելի համակարգ:
- Մշակել հաշվետվությունների փաստաթղթային վերլուծության մեթոդաբանությունը, ինչը թույլ կտա գնահատել դիմող ու իրականացնող կազմակերպության կոմպետենտությունը ու կատարած աշխատանքը:
- Հետագա ծրագրերի ընդունման ու հաստատման ժամանակ հետևել, որպեսզի ծրագրի ձևակերպած նպատակը համապատասխանի գերակայության կոնկրետ խնդրի:
- Վերանայել ԵՄԻԿ ՊՈԱԿ-ի կողմից հանձնված ծրագրային նկարագրողական հաշվետվությունների դիտարկման չափանիշները՝ ներառելով փաստաթղթի բովանդակային վերլուծության բաղադրիչ:

## 2.4 Ուղղակարության ծրագրերի փորձնական գնահատում

### 1. «Հայաստանի Հանրապետության երիտասարդական մայրաքաղաք» ծրագրի գնահատում

#### «Հայաստանի Հանրապետության երիտասարդական մայրաքաղաք» ծրագրի նկարագիր

##### Ծրագրի հակիրճ նկարագիր, նպատակն ու խնդիրները

Ծրագրի կանոնակարգում նշված ծրագրի դրույթներն են՝

1.1. «Հայաստանի Հանրապետության երիտասարդական մայրաքաղաք»-ը (այսուհետ՝ Մայրաքաղաք) կարգավիճակ է, որը մրցույթի արդյունքում (այսուհետ՝ Մրցույթ) շնորհվում է քաղաքին մեկ տարի ժամկետով: Մայրաքաղաքը հնարավորություն է ստանում այդ մեկ տարվա ընթացքում իրականացնելու երիտասարդների սոցիալական, տնտեսական, քաղաքական, մշակութային, մարզական ակտիվությանը նպաստող ծրագրեր:

1.2. Մրցույթը նպաստում է նորարարական ծրագրերի ստեղծմանը և իրագործմանը՝ կապված ՀՀ քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդների ակտիվ մասնակցության հետ:

1.3. Մայրաքաղաքի կարգավիճակը քաղաքի երիտասարդական կազմակերպությունների համար հնարավորություններ է ստեղծում մասնակցելու հանրապետական մակարդակով որոշումների ընդունմանը, ձեռք բերելու նոր գիտելիքներ, հմտություններ, գործընկերներ, զարգացնելու միջազգային համագործակցությունը երիտասարդության ոլորտում:<sup>4</sup>

Մրցույթի նպատակներն են՝

- ա) խթանել ՀՀ մարզերի համաչափ զարգացումը,
- բ) զարգացնել երիտասարդների նախաձեռնողականության, երիտասարդական քաղաքականության ոլորտում քաղաքների միջև բարեխիղճ և գործընկերային հարաբերություններն ինչպես տեղական և հանրապետական, այնպես էլ միջազգային մակարդակներում,
- գ) խրախուսել ՀՀ քաղաքային իշխանություններին տեղական մակարդակում մշակելու երիտասարդական քաղաքականության իրականացման արդիական և արդյունավետ մոդել,

4 Հայաստանի Հանրապետության երիտասարդական մայրաքաղաք ծրագրի կանոնակարգ



դ) նպաստել մարզերում երիտասարդական կազմակերպությունների և ենթակառուցվածքների զարգացմանը:

Մրցույթի հիմնադիրն է ՀՀ կառավարությունը:

Մրցույթի կազմակերպիչն է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը:

Ծրագրի շահառու է հանդիսանում Մրցույթը հաղթած քաղաքը:

Ծրագիրն ամենամյա է, արդեն իրականացվել է երեք քաղաքներում: 2017 թվականին նախատեսվում է իրականացնել Մրցույթը շահած Չարենցավան քաղաքում:

Ծրագրի արդյունքներ: Իրականացման տարիների ընթացքում Մրցույթը շահել են հետևյալ քաղաքները՝ Սիսիան, Ստեփանավան, Գյումրի: 2017 թվականի երիտասարդական փոխնայրաքաղաք ճանաչվել է Չարենցավան քաղաքը:

Ստորև բերված աղյուսակում ներկայացվում է Ռազմավարության շրջականերում իրականացված ծրագրերի համամասնությունը՝ ըստ տարիների և համեմատությունը ընդհանուր ծրագրերի համամասնության հետ<sup>5</sup>:

Ընդհանուր չորս տարիների ընթացքում իրականացված 183 ծրագրերի մոտ 42%-ն իրականացվել է Սիսիան, Ստեփանավան և Գյումրի քաղաքներում: Ընդհանուր առմամբ երիտասարդական մայրաքաղաք ծրագրի շրջանակներում երեք տարիների ընթացքում իրականացվել է 52 ծրագիր, ինչը ապահովում է ընդհանուր ծրագրերի շուրջ 28%-ը:

**Աղյուսակ 11. Երիտասարդական մայրաքաղաքներում իրականացված ծրագրերի համամասնությունը՝ ըստ տարիների, համեմատությունը ընդհանուրի հետ**

	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	Ընդամենը	% (2014/2016)
<b>Սիսիան, Սյունիքի մարզ</b>	1	13	0	2	16	9.4
<b>Ստեփանավան, Լոռու մարզ</b>	2	1	20	0	23	13.5
<b>Գյումրի, Շիրակի մարզ</b>	5	5	3	19	32	18.7
<b>Ընդամենը երեք քաղաքներում</b>	8	19	23	21	71	41.5
<b>Ընդամենը ծրագրեր</b>	42	48	54	39	183	100

Այսուհետ ներկայացված արդյունքները վերաբերում են միայն երիտասարդական մայրաքաղաք ծրագրի շրջանակներում իրականացված ծրագրերին՝ թվով 52 ծրագիր:

Հաշվետվություններում տրամադրված տեղեկատվությունից դատելով՝ կարելի է ասել, որ Մայրաքաղաք ծրագրի շրջանակներում երեք տարիների ընթացքում մասնակցել է ավելի քան 2600 երիտասարդ: Սակայն այս տվյալները չեն արտահայտում իրական մասնակցությունը, քանի որ հաշվետվություններում մասնակիցների բնույթն ու թիվը տարբեր ձևաչափերով են ներկայացված եղել:

**Աղյուսակ 12. Մայրաքաղաքի շրջանակներում իրականացված ծրագրերի մասնակիցների թիվը**

	Մասնակիցների սպասված թիվ	Մասնակիցների փաստացի թիվ
<b>Գյումրի</b>	77	154
<b>Ստեփանավան</b>	2093	787
<b>Սիսիան</b>	2182	1730
<b>Ընդամենը</b>	<b>4352</b>	<b>2671</b>

Մայրաքաղաքի շրջանակներում Սիսիան քաղաքի ՀԿ-ները ստացել են 9 դրամաշնորհ, քաղաքում անցկացվել է ԱՊՀ մասնակից պետությունների երիտասարդության հարցերի խորհրդի նիստ, «ՀՀ 2014թ. երիտասարդական մայրաքաղաք Սիսիանի երիտասարդներն ընդդեմ թրաֆիքինգի. «Գիտելիքների մրցարշավ ընդդեմ թրաֆիքինգի»», «Երևան-Սիսիան-Ստեփանակերտ մարաթոնյան վազք և երիտասարդների առողջ ապրելակերպի խթանում» ծրագրերը, այլ դրամաշնորհային ծրագրեր ոչ Սիսիան քաղաքի ՀԿ-ների կողմից, Արևելյան գոր-

<sup>5</sup> Ռազմավարության շրջանակներում գնումներով իրականացված և դրամաշնորհային ծրագրերի՝ հետազոտության դաշտային աշխատանքների իրականացման ժամանակահատվածում ԵՄԻԿ ՊՈԱԿ-ում գտնվող հաշվետվությունների հիման վրա իրականացված մոնիթորինգի արդյունքներից մեջբերում:

ծընկերության երկրների երիտասարդական քաղաքականության աջակցության ծրագրի ազգային աշխատա-  
ժողովներ և մի շարք այլ միջոցառումներ:

Ստեփանավան քաղաքում 2015 թվականին քաղաքի ՅԿ-ներին տրամադրվել է 12 դրամաշնորհային ծրա-  
գիր, քաղաքում անցկացվել է Արևելյան գործընկերության երկրների երիտասարդական քաղաքականության  
աջակցության ծրագրի ռեգիոնալ աշխատաժողով, իրականացվել են «Հայաստանի Հանրապետության 2015  
թվականի երիտասարդական մայրաքաղաք Ստեփանավանի երիտասարդներն ընդդեմ թրաֆիքինգի. «Գիտե-  
լիքների մրցարշավ ընդդեմ թրաֆիքինգի», «Երիտասարդների ձեռնարկատիրական գործունեությունը խթանող  
սեմինար-դասընթաց», «100 գաղափար Հայաստանի համար», այլ համայնքների ՅԿ-ների կողմից դրա-  
մաշնորհային ծրագրեր և մի շարք այլ կարևոր միջոցառումներ: Ստեփանավան քաղաքի ՏԻՄ կարիքներից  
ելնելով՝ որոշում է կայացվել քաղաքում կառուցել երիտասարդական հուշահամալիր, անցկացվել է երիտա-  
սարդական խորհրդանիշ-կոթողի էսքիզային մախագծերի մրցույթ, մախագծային փաստաթղթերի պատրաս-  
տում: Իրականացնողները նպատակադրել են ֆինանսական ռեսուրսներ գտնել հուշահամալիրը կառուցելու  
համար. պետական բյուջեով մախատեսված չեն գույքի ձեռքբերման ծախսեր:

2016թ. Մայրաքաղաք ծրագրի շրջանակներում Գյումրի քաղաքի ՅԿ-ներին տրամադրվել է 14 դրամաշնորհ,  
իրականացվել են «Մեթոյա հերոսները», «Երիտասարդական հիմնախնդիրների ուսումնասիրությամբ զբաղ-  
վող հետազոտվողների և հետազոտական խմբերի գիտագործնական գիտաժողով», «Առցանց համակարգով  
ներկայացված դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական քննությունն իրականացնող փորձագետների  
վերապատրաստում», «ՄԻՎՎ/ՁԻԱՀ-ի, թմրամիջոցների, ալկոհոլի, ծխախոտի օգտագործման դեմ պայքարի  
վերաբերյալ երիտասարդների իրազեկության մակարդակի բարձրացում», «Տեղեկատվական և խորհրդատ-  
վական աջակցություն վիրահայ երիտասարդներին. Երիտասարդական համագործակցության զարգացում»,  
«Մեթոդական աջակցություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հասարակական կազմակերպություն-  
ներին և երիտասարդներին», «Երիտասարդական աշխատողների վերապատրաստում», «Ընդդեմ թրաֆիքին-  
գի երիտասարդների գիտելիքների արշավ» ծրագրերը, այլ դրամաշնորհային ծրագրեր ոչ քաղաքի ՅԿ-ների  
կողմից, մի շարք այլ կարևոր միջոցառումներ:

### **Ծրագրի գնահատման մեթոդաբանությունը**

**Նպատակ:** Գնահատել իրականացված ծրագրերի արդյունավետությունը և պարզել միջոցառումների համա-  
պատասխանությունը Ռազմավարական նպատակներին:

#### **Խնդիրները՝**

1. Որո՞նք են եղել ծրագրի սկզբնական նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքը ծրագրի կազ-  
մակերպչի ու իրականացնող(ներ)ի կողմից,
2. Որքանո՞վ է ծրագիրը իր նպատակով, խնդիրներով, ակնկալվող արդյունքով համապատասխանում  
Ռազմավարության նպատակին,
3. Որքանո՞վ է առնչվում Ռազմավարության համապատասխան գերակայությանը, որի ներքո մախատես-  
ված է եղել իրականացնել,
4. Ի՞նչ հիմնական խոչընդոտներ են հանդիպել ծրագրի իրականացման ժամանակ,
5. Արդյո՞ք եղե՞լ են փոփոխություններ՝ մախատեսված գործողությունների կատարման ժամանակ, ինչպես  
են դրանք կատարվել,
6. Որքանո՞վ է ծրագիրը հաջողվել՝ մախատեսված խնդիրների իրականացման հարցում,
7. Արդյո՞ք մախատեսված խնդիրները թույլ են տվել հասնել ցանկալի արդյունքին,
8. Հաշվի առնելով ծրագրի արդյունքը՝ ծրագրի կրկնվելու դեպքում ի՞նչ փոփոխություններ են մախա-  
տեսվում: Եթե այդպիսիք կան, ինչպե՞ս են դրանք իրականացվելու:

Նպատակներին հասնելու համար կիրառվել են տեղեկատվության ստացման հետևյալ մեթոդները.

- առանցքային տեղեկատուների հետ անհատական հարցազրույցներ,
- փաստաթղթերի վերլուծություն:

Իրականացվել է հետևյալ փաստաթղթերի վերլուծություն՝

- իրականացված դրամաշնորհային ծրագրերի հաշվետվություններ
- մայրաքաղաքի ծրագրի կանոնակարգ,
- մրցույթի գնահատման չափորոշիչներ:

### **Ծրագրի արդյունավետության գնահատում**

Ծրագրի սկզբնական նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքը՝ ըստ միջոցառման իրականացնողների Յետագոտությանը մասնակցած առանցքային տեղեկատուները, ովքեր ներգրավված են եղել նաև Մայրաքաղաքի կանոնակարգի մշակմանը, նշում են, որ ի սկզբանե իրենց առջև խնդիր են ունեցել բարձրացնել մարզային երիտասարդների մասնակցությունը, զարգացնել մարզերի երիտասարդության ու երիտասարդական կազմակերպությունների կարողությունները: Քննարկումների արդյունքում որոշվել է պետական բյուջեով իրականացվող ծրագրերը ուղղել մարզ, ինչի համար ընտրվել է մարզային քաղաքների հետ աշխատելու մեխանիզմը: Մարզային քաղաքներում երիտասարդական ոլորտը աշխուժացնելու համար որոշվել է, որ միևնույն քաղաքում պետք է իրականացվեն միաժամանակ տարբեր միջոցառումներ, ինչի համար Առցանց դրամաշնորհային համակարգով իրականացվող ծրագրերի համար սահմանվել է 1:1 գործակիցը տարվա Մայրաքաղաքում նախատեսվող դրամաշնորհային ծրագրերի համար:

2017 թվականին հաղթած յոթ ծրագրերից վեցը իրականացվելու է 2017 թվականի համար մրցույթը շահած Չարենցավան քաղաքում: Առանցքային տեղեկատուի կարծիքով, քանի որ 2017 թվականին չշահած ծրագրերից ոչ մեկը նախատեսված չի եղել իրականացնել Մայրաքաղաքում, հաղթած 6 ծրագրերի առավելությունը մյուսների նկատմամբ եղել է հենց 1:1, ինչը վկայում է այն մասին, որ 1:1 սահմանված գործակիցն իրոք նպաստում է ծրագրերը Մայրաքաղաք ուղղելուն:

2015 հունիսի 8-ի N112 -/Մ1 հրամանի առաջին կետով հրահանգվել է ծրագրի կանոնակարգին ավելացնել 3.2 կետ, որի համաձայն՝ «Երևան քաղաքը Մրցույթին մասնակցել չի կարող»: Կանոնակարգում այսպիսի փոփոխությունը մրցույթը վերջնականորեն ուղղում է մարզային քաղաքներին:

**Յետևաբար՝ կարող ենք եզրակացնել, որ Մայրաքաղաքի մրցույթն իրենով բացառապես մարզային զարգացմանն ուղղված ծրագիր է:** Այժմ անդրադառնանաք աշխատանքային մշակույթին:

Յետագոտության մասնակիցները նշում են, որ յուրաքանչյուր քաղաքում ծրագրի առաջնահերթ խնդիրները որոշվել են քաղաքային իշխանությունների հետ քննարկման արդյունքում՝ կախված վերջիններիս կողմից նշված քաղաքի կարիքներից, բացի այդ Մայրաքաղաքի մրցույթի ժամանակ տեղի են ունեցել հանդիպումներ, քննարկումներ քաղաքային իշխանությունների, ՅԿ ներկայացուցիչների հետ, ինչը ծրագիրն իրականացնողների համար ևս հիմք է ծառայել քաղաքի երիտասարդական կարիքները նույնականացնելու համար:

Ինչպես նշում են առանցքային տեղեկատուները, Սիսիան քաղաքում ծրագրի իրականացման տարին բացակայել են երիտասարդական ՅԿ-ները, Նախարարությունն իր առջև խնդիր էր դրել նպաստել ՅԿ-ների ստեղծմանը և հզորացմանը: Ստեփանավան քաղաքում քանի որ ՅԿ դաշտը, համաձայն փորձագիտական կարծիքի, արդեն զարգացած է եղել, մյուս կողմից քաղաքային իշխանությունները նշել են, որ քաղաքը կարիք ունի երիտասարդական հուշահամալիրի, այդ նպատակով, բացի նախատեսված ծրագրերից, իրականացվել են երիտասարդական հուշահամալիրի ստեղծման աշխատանքներ,՝ հայտարարվել են մրցույթ, մրցույթի արդյունքում շահած նախագծի համաձայն հուշահամալիրի նախագծման աշխատանքներ: Հուշահամալիրի կառուցումը ներկայումս գտնվում է դադարի փուլում՝ ֆինանսական միջոցների հայթայթման նպատակով, քանի որ Մայրաքաղաքը չի նախատեսում հուշահամալիրի կառուցման ֆինանսավորում:

Գյումրիում, քանի որ ՅԿ դաշտը արդեն զարգացած է եղել ծրագրերի իրականացման պահին, քաղաքային իշխանությունները շեշտադրել են քաղաքում մշակութային կյանքի ակտիվացման խնդիրը: Մայրաքաղաքի շրջանակներում քաղաքում կազմակերպվել են մի շարք մշակութային միջոցառումներ: Գնահատման ընթացքում պարզ դարձավ, որ Գյումրու քաղաքապետարանի մշակույթի բաժինը որդեգրել է երիտասարդներին իր միջոցառումներում ներգրավելու մոտեցումը: Որպես Գյումրիում մշակութային ուղղվածությանը նպաստող գործոն՝ պետք է նշել նաև այն հանգամանքը, որ երիտասարդների հետ աշխատանքը կանոնակարգվում է քաղաքապետարանի մշակույթի բաժնի կողմից:

*«Անդրանիկի 150 ամյակն էր անցած տարի: Սովորաբար օռկեստր էիք կանգնացնում, քաղաքապետարանի ներկայացուցիչները մի երկու բան էին ասում Անդրանիկ Օզանյանի մասին, պսակը դնում էինք թողնում գնում*

*էինք: Էս տարի կանչեցինք սկաուտներին, երիտասարդները ֆիզիկոսների կիսանդրիների կողքը կանգնեցին մի կողմը զինվոր կանգնեց ավտոմատով, մյուս կողմը սկաուտները, բոլորովին ուրիշ գույն մտավ, նույնիսկ պարզագույն գործողությունը...չեք պատկերացնի ինչ կատարվավ, ամբողջ փողոցը փակվավ, երբ Անդրանիկին հեջ էդքան մարդ չէր եկել»,- առանցքային տեղեկատուի հետ հարցազրույցից մեջբերում:*

Առանցքային տեղեկատուները նաև նշում են, որ ծրագրի նպատակ է եղել մարզերում նպաստել քաղաքային իշխանությունների և տեղական երիտասարդական կազմակերպությունների համագործակցությանը: Թեպետ ծրագրի կանոնակարգում նշված նպատակներում չի ներառվում քաղաքում ՏԻՄ և ՅԿ համագործակցության խթանումը, այնուամենայնիվ, այն հանգամանքը, որ Մայրաքաղաքի մրցույթի դիմում-հայտը ենթադրում է երկու մաս՝ քաղաքապետարանի կողմից լրացվող և համահայտատու ՅԿ-ների կողմից լրացվող, արդեն իսկ նպաստում է ՏԻՄ-ի և ՅԿ-ների միջև հաղորդակցությանը և համագործակցությանը: Ուստի այս ՏԻՄ և ՅԿ համագործակցության խթանումը կարելի է համարել ծրագրի հավելյալ նպատակ:

Քանի որ մրցույթը շահած քաղաքում նախատեսված են եղել իրականացնել ոչ միայն ծրագրով նախատեսված երեք ծրագրերը, այլ նաև Նախարարության ամենամյա ծրագրերը և Առցանց դրամաշնորհային համակարգի 1:1 գործակցով մասնակցած ՅԿ-ների ծրագրերը, ուստի կազմակերպիչներն ի սկզբանե չեն ունեցել Մայրաքաղաքի ընթացքի նախատեսած մանրամասն քայլեր. Մայրաքաղաքը ստացել է ինչ-որ առունով ինքնակազմակերպվող բնույթ:

### *Եզրակացություններ*

Այսպիսով՝ Մայրաքաղաքն իր իրավական հիմքերով, նպատակներով ու իրականացված աշխատանքներով ուղղված է մարզային զարգացմանը: Գնահատումը ցույց է տալիս, որ ծրագիրն ունեցել է անհատական մոտեցում յուրաքանչյուր քաղաքի դեպքում, և արդյունքներն էլ, ուստի, եղել են անհամեմատելի: Այնուամենայնիվ, հնարավոր է տարբերակել արդյունքի հետևյալ տեսակները՝ ըստ առանցքային տեղեկատուների գնահատականների.

- *երիտասարդական ՅԿ-ների ստեղծմանը նպաստում,*
- *երիտասարդական ՅԿ ոլորտի զարգացում,*
- *երիտասարդական ՅԿ-ների միջև փոխճանաչողական միջոցառումներ, համագործակցության խթանում,*
- *երիտասարդական ծրագրերի իրականացում,*
- *երիտասարդական հարցերով խորհրդատվության տրամադրում:*

Մայրաքաղաքն ունի նաև հավելյալ արդյունքներ, ինչպես, օրինակ, երիտասարդների շրջանում կամավորության մշակույթի զարգացումը, երիտասարդների կարիքներից իրագրվածության բարձրացումը քաղաքային իշխանությունների շրջանում, համագործակցության հակվածության բարձրացում երկու կողմում էլ:

### **Ծրագրի իրականացման առանձնահատկությունները**

**Ծրագրին դիմելու ընթացակարգը:** Համաձայն մայրաքաղաքի կանոնակարգի՝ մրցույթին հայտ կարող է ներկայացնել քաղաքի քաղաքապետարանն առնվազն երկու համահայտատու ՅԿ-ների հետ մասին:

Ներգրավված քաղաքների քաղաքապետարանների ներկայացուցիչները տեխնիկական հարցերում դժվարություններ չեն շեշտել, քանի որ երկու դեպքում էլ, բացի քաղաքապետարանի աշխատակից լինելուց, նաև հանդիսանում են փորձառու ՅԿ ղեկավարներ: Այսպիսով՝ ծրագրին հաջողությամբ դիմելու հանգամանքը կարող է պայմանավորված լինել դիմող անձի հմտություններով:

Երկու դեպքում էլ նշվել է, որ անհրաժեշտության դեպքում տեխնիկական հարցերով աջակցություն ստացել են նախարարությունից, սակայն դժվարացան օրինակներ մտաբերել:

**Ծրագրի իրականացման ժամանակ հանդիպած խոչընդոտները, փոփոխությունները:** Ծրագրի իրականացման ժամանակ, ըստ հետազոտության մասնակիցների, խոչընդոտներ չեն առաջացել: Ու քանի որ ծրագրի իրականացման համար գործողությունների պլան և ժամանակացույց չի նախատեսվում, փոփոխություններ տեղի չեն ունեցել:

Մի դեպք, որը սակայն ծրագրի մասնակիցները չեն նշում որպես խոչընդոտ, տեղի է ունեցել Գյումրի քաղաքում: Տեղական երիտասարդական ՅԿ-ների ներկայացուցիչները Մայրաքաղաքի իրականացման ժամանակ պա-

հանջել են մայրաքաղաքի շրջանակներում իրականացվող գործողությունների հաշվետվողականության ու թափանցիկության ապահովում քաղաքի ՅԿ ներկայացուցիչների համար, ինչի արդյունքում [www.facebook.com](http://www.facebook.com) կայքում բացվել է համապատասխան խումբ, որտեղ ներկայացվել են ծրագրերը, նորությունները: Տեղական ՅԿ-ները պահանջել են քաղաքում իրականացվող ծրագրերի նպատակների՝ քաղաքի կարիքներին համապատասխանեցում, ինչը ՏԻՄ ներկայացուցիչը չի խրախուսում, քանի որ, իր կարծիքով, իրենց իրավասությունների սահմաններում չէ թելադրել այլ ՅԿ-ներին կամ կազմակերպություններին, թե ինչը պետք է սահմանեն իրենց ծրագրի նպատակը: ՅԿ-ների մյուս պահանջն է եղել, որ քաղաքում իրականացվող յուրաքանչյուր ծրագրում տեղական երիտասարդությունը անմիջական ներգրավում ունենա: Ներկայումս ծրագիրն իրականացնողները մտածում են Մայրաքաղաքի ծրագրում նման պայման ավելացնելու ուղղությամբ:

**Ծրագրի ֆինանսավորումն ու ժամանակացույցը:** Ըստ ծրագրի կանոնակարգի 10.1 կետի՝ Մրցույթի անցկացման հետ կապված ծախսերի ֆինանսավորումն իրականացվում է Նախարարության միջոցների հաշվին, ըստ 10.2-ի՝ հայտում ներկայացված երեք մակարդակների միկրոծրագրերի ֆինանսավորումը Մրցույթի շրջանակներում իրականացվում է դիմորդ քաղաքների բյուջետային և ֆիզիկական ու իրավաբանական անձանց կողմից տրամադրված միջոցների հաշվին:

Երեք տարվա փորձը ցույց է տալիս, որ մարզային քաղաքներ ուղղվել են ոչ միայն պետական, այլև ՅԿ և միջազգային հատվածի միջոցներ:

Ընդհանուր առմամբ, 2013թ. Միսիանում ծրագրի իրականացման ժամանակ հատկացվել է 51 մլն. դրամ, որից 36.7 մլն.-ն՝ պետական բյուջեից: Ստեփանավան քաղաքում իրականացվել է շուրջ 50.2 մլն. դրամ, որից 42 մլն.-ն՝ պետական բյուջեից, և Գյումրի քաղաքում՝ ընդհանուր 75.3 մլն. դրամ, որից 59.7 մլն.-ն՝ պետական միջոցներով:

Ըստ Մայրաքաղաքի կանոնակարգի 6.1 կետի՝ Մրցույթն անցկացվում է ամեն տարի ողջ տարվա ընթացքում:

**Ծրագրի մոնիթորինգ և գնահատում:** 2013-2017թ. Ռազմավարությունը չի նախատեսել գնահատման ու մոնիթորինգի համակարգ, սակայն 2014 թվականին իրականացվել է ընդհանուր Առցանց դրամաշնորհային ծրագրերի գնահատում:

Բուն մայրաքաղաքի մասով Նախարարությունը և ՊՈԱԿ-ն աշխատանքներ տարել են միայն 2016թ. Գյումրիում ծրագրի իրականացման ժամանակ, քանի որ ունեցել են քաղաքի ՅԿ-ների կողմից իրականացվող երեք մակարդակի ծրագրերում դրամական ներդրումներ, ու այդ դրամական ներդրումների մասով ստացել են հաշվետվություններ՝ նկարագրողական և ֆինանսական բնույթի: Մայրաքաղաքում իրականացվող ծրագրերից ՍԵՅՆ-ի ու ԵՄԻԿ-ի համար վերահսկելի են եղել 1.1 գործակցով շահած դրամաշնորհային ծրագրերը: Միջազգային կառույցների, ՏԻՄ-երի, ՅԿ-ների և այլ գերատեսչությունների կողմից ֆինանսավորված ծրագրերի մասով հաշվետվությունները չեն ներկայացվում Սպորտի ու երիտասարդության հարցերի նախարարությանը:

Ծրագրի կայունություն և շարունակականություն

Համաձայն կանոնադրության 6.1 կետի, ծրագիրը իրականացվում է ամեն տարի: Ընդհանուր առմամբ, հատկանշական է, որ հետազոտության բոլոր մասնակիցները հայտնում են իրենց գոհունակությունը Մայրաքաղաքի հաջող իրականացման և ստացված արդյունքների վերաբերյալ: Բոլոր մասնակիցները գտնում էին, որ ծրագիրը պետք է շարունակական բնույթ կրի. գլոբալ փոփոխությունների պարագայում այն կարող է ընդլայնվել, սակայն ոչ կրճատվել կամ դադարեցվել:

*«Քանի մյուս քաղաքների մոտ կա հետաքրքրությունը ծրագրի նկատմամբ, քանի 3-4 հայտ տարեկան ունենք, ուրեմն պիտի շարունակվի, այս տարի միացել է Ջերմուկը, հետաքրքրություն կա Գավառի մոտ, գուցե միանա, հենց տեսնենք պասիվանում է, արդեն ուրիշ բան կարելի է մտածել, դեռ չենք ունեցել դեպք, որ նույն քաղաքը երկրորդ անգամ դիմի, կարող ենք ունենալ»,-* առանցքային տեղեկատուի հետ հարցազրույցից մեջբերում:

Այնուամենայնիվ, քանի որ հետազոտության շրջանակներում հանդիպումներ անցկացվել են միայն Մայրաքաղաք կարգավիճակ ստացած քաղաքների երիտասարդական ոլորտի ներկայացուցիչների հետ, ապա գնահատման արդյունքները հնարավորություն չեն տալիս պնդել, որ Հայաստանի բոլոր մարզային քաղաքները ծրագիրը արդյունավետ են համարում:

*Այսպիսով դիմելու ընթացակարգը դրական արձագանքներ է գտել շահած քաղաքների ՏԻՄ ներկայացուցիչների շրջանում, սակայն, քանի որ հետազոտության շրջանակներում չեն ուսումնասիրվել չշահած քաղաքները, գուցե կարիք կա վերջիններիս կարծիքները ևս ուսումնասիրել: Նախարարության հետ համագործակցու-*

թյունը ստացել է դրական արձագանքներ ևս:

Իրականացնողների կողմից ծրագրի ֆինանսական հաշվետվությունների ուշացում տեղի չի ունեցել, ծրագրային փոփոխությունների դեպք չի եղել:

Ձարգացած 34 դաշտը կարող է մոբիլիզացնել ուժերը քաղաքի երիտասարդության շահերի առաջադրման, ոլորտի ակտիվացման համար:

Մյուս կողմից, Կազմակերպիչ կողմը պատրաստ է գնալ երկխոսության: Այսինքն Հայաստանի երիտասարդական ոլորտում մի կողմից պահանջարկ է առաջանում հաշվետվողականության, թափանցիկության բարձրացման, մյուս կողմից կազմակերպող կողմը պատրաստ է այդ պայմաններն ապահովել:

Մայրաքաղաքը վերահսկելի է այնքանով, որքանով Նախարարությունը ֆինանսական ներդրումներ է ունեցել:

**Ծրագրի արդյունավետությունը, նախատեսվող փոփոխությունները**

Նախ պետք է նշենք, որ Ռազմավարությունն ի սկզբանե չի նախատեսել միջոցառումների գնահատման մեթոդաբանություն և գործիքներ, ինչի պատճառով յուրաքանչյուր միջոցառման գնահատման համար հիմք են ընդունվել միջոցառման հետ կապված փաստաթղթերը՝ կանոնադրություն, հրաման, հաշվետվություն, եզրակացություն առկայության դեպքում:

Ծրագրի արդյունավետությունը գնահատելու համար փորձենք հասկանալ, արդյոք ծրագիրը հասել է իր նպատակներին:

Ծրագրի կանոնադրության մեջ նպատակներից առաջինը սահմանվում է հետևյալ կերպ՝

**Ա) «Խթանել Հայաստանի Հանրապետության մարզերի համաչափ զարգացումը»:**

Հաշվի առնելով, որ Սպորտի ու երիտասարդության հարցերի նախարարությունը երիտասարդական ծրագրերը լիովին ուղղել է մարզեր, կարող ենք ասել, որ ծրագիրը ծառայում է նպատակին: Սակայն, քանի որ մի կողմից նպատակը լայն է սահմանված, մյուս կողմից բացակայում են նպատակին համապատասխան չափորոշիչներն ու ցուցիչները, հնարավոր չէ ասել, թե որքանով է ծրագիրը նպաստել մարզերի համաչափ զարգացմանը:

Հասկանալու համար, թե ինչպես է ծրագիրը նպաստել մարզերի համաչափ զարգացմանը, ուսումնասիրել ենք, թե ինչպես է ծրագիրը առնչվում Տարածքային համաչափ զարգացման ռազմավարության հիմնախնդիրներին<sup>6</sup>:

«344. Որպես տարածքային զարգացմանն ուղղված համալիր քաղաքականության իրականացման գործիքամիջոց կարող են հանդես գալ այդ նպատակին ծառայող հիմնադրամները, որոնք հիմնված կլինեն պետական, դոնորական ու մասնավոր հատվածի սերտ համագործակցության վրա: Մասնավորապես, միջնաժամկետ հեռանկարում նպատակահարմար է ձևավորել տարածքային զարգացման հիմնադրամ, որի միջոցով հնարավոր կլինի լուծել տարածքային զարգացման հետևյալ հիմնախնդիրները՝

1) նպաստել բնակչության նյութական և ոչ նյութական բարեկեցության և զբաղվածության աճին»,

Այս առումով Մայրաքաղաքը հնարավորություն է տալիս քաղաքի բնակիչների ոչ նյութական բարեկեցության զարգացմանը: Թեպետ «ոչ նյութական բարեկեցությունը» չի սահմանվում Կառավարության Ռազմավարության մեջ, այնուամենայնիվ ենթադրում ենք, որ դրա տակ նկատի պետք է ունենալ բնակիչների կենսապայմանները, որոնք նյութական հիմք չեն կրում, ինչպես, օրինակ, մշակութային, սոցիալական, քաղաքական կյանքում մասնակցությունը: Քանի որ մայրաքաղաքը ուղղված է երիտասարդների մասնակցության բարձրացմանը, և ծրագրի կազմակերպիչները բազմիցս նշում են, որ քաղաքներում երիտասարդությունը սկսում է հետաքրքրություն ցուցաբերել սեփական քաղաքի նկատմամբ, միջոցառումների ժամանակ տարբեր համայնքներից բնակիչներ են ժամանում, ուստի կարելի է ասել, որ Մայրաքաղաքը նպաստում է տվյալ հիմնախնդրի լուծմանը երիտասարդության հատվածում:

Քանի որ ծրագրերի հաշվետվությունների նկարագրողական հատվածներում բացակայել է ծրագրի մասնակիցների գրանցման նույնական համակարգ, ուստի դժվար է խոսել ծրագրերին երիտասարդների իրական մասնակցության մասին: Մոտավոր հաշվարկներով երեք տարիների ընթացքում մայրաքաղաքներում իրականացված ծրագրերին մասնակցություն են ունեցել շուրջ 2500 երիտասարդ:

6 <http://www.gov.am/files/docs/1322.pdf>, էջ 104:

2) «Նպաստել տարածքներում տնտեսական ու ներդրումային ակտիվության աճին և տարածքային «աճի բևեռների» ձևավորմանը»,

Յուրաքանչյուր քաղաք ծրագրի շրջանակում մուտք է գործում ավելի քան 50 մլն. դրամ՝ պետական, ՀԿ, միջազգային միջոցներ:

3) «բարելավել ու զարգացնել տարածքներում ենթակառուցվածքների և մատուցվող համայնքային ու հանրային ծառայությունների որակը, հասանելիությունն ու արդյունավետությունը»,

Քաղաքներում իրականացվող միջոցառումներն իրենք իրենցով ՏԻՄ-երի ու տեղական ՀԿ-ների համար առիթ են հանդիսանում սեփական քաղաքի հնարավորությունները գնահատելու համար:

Ծրագիրը նպաստում է քաղաքի ենթակառուցվածքային բնույթի հիմնախնդիրների բացահայտմանը: Ինչպես օրինակ՝ պարզվել է, որ Գյումրիում կազմակերպվող միջոցառումներին քաղաքի Անի և Մուշ թաղամասերի բնակիչները չեն մասնակցել երեկոյան ժամերին հասարակական տրանսպորտի բացակայության պատճառով: Խնդիրը լուծելու համար Մայրաքաղաքի շրջանակներում միջոցառումների օրերին քաղաքապետարանը երեկոյան ժամերին տրամադրել է անվճար հասարակական տրանսպորտ:

Սիսիան քաղաքում Մայրաքաղաքի շրջանակներում ձևավորվել են ՀԿ-ներ, իրականացվել են այդ ՀԿ-ների անձնակազմների կարողությունների զարգացման ծրագրեր:

4) «բարձրացնել տարածքային սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված պետական, դոնոր կազմակերպությունների և մասնավոր ներդրումների ու ծրագրերի նպատակայնությունն ու արդյունավետությունը»,

Հետազոտության մասնակիցների կարծիքով՝ Մայրաքաղաքն առավել արդյունավետ կազմակերպվում է այն ժամանակ, երբ տեղի է ունենում միևնույն տարվա ընթացքում տարբեր գերատեսչությունների, միջազգային հատվածի ծրագրերի իրականացում մեկ վայրում: Ուստի ծրագիրը ուղղված է տարածքային համաչափ զարգացման նշված հիմնախնդրի լուծմանը:

Ինչպես նշել է հետազոտության մասնակիցներից մեկը, Սիսիան քաղաքում ծրագրի իրականացման ժամանակ կայացել է տարբեր ՏԻՄ-երի, գերատեսչությունների հետ ակտիվ համագործակցություն, քանի որ 2014թ. փոխվարչապետը հանձնարարական է տվել ՏԻՄ-երին իրենց ծրագրերն ուղղել երիտասարդական մայրաքաղաք: Արդյունքում միևնույն տարվա ընթացքում Սիսիան քաղաք ուղղվել են ոչ միայն Սպորտի ու երիտասարդության հարցերի նախարարության կողմից իրականացվող ծրագրերը, այլև այնպիսի կառույցների, ինչպես օրինակ՝ Կրթության ու գիտության նախարարությունն է, կամ Մշակույթի նախարարությունը: Երիտասարդական մայրաքաղաք են ուղղվել նաև միջազգային ծրագրեր՝ ԱՊՀ երկրների խորհրդի նիստը, Արևելյան գործընկերության երկրների երիտասարդական քաղաքականության աջակցության ծրագրի ռեգիոնալ աշխատաժողովը:

5) «օժանդակել տարածքային կառավարման բարեփոխումների իրականացմանը, մասնավորապես միջհամայնքային համագործակցության ընդլայնմանը»,

Այս հիմնախնդրին համապատասխանում է Մայրաքաղաքի բ) նպատակը՝ «Ձարգացնել երիտասարդական նախաձեռնողականության, երիտասարդական քաղաքականության ոլորտում քաղաքների միջև բարեխիղճ և գործընկերային հարաբերությունները ինչպես տեղական և հանրապետական, այնպես էլ միջազգային մակարդակում», որի մասին կխոսենք համապատասխան նպատակին անդրադառնալիս:

6) «Նպաստել տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական ու ինստիտուցիոնալ կարողությունների հզորացմանը»,

Մրցույթին մասնակցությունը ինքնին ենթադրում է համապատասխան փաստաթղթերի ներկայացում և համայնքի ռեսուրսների մոբիլիզացում, ինչն արդեն իսկ հնարավորություն է տալիս քաղաքային իշխանություններին թարմ ծրագրի անհրաժեշտ մասով տեղեկացված լինել քաղաքի հնարավորություններին: Մյուս կողմից դիմում-հայտ լրացնելիս քաղաքային իշխանությունները և ՀԿ-ները համատեղ լրացման ժամանակ հնարավորություն են ունենում միմյանցից սովորելու:

Ծրագրի արդյունքում քաղաքապետարանը պետական աջակցություն է ստանում երեք մակարդակների ծրագրերի իրականացման համար:

7) «օժանդակել համայնքների ու տարածքների զարգացման համալիր ծրագրերի մշակմանը»:

Այս հիմնախնդրին համահունչ Մայրաքաղաքն ունի նպատակ՝ գ) «Խրախուսել Հայաստանի Հանրապետության քաղաքային իշխանություններին՝ տեսական մակարդակում մշակել երիտասարդական քաղաքականության իրականացման արդիական և արդյունավետ մոդել», որին կանդրադառնանք համապատասխան նպատակի վերլուծության ներքո:

Անդրադառնանք Մայրաքաղաքի կանոնակարգում նշված երկրորդ խնդրին՝

**Բ) «Ձարեցանք երիտասարդական նախաձեռնողականության, երիտասարդական քաղաքականության ոլորտում քաղաքների միջև բարեխիղճ և գործընկերային հարաբերությունները ինչպես տեղական և հանրապետական, այնպես էլ միջազգային մակարդակում:**

Գործընկերային հարաբերությունների հաջողված փորձ առանցքային տեղեկատուները համարում են, օրինակ, 2016թ. Ջերմուկի, Չարենցավանի և Ծաղկաձորի երիտասարդության համար իրականացված ծրագրի ընթացքում Ջերմուկի ու Չարենցավանի երիտասարդների համատեղ ծրագրի մշակումը, որն իրականացման ենթակա է 2017 թվականին: Ըստ հետազոտության մասնակիցների՝ հաջողված փորձ է Գյումրու ու Արցախի երիտասարդների համագործակցությունը Գյումրու «Մեկ բացիկ, մեկ տուն» ծրագրի շրջանակներում: Առանցքային տեղեկատուի խոսքերով՝ Մայրաքաղաքի ծրագրի շրջանակներում Արցախի երիտասարդական ՀԿ-ների ներկայացուցիչները գնել են շուրջ 100 բացիկ՝ խոստանալով վաճառել բացիկները Արցախում և ստացված միջոցները ուղարկել Գյումրի:

Չարենցավանի երիտասարդական ոլորտի ներկայացուցիչները դեռևս նոր պետք է պլանավորեն աշխատանքները համագործակցության առումով, սակայն ՀԿ ներկայացուցիչը կարծիք հայտնեց, որ նախընտրում է համագործակցության վրա ծախսվող գումարները ընդհանրապես ներդնել սեփական համայնքի զարգացմանը, քանի որ, ըստ իր կարծիքի, յուրաքանչյուր համայնք տարբերվում է, կարիքները տարբեր են: Անուամենայնիվ, ունեցել են համագործակցության փորձ Վրաստանի և Լեհաստանի հետ, ուստի Մայրաքաղաքը կարող է հարմար առիթ հանդիսանալ տեղի ՀԿ ներկայացուցիչների համար առանց լրացուցիչ ճանապարհածախսերի այլ քաղաքների, երկրների հետ համագործակցելու համար:

Գյումրու երիտասարդական ոլորտի ներկայացուցիչ խոսքերով՝ Մայրաքաղաքի շրջանակներում եղել է այլ երկրների մշակույթների հետ շփում, ինչի կարիքն, իր կարծիքով Գյումրիում միշտ կա:

*«Ամերիկացի դաշնակահարներ, իրանցի երգչուհիներ, իրենց արվեստը.. իրենք եկել են Գյումրի, Երևան, առաջարկել ենք Երևանից բացի նաև Գյումրիում ունենա համերգ, Ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակներում ֆրանսիացիներն են եկել, Եվրոպայի օրերին եվրոպացիներն են եկել տարբեր եվրոպական երկրներից, բայց միշտ դա պակաս է եղել»,-* առանցքային տեղեկատուի հետ հարցազրույցից մեջբերում:

Գյումրու ներկայացուցիչը նաև նշեց, որ Մայրաքաղաքի կարգավիճակը տարբեր տեղական ու միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության հնարավորությունն է:

*«Թունո կենտրոնը ոտք դրեց այս տարի Գյումրի, ու դա եղավ երիտասարդական մայրաքաղաք հռչակվելուց հետո»,-* առանցքային տեղեկատուի հետ հարցազրույցից մեջբերում:

Իհարկե չենք կարող պնդել, որ դա եղել է ծրագրի ազեցության արդյունքում, բայց կարող ենք փաստել, որ Մայրաքաղաքի ծրագրի ներդրումն է այն, որ խթանել է մայրաքաղաք հռչակված քաղաքում այլ դոմորների կողմից ծրագրեր իրականացնելուն:

**Գ) «Խրախուսել Հայաստանի Հանրապետության քաղաքային իշխանություններին՝ տեսական մակարդակում մշակել երիտասարդական քաղաքականության իրականացման արդիական և արդյունավետ մոդել»:**

Խոսելով տեղական երիտասարդական քաղաքականության մշակման մասին՝ պետք է նշել, որ այն կախված է առաջին հերթին քաղաքի երիտասարդական ոլորտի ներկայացուցիչների կամքից, դրդապատճառներից, ենթադրում է ինքնուրույն ֆոնդահայթայթում կամ ֆինանսավորում, և հետազոտության մասնակիցների խոսքերով՝ որևէ տեղ գրավոր արձանագրություն չկա այն մասին, որ այդ գործընթացում քաղաքականության մշակողները հաշվետու են ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը:

2016թ. երիտասարդական մայրաքաղաք ծրագրի իրականացման ժամանակ, ինչպես նշում է առանցքային տեղեկատուն, երիտասարդական ՀԿ ներկայացուցիչները որոշեցին, որ Գյումրի քաղաքը, լինելով երիտա-



սարդության թվով երկրորդ կենտրոնը Հայաստանում, կարիք ունի տեղական երիտասարդական քաղաքականության, որը մշակելու համար ՀԿ-ների կողմից իրականացվել է միջազգային դոնոր կազմակերպությունների միջոցների ներգրավում:

Տեղական քաղաքականության մշակման Գյումրու փորձը ցույց է տալիս, որ զարգացած ՀԿ դաշտը հնարավորություններ է ստեղծում քաղաքում գործնական փոփոխությունների՝ միաժամանակ մոբիլիզացնելով ՏԻՄ, Նախարարության, ՀԿ դաշտի ու միջազգային դոնորների մասկացությունը, ներդրումները և ռեսուրսները:

Թեպետ կանոնակարգի նպատակներից է հանդիսանում տեղական երիտասարդական քաղաքականությունների մշակման խթանումը, այնուամենայնիվ, ինչպես նշում են ծրագրի կազմակերպիչները, ծրագիրը թիրախավորում է քաղաքի ՏԻՄ ներկայացուցիչների կողմից նշված նպատակները: Օրինակ՝ Սիսիանի և Ստեփանավանի դեպքում ՏԻՄ ներկայացուցիչները ցանկություն չեն հայտնել տեղական երիտասարդական քաղաքականություն մշակել, այնինչ Գյումրիում ՀԿ ոլորտն ինքն է սկսել աշխատանքներ նախաձեռնել այդ ուղղությամբ: Արդյունքում մշակվել են հետևյալ փաստաթղթերը՝ «Գյումրու երիտասարդական քաղաքականության հայեցակարգ», «Գյումրու երիտասարդական քաղաքականության ռազմավարություն», «Գյումրու երիտասարդական քաղաքականության գործողությունների ծրագիր»: Մշակված փաստաթղթերի նախագծերն ուղարկվել են ՍԵՀՆ փորձագիտական կարծիք ստանալու համար, սակայն, ինչպես նշում են առանցքային տեղեկատուները, որևէ տեղ ամրագրված չէ, որ Նախարարության կարծիքը պետք է հաշվի առնվի. դա հանդիսանում է քաղաքային իշխանությունների, ավագանու տնօրինության տակ գտնվող հարց: Նշենք նաև, որ այդ փաստաթղթերի մշակման համար ՍԵՀՆ դրամաշնորհ է տրամադրել տեղական ՀԿ-ին: Գյումրիում տեղական երիտասարդական քաղաքականությանը վերաբերող փաստաթղթերը մշակվել են տեղական երիտասարդների շրջանում կարիքների գնահատման հետազոտության արդյունքների հիման վրա, մշակման աշխատանքներում մասնակցել են նաև քաղաքապետարանի ներկայացուցիչները:

Քանի որ Գյումրիում քաղաքականությունը նոր է մշակվել, չկան քաղաքականության իրականացման շոշափելի արդյունքներ: Չարեցավանի երիտասարդական ոլորտի ներկայացուցիչները ընդհանրապես տեղեկացված չէին տեղական քաղաքականության մշակման հանգամանքի մասին:

#### **Դ) Նպաստել մարզերում երիտասարդական կազմակերպությունների և ենթակառույցների զարգացմանը:**

Առանցքային տեղեկատուները նշում են, որ քաղաքում ծրագրեր իրականացնելը ենթակառույցների անուղղակի զարգացմանն է տանում, նրանց խոսքերով, օրինակ, եթե հյուրանոցում իրականացվում է միջոցառում, դրա համար հյուրանոցին վճարում են, կամ թե օտարերկրյա քաղաքացիներ են մասնակցում ծրագրերին, քաղաքում գումար են ծախսում, հուշանվերներ են գնում և այլն:

Մայրաքաղաքի երեք տարիների ընթացքում իրականացվել են առավելապես երիտասարդական ՀԿ դաշտի զարգացմանն ուղղված աշխատանքներ, որոնք ուղղեցվել են համայնքներում ՀԿ-ների ստեղծմամբ, առկա ՀԿ-ների վերապատրաստումներով և դրամաշնորհների տրամադրմամբ:

Ոլորտի ներկայացուցիչները Մայրաքաղաքի ծրագրի անմիջական նպատակ էին համարում երիտասարդական կազմակերպությունների զարգացումը, ինչի ներքո հասկանում էին համայնքում անհրաժեշտության դեպքում երիտասարդներին դրդել ՀԿ ստեղծելու, վերապատրաստումների միջոցով դրամաշնորհներ շահելու գործնական գիտելիքների, Առցանց դրամաշնորհային համակարգից օգտվելու հմտությունների, ինչպես նաև ուղղակիորեն դրամաշնորհների տրամադրում: Օրինակ՝ Սիսիան քաղաքում Մայրաքաղաքի շրջանակներում բացվել են երիտասարդական հասարակական կազմակերպություններ: Քաղաքի ՀԿ-ները ստացել են դրամաշնորհներ: 2014թ.-ին Սիսիանի ՀԿ-ները ստացել են ընդհանուր թվով 9 դրամաշնորհ, 2015թ. Ստեփանավանի ՀԿ-ները՝ 12, իսկ 2016թ. Գյումրու հասարակական կազմակերպությունները շահել են 14 դրամաշնորհ:

Մայրաքաղաքի շրջանակներում երիտասարդական ոլորտի ներկայացուցիչների համար իրականացվել են ֆոնդահայթայթման, իրազեկվածության բարձրացման, կարողությունների զարգացման դասընթացներ, երիտասարդական աշխատողների վերապատրաստում:

Առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցները ցույց են տալիս, որ մայրաքաղաքը նպաստում է քաղաքում երիտասարդների ակտիվացմանը, բազմաբնույթ միջոցառումներին մասնակցության բարձրացմանը, սակայն, քանի որ հաշվետվությունները տարբեր հիմքերով են մասնակցություն ցույց տվել, հնարավոր չէ ճշգրիտ պատկերացում կազմել երիտասարդական աշխատանքներին երիտասարդների իրական մասնակցու-

թյան ձևերի և քանակի մասին:

Մայրաքաղաքը նպաստում է քաղաք մուտք գործող ֆինանսական միջոցների մեծացմանը, ինչպես նաև հնարավորություն է տալիս բացահայտելու քաղաքի ենթակառուցվածքի առավելություններն ու թերությունները: Ծրագիրը նպաստում է քաղաքի ՅԿ դաշտի զարգացմանը, ինչպես նաև թույլ է տալիս բացահայտել ենթակառուցվածքների խնդիրները:

Ծրագիրն ունի շոշափելի արդյունքներ ՅԿ-ների միջև համագործակցության բարձրացման հարցում, սակայն քաղաքների միջև համագործակցության օրինակներն աչքի չեն ընկնում:

Մայրաքաղաքի շրջանակներում եղել է տեղական քաղաքականության մշակման դեպք տեղական ՅԿ-ների նախաձեռնությամբ:

Կառավարության Ռազմավարության Տարածքային համաչափ զարգացման հիմնախնդիրների հետ Մայրաքաղաքի նպատակների համեմատությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ծրագիրը համահունչ է այդ խնդիրներին և որդեգրել է համաչափ զարգացման մոտեցում:

### **Ծրագրի համապատասխանությունը Ռազմավարության նպատակին և գերակայություններին**

Ծրագրի համապատասխանությունը Ռազմավարության նպատակին: «9. Ռազմավարության նպատակն է բարձրացնել երիտասարդների քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին **մասնակցության աստիճանը**, փաստարկված և իրատեսական լուծումներ առաջարկել երիտասարդների զբաղվածության, սոցիալ-տնտեսական խնդիրների հաղթահարման ուղղությամբ, խթանել առողջ ապրելակերպը, նպաստել հոգևոր-մշակութային արժեքների զարգացմանը և ռազմահայրենասիրական դաստիարակությանը, ինչպես նաև **ապահովել** կրթության շարունակականությունը և ոչ ֆորմալ կրթության ծանաչելիությունը: Սույն ռազմավարության մեջ երիտասարդությունն անմիջական շահառու է և ծավալվող գործընթացներում իր ավանդը ներդրող կարևոր մասնակից»:

Բուն Մայրաքաղաքի ծրագիրը նշված նպատակին ուղղված է իր դրույթերով, ինչպես օրինակ՝ դրույթ 1.1-ը սահմանում է, որ ծրագրի շրջանակներում Մայրաքաղաք հռչակված քաղաքը հնարավորություն է ստանում այդ մեկ տարվա ընթացքում իրականացնելու երիտասարդների սոցիալական, տնտեսական, քաղաքական, մշակութային, մարզական ակտիվությանը նպաստող ծրագրեր: Այսինքն, եթե քաղաքը, օգտվելով իր հնարավորություններից, ծրագրեր իրականացնի նշված ոլորտներում, դրանով իսկ կապահովի առնվազն տեղական երիտասարդների մասնակցության աստիճանի բարձրացումը:

Ռազմավարության նպատակի մյուս հատվածներին կարող են ուղղված լինել Մայրաքաղաքի շրջանակներում իրականացված ծրագրերը և հենց Մայրաքաղաքի կարգավիճակը: Օրինակ, ինչպես Գյումրու դեպքում, քաղաքը դառնում է գրավիչ արտաքին տնտեսական ու կրթական միջավայրի համար, առողջ ապրելակերպին ուղղված՝ իրականացվում են բազմաթիվ սպորտային միջոցառումներ: Կրթության շարունակականության ուղղությամբ իրականացվում են երիտասարդական ոլորտի ներկայացուցիչների համար կարողությունների զարգացման դասընթացներ:

Ինչ վերաբերում է նպատակի այն հատվածին, որ երիտասարդությունը հանդիսանում է Ռազմավարության անմիջական շահառու, անհրաժեշտ է նշել, որ Մայրաքաղաքի շրջանակներում Նախարարությունը աշխատում է անմիջականորեն ՏԻՄ և երիտասարդական կազմակերպությունների հետ: Մայրաքաղաքի շրջանակներում անմիջականորեն երիտասարդների ներգրավումը տեղի է ունենում ՅԿ-ների կողմից իրականացվող ծրագրերի միջոցառումներում մասնակցության տեսքով: Ըստ Մայրաքաղաքի կանոնակարգի<sup>7</sup> Մրցույթի ժամանակ հաշվի է առնվում ե) կետով՝ մարզի և քաղաքի հասարակական կյանքում երիտասարդական կազմակերպությունների և նախաձեռնությունների ներգրավվածությունը, ը) կետով՝ տեղական ինքնակառավարման մարմիններում երիտասարդների ներգրավվածության աստիճանը:

Ընդ որում հատկանշական է, որ Գյումրիում, առանցքային տեղեկատուի խոսքերով, Մայրաքաղաքի շրջանակներում երիտասարդների շրջանում ձևավորվել է կամավորության մշակույթը:

**Ծրագրի համապատասխանությունը գերակայությանը:** Ռազմավարության շրջանակներում գնումներով իրականացված և դրամաշնորհային ծրագրերի հասանելի հաշվետվությունների ուսումնասիրության ու հա-

7 «8. Դիմումների գնահատում» բաժին:

մադրության հիման վրա իրականացվել է ծրագրերի մոնիթորինգ, որի արդյունքների միջոցով փորձենք հասկանալ ծրագրերի՝ գերակայությունների և միջոցառումների միջև բաշխման ընդհանուր միտումները:

2014-2015 թթ. ընթացքում Ռազմավարության միջոցառումների շրջանակներում 34-ների կողմից իրականացվել է 175 ծրագիր առցանց դրամաշնորհային համակարգի միջոցով, որոնցից 52-ը՝ Երիտասարդական մայրաքաղաք հռչակված քաղաքներում համապատասխան տարիներին:

**Աղյուսակ 13. 2014-2015թթ. ընթացքում իրականացված ծրագրերը**

		Սիսիան	Ստեփանավան	Գյումրի	Այլ վայրեր	Ընդամենը
Տարի	2014	13	1	5	29	48
	2015	0	20	3	31	54
	2016	2	0	19	18	39
Ընդամենը		15	21	27	112	175

Առանձին դիտարկենք, թե այդ ծրագրերը Ռազմավարության որ գերակայությամբ են համապատասխանել: Հարկ է նշել, որ եղել են ծրագրեր, որոնք միաժամանակ մի քանի գերակայության են ուղղված եղել: Այդ պատճառով տորև ներքայացվող աղյուսակում նշված է դեպքերի և ծրագրերի գումարը առանձին առանձին: Առավել մեծ թվով ծրագրեր ուղղված են եղել առաջին գերակայությանը՝ թվով 32 ծրագիր, ընդհանուրի 62%-ը: Առավել քիչ թվով ծրագրեր իրականացվել է ուղղված հինգերորդ գերակայությանը՝ 5, ինչը կազմում է ընդհանուր ծրագրերի 10%-ը միայն:

**Աղյուսակ 14. Յուրաքանչյուր գերակայությանն ուղղված ծրագրերի բաշխումն՝ ըստ մայրաքաղաքների**

	Դեպքերի քանակ				Ընդամենը
	Սիսիան	Ստեփանավան	Գյումրի	Ընդամենը	%
Գերակայություն 1. Քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության գործընթացների խթանում	5	10	17	32	61.5
Գերակայություն 2. Երիտասարդների սոցիալ-տնտեսական և զբաղվածության հիմնախնդիրներ	1	6	3	10	19.2
Գերակայություն 3. Երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի խթանում	4	3	1	8	15.4
Գերակայություն 4. Երիտասարդների հոգևոր-մշակութային արժեքների զարգացում և ռազմախայրենասիրական դաստիարակություն	2	6	3	11	21.2
Գերակայություն 5. Կրթության շարունակականությունը և ոչ ֆորմալ կրթության ճանաչելիությունը	3	0	2	5	9.6
<b>Ընդամենը դեպքերի քանակ</b>	15	25	26	66	126.9
<b>Ընդամենը ծրագրերի քանակ</b>	13	20	19	52	100

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ Մայրաքաղաքը համապատասխանում է Ռազմավարության նպատակներին և որոշ չափով ծածկում է Ռազմավարության միջոցառումներն իր իրականացրած ծրագրերով, ուստի Ռազմավարության միջոցառումների իրականացման տեսանկյունից Մայրաքաղաքը կրում է կարևոր դերակատարում:

Երիտասարդական մայրաքաղաքն ունի իր կանոնադրությունը, իրականացվում է որպես ծրագիր, սակայն երիտասարդական մայրաքաղաքի ամփոփ տվյալների հավաքագրում չի իրականացվում, և Նախարարության հաշվետվություններում հիշատակվում են միայն Մայրաքաղաքի մրցույթի կազմակերպման, հաղթողի ճանաչման, բացման-փակման արարողություններին ուղղված ծրագրեր, սակայն հաշվետվություն այն մասին, թե հենց երիտասարդական մայրաքաղաքի շրջանակներում կոնկրետ քաղաքում որ ծրագրերն են իրականացվում:

վել, ինչ արդյունք է եղել, քանի երիտասարդ է ներգրավված եղել, որպես այդպիսին չի կազմվում, ինչը խոչընդոտում է ծրագրի իրական ազդեցության գնահատմանը:

## Առաջարկություններ

Հիմնվելով ծրագրի գնահատման արդյունքների, ոլորտի ներկայացուցիչների ներկայացրած կարծիքների վրա՝ ուղղված Մայրաքաղաք ծրագրի հետագա բարելավմանը, առաջարկում ենք՝

- Կանոնադրության մեջ ավելացնել և մանրամասն նկարագրել ծրագրի ընթացքում հաշվետվողականության ու թափանցիկության ապահովման մեխանիզմները,
- Ուսումնասիրել քաղաքում իրականացվող ծրագրերի՝ քաղաքի կարիքներին համապատասխանելու հնարավորությունները և հեռանկարները,
- Ապահովել ծրագրի իրականացման շրջանակներում միջգերատեսչական համագործակցություն, ինչը թույլ կտա ունենալ միևնույն խնդրին ուղղված ծրագրերի համագործակցության հնարավորություն, միևնույն քաղաքում իրականացվող ծրագրերի տվյալների փոխանակման տիրույթ,
- Քանի որ ծրագիրն իր նպատակներով ու կատարած աշխատանքներով համապատասխանում է տարածքային համաչափ զարգացման խնդիրներին, կարիք կա միջգերատեսչական համագործակցության կամ ծրագրի՝ ավելի օպերացիոնալ վերամշակման,
- Թեպետ յուրաքանչյուր քաղաքի դեպքում ցուցաբերվում է անհատական մոտեցում, այնուամենայնիվ, բացի ֆինանսական չափանիշների բավարարումից, անհրաժեշտ է նաև ունենալ ծրագրային բնութագրիչների և ցուցիչների համախումբ,
- Անհրաժեշտ է սահմանել ընդհանուր ծրագրի մոնիթորինգի պլան, հաշվետվության ձևաչափ՝ հիմնվելով առանձին ծրագրերի հաշվետվությունների վրա, ինչը թույլ կտա ընթացիկ և վերջնական մոնիթորինգ իրականացնել,
- Ինչպես նաև անհրաժեշտ է ծրագրային հաշվետվությունների հանձնման ձևաչափը վերամշակել՝ այն դարձնելով առավել մանրամասն, որտեղ ներկայացված կլինեն ծրագրի բոլոր բաղադրիչները՝ իրենց ցուցիչներով<sup>8</sup>:

## 2. «Երիտասարդ ընտանիքին՝ ճատչելի բնակարան» ղետական նդատակային ծրագրի դայնանների բարելավման նդատակով առաջարկություններ ՀՀ կառավարություն ներկայացնելը» ծրագրի գնահատում

### Ծրագրի նկարագիր

#### Գործողության հակիրճ նկարագիր, նպատակն ու խնդիրները

Մշտապես գործող ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի 2013 թվականի նոյեմբերի 21-ի № 23.16/ [178214]-13 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի № 98-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի քննարկման հարցը հետաձգվել է և առաջարկվել է ՀՀ կենտրոնական բանկի նախագահին քննարկել հիփոթեքային վարկավորման ծրագրերի («Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի և «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի կողմից իրականացվող ծրագրեր) հայեցակարգային մոտեցումները, դրանց շրջանակներում վարվող քաղաքականության միասնականացման և 2 ընկերությունների միացման հարցն ու համապատասխան առաջարկները ներկայացնել ՀՀ վարչապետին:

Նպատակն է եղել երիտասարդ ընտանիքներին բնակարաններով ապահովելու ծրագրի պայմանների բարելավումը:

#### Գործողություն իրականացնողները՝

8 ԵՈՒԻ-ի կողմից մշակվել է ծրագրերի մոնիթորինգի բազա՝ առաջարկվող ցուցիչներով, որը կարելի է կիրառել հետագայում:

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ԵՄԻԿ (համաձայնությանը), պետական կառավարման մարմիններ:

**Ընտրված միավորի տեսակ՝** ծրագրի մշակում

**Իրականացման ժամկետներ՝** 2014-2017 թթ.

**Գործողության թիրախը՝** ՀՀ երիտասարդ ընտանիքներ

**Գործողության արդյունքներ:** Իրականացվել են ծրագրի պայմանների փոփոխություն. տարիքային շեմը ընդհանուր 60-ից բարձրացել է 65, սուբսիդավորվող գումարը՝ 11.2 մլն.-ից դարձավ 17.5 մլն. դրամ, բնակարանի առավելագույն արժեքը՝ 25 մլն. դրամ:

Ծրագրի գնահատման մեթոդաբանությունը

Նպատակ: Գնահատել իրականացված գործողության արդյունավետությունը և պարզել միջոցառումների համապատասխանությունը Ռազմավարական նպատակներին:

Գործողության գնահատման ընթացքում նախատեսվում է պատասխանել հետևյալ հարցերին՝

1. Որո՞նք են եղել գործողության սկզբնական նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքը կազմակերպչի ու իրականացնող(ներ)ի կողմից,
2. Որքանո՞վ է գործողությունն իր նպատակով, խնդիրներով, ակնկալվող արդյունքով համապատասխանում Ռազմավարության նպատակին,
3. Որքանով է առնչվում Ռազմավարության համապատասխան գերակայությանը, որի ներքո նախատեսված է եղել իրականացնել,
4. Ի՞նչ հիմնական խոչընդոտներ են հանդիպել գործողության իրականացման ժամանակ,
5. Արդյո՞ք եղել են փոփոխություններ՝ նախատեսված գործողությունների կատարման ժամանակ, ինչպե՞ս են դրանք կատարվել,
6. Որքանո՞վ է գործողությունը հաջողվել՝ նախատեսված խնդիրների իրականացման հարցում:
7. Արդյո՞ք նախատեսված խնդիրները թույլ են տվել հասնել ցանկալի արդյունքին,
8. Հաշվի առնելով գործողության ներկայիս արդյունքը՝ գործողության շարունակության դեպքում ի՞նչ փոփոխություններ են նախատեսվում: Եթե այդպիսիք կան, ինչպե՞ս են դրանք իրականացվելու,

Նպատակներին հասնելու համար կիրառվել են տեղեկատվության ստացման հետևյալ մեթոդները՝

- առանցքային տեղեկատվի հետ անհատական հարցազրույց,
- փաստաթղթերի ուսումնասիրություն՝
  - o Հայաստանի հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N98 որոշում,
  - o Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 10-ի N1470 որոշում,
  - o «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

**Ծրագրի արդյունավետության գնահատում**

Սկզբնական նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքը՝ ըստ գործողությունն իրականացնողների

Հայաստանի հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N98 որոշմամբ հաստատվեց «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիրը, որը «նպատակաուղղված է իրավական, ֆինանսական և կազմակերպչական համապատասխան մեխանիզմների ներդրման միջոցով բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող երիտասարդ ընտանիքներին պետական աջակցության տրամադրմանը»<sup>9</sup>:

Համաձայն միևնույն փաստաթղթի՝ «ծրագրում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստները՝

9 <http://www.minsportyouth.am/files/post/1457767346-98-N.pdf>, էջ 2:

- 1) երիտասարդ՝ Հայաստանի Հանրապետության 18-30 (ներառյալ) տարեկան քաղաքացիները,
- 2) երիտասարդ ընտանիք՝ ընտանիք, որտեղ ամուսիններից առնվազն մեկը երիտասարդ է, կամ երեխա ունեցող միայնակ ծնող, որի տարիքը չի գերազանցում 30-ը (ներառյալ),
- 3) պետական աջակցություն՝ ծրագրի շրջանակներում շահառուներին տրամադրվող ֆինանսական աջակցություն,
- 4) շահառու՝ ծրագրին մասնակցելու իրավունք ստացած երիտասարդ ընտանիք:

Ծրագրի շահառու կարող են լինել այն երիտասարդ ընտանիքները, որտեղ ամուսինների գումարային տարիքը չի գերազանցում 60-ը, և միևնույն ժամանակ ընտանիքի անդամներից ոչ մեկի տարիքը չի գերազանցում 35-ը (ներառյալ) կամ երեխա ունեցող միայնակ ծնող, որի տարիքը չի գերազանցում 30-ը (ներառյալ)»:

«Ծրագրի նպատակը երիտասարդ ընտանիքների բնակարանային (բնակելի տան) խնդիրների հաղթահարման ուղղությամբ պետական աջակցության արդյունավետ համակարգի ներդրումն է»:

Ծրագրի տեսլականն է եղել «Ծրագրի իրականացումը կնպաստի երկրում ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը, արտագաղթի նվազմանը, ներքին միգրացիոն հոսքերի կառավարմանը, հիփոթեքային վարկավորման համակարգի զարգացմանը: Միևնույն ժամանակ ծրագիրը խթան կհանդիսանա բնակարանային շինարարության և լրացուցիչ աշխատատեղերի ստեղծման համար»:

### **Գործողության իրականացման ընթացքը**

**Հայաստանի հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N98 որոշմամբ<sup>10</sup> երիտասարդներին բնակարանային պայմանների բարելավման օժանդակությունը նախատեսված է եղել տրամադրել հետևյալ «պայմաններով»**

- 1) հիփոթեքային վարկը տրամադրվելու է առնվազն 10 տարի մարման ժամկետով, 10.5-11 տոկոսով, որից 2 տոկոսը կսուբսիդավորի պետությունը (այսինքն՝ վարկառուի համար վարկի տոկոսը կլինի 8,5 -9 տոկոս),
- 2) բնակարանի գինը Երևանում և Հայաստանի Հանրապետության մարզերում չի կարող գերազանցել 16 մլն. դրամը: Թե՛ Երևանի, թե՛ մարզերի համար կանխավճարը կազմելու է բնակարանի արժեքի առնվազն 30 տոկոսը»:

**Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 10-ի N1470 որոշման<sup>11</sup> մեջ արդեն նշվում են մի շարք փոփոխություններ, որոնցից մասնավորապես հարկ ենք համարում առանձնացնել՝**

«բ. հինգերորդ պարբերության 1-ին կետը «կլինի 8.5-9 տոկոս» բառերից հետո լրացնել «իսկ Հայաստանի Հանրապետության մարզերում տրամադրված հիփոթեքային վարկերի համար պետությունը կսուբսիդավորի 4 տոկոսը (այսինքն՝ Հայաստանի Հանրապետության մարզերում վարկառուի համար վարկի տոկոսը կլինի 6.5-7 տոկոս)», որով մարզերում սուբսիդավորվող մասը կազմում է 2%-ի փոխարեն 4%:

«3) Հայաստանի Հանրապետության մարզերում տրամադրված հիփոթեքային վարկերի կանխավճարը կարող է կազմել ձեռքբերվող բնակելի տան կամ բնակարանի արժեքի առնվազն 10 տոկոսը»՝ համապատասխան պայմանների ապահովման դեպքում:

Համաձայն «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի վերաբերյալ ամփոփ տեղեկատվության<sup>12</sup>՝ տարբեր տարիներին վերաֆինանսավորումները իրականացվել են հետևյալ ծավալներով (ամեն տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ)

10 Նույնը, էջ 6:

11 <http://www.minsportyouth.am/files/post/1457767777-1470verchnakan.pdf>

12 <http://www.minsportyouth.am/files/post/1457764986-texekativ-matcheli.pdf>

**Աղյուսակ 15. «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի շրջանակներում իրականացված պետական ֆինանսավորման բաշխումը**

Տարի	Վարկերի քանակ	Ծավալ (մլրդ. ՀՀ դրամ)	որոնցից՝ Երևանում		որոնցից՝ մարզերում	
			Վարկերի քանակ	Ծավալ (մլրդ. ՀՀ դրամ)	Վարկերի քանակ	Ծավալ (մլրդ. ՀՀ դրամ)
2010	223	1.789	147	1.383 մլրդ.	76	0.406
2011	642	4.868	346	3.160	296	1.708
2012	1011	7.599	507	4.607	504	2.992
2013	1336	10.025	647	5.876	689	4.149
2014	1706	12.796	825	7.526	881	5.270
2015	1978	14.815	937	8.555	1041	6.260
2016	2022	15.128	958	8.742	1064	6.386

Նույն փաստաթղթում նշվում է՝ «Ծրագրի պայմանների բարելավման նպատակով Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը 2013 թվականին մշակել, շահագրգիռ մարմինների հետ քննարկել և ՀՀ կառավարություն է երկայացրել Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի № 98-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը: Առաջարկվել է վերանայել երիտասարդ ընտանիքի գումարային տարիքի սահմանափակումը՝ 60-ից բարձրացնելով մինչև 65 տարեկան միևնույն ժամանակ վերին տարիքային շեմը թողնելով անփոփոխ՝ 35 տարեկան, և վերանայել ձեռքբերվող բնակարանի առավելագույն արժեքը՝ 16 մլն. ՀՀ դրամից այն դարձնելով 18 մլն. ՀՀ դրամ:

Մշտապես գործող ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի 2013 թվականի նոյեմբերի 21-ի □ 23.16/ [178214]-13 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի № 98-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի քննարկման հարցը հետաձգվել է, և առաջարկվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահին քննարկել հիփոթեքային վարկավորման ծրագրերի («Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ» ՓԲԸ-ին «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ» ՓԲԸ<sup>13</sup>-ի կողմից իրականացվող ծրագրերի) հայեցակարգային մոտեցումները, դրանց շրջանակներում վարվող քաղաքականության միասնականացման և 2 ընկերությունների միացման հարցն ու համապատասխան առաջարկները ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետին»:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 17-ի N303-Ն<sup>14</sup> որոշման համաձայն՝ որոշակի փոփոխություններ են իրականացվել «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի մեջ, մասնավորապես հարկ ենք համարում հիշատակել հետևյալները՝

«1) I բաժնի 2-րդ պարբերության՝

ա. 1-ին կետում «18-30» թվերը փոխարինել «18-35» թվերով,

բ. 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Երիտասարդ ընտանիք»** ընտանիք, որտեղ ամուսինները երիտասարդ են, և վերջիններիս տարիքների գումարը չի գերազանցում 65-ը, կամ երեխա ունեցող երիտասարդ միայնակ ծնող»,

2) IV բաժնի՝


ա. 3-րդ պարբերությունում «16.000.000» թիվը փոխարինել «25.000.000» թվով,

բ. 4-րդ պարբերության 3-րդ կետի «ա» ենթակետում «11.200.000» թիվը փոխարինել «17.500.000» թվով»:

13 «Բնակարան երիտասարդներին» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից 2010 թվականի փետրվարին՝ որպես ունիվերսալ վարկային կազմակերպություն: Այն վերափոխվել է վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպության ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի 2011թ.-ի դեկտեմբերի 15-ի թիվ 1/1410 Ա որոշմամբ: [http://www.hfyouth.am/am/about\\_us.html](http://www.hfyouth.am/am/about_us.html)

14 <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=104604>

Առանցքային տեղեկատուին պատմում է, որ «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» ծրագրում անհրաժեշտություն է առաջացել փոփոխություն իրականացնելու երկու հիմնական պատճառով՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը բազմաթիվ զանգեր է ստացել երիտասարդ ընտանիքներից պայմանների բարելավման հարցով, մյուս կողմից վերլուծությունները ցույց են տվել, որ ծրագրի պահանջարկը նվազել է, ինչի մասին վկայում է ստորև ներկայացված գծապատկերը<sup>15</sup>:



**Գծապատկեր 3. Վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի պորտֆելի կառուցվածքն՝ ըստ ամիսների**

Գծապատկերից տեսնում ենք, որ ծրագիրը, մեկնարկելով 2010թ.-ին, իր առաջին կտրուկ աճն ունեցել է 2011թ. մարտ ամսին՝ ունենալով 59 վերաֆինանսավորում՝ 429.9 մլն. ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, ինչից հետո հետաքրքրությունն իջել է, և ունեցել է տատանումներ՝ 43 վերաֆինանսավորում (337.1 մլն. ՀՀ դրամ) առավելագույն վերին սահմանով: Այնուհետև տեսնում ենք, որ պատկերը կտրուկ փոխվում է 2016թ. հուլիս ամսվանից՝ ունենալով 63 վերաֆինանսավորում 593.76 մլն. ՀՀ դրամ ծավալով:

Հաշվի առնելով, որ տարիների կտրվածքով հետաքրքրությունը ծրագրի նկատմամբ աճել է, ինչը արտահայտվում է ամեն տարի տրամադրված վարկերի քանակի մեծացմամբ, կարող ենք ասել, որ ծրագիրը ծառայում է իր նպատակին՝ 2016թ.-ի դեկտեմբերի 31-ի տվյալներով՝ 8918 երիտասարդ ընտանիքի աջակցած լինելով, որոնցից 4367-ը՝ Երևանում և 4551-ը՝ ՀՀ մարզերում:

2016թվականին ծրագրի նկատմամբ հետաքրքրության աճը ցույց է տալիս, որ ծրագրում իրականացված փոփոխությունները ծառայել են իրենց նպատակին:

Առանցքային տեղեկատուի հետ հարցազրույցից պարզ դարձավ, որ փոփոխությունների կարիքը հիմնավորվել է երկու պատճառով՝ վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպության վարած վիճակագրության համաձայն՝ նկատվել է ծրագրի նկատմամբ հետաքրքրության անկում, մյուս կողմից ՍԵՀՆ-ը ստացել է բազմաթիվ զանգեր երիտասարդ ընտանիքներից՝ համապատասխան փոփոխությունների իրականացման առաջարկով:

Այնուամենայնիվ, Աղյուսակ 15-ը ցույց է տալիս, որ ծրագրի նկատմամբ հետաքրքրությունը տարեցտարի աճել է:

**Նմանատիպ գործողությունների իրականացման ընթացակարգը**

Ինչպես պարզ դարձավ առանցքային տեղեկատուի հետ հարցազրույցից, փոփոխությունները հիմնված են եղել վիճակագրության ուսումնասիրման և շահառուների շրջանում առկա դժգոհությունների վրա, սակայն փոփոխությունների առաջարկի մշակմանը շահառուները անմիջական մասնակցություն չեն ունեցել: Գործընթացում ներգրավված են եղել պատասխանատու կառույցները: Ներգրավված չեն եղել նաև մասնավոր և ՀԿ ոլորտների ներկայացուցիչները, ինչը ցույց է տալիս, որ տվյալ գործողությունը մասնակցության ապահովում չի ենթադրում:

15 «Բնակարան երիտասարդներին» պաշտոնական կայքի վերլուծությունների բաժին: <http://www.hfyouth.am/am/analytics.html>



## Ծրագրի ֆինանսավորում

Ընդհանուր առմամբ, երիտասարդության ոլորտի համար նախատեսված բյուջեն<sup>16</sup> տարվա կտրվածքով կազմում է շուրջ 827.1 մլն. դրամ, որից 457.3 մլն. տրամադրվում է ֆինանսների նախարարությանը՝ որպես «Երիտասարդ ընտանիքին մատչելի բնակարան» ծրագրի համաֆինանսավորող, 8 մլն.՝ երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարին, 92 մլն.՝ «Արի տուն» ծրագրի շրջանակներում Սփյուռքի երիտասարդության Չայաստան ճանաչողական այցելություններին, 12 մլն.՝ Չայաստանում ինտելեկտուալ խաղերի զարգացման աջակցության նպատակով, 257.8 մլն. տրամադրվում է Սպորտի և երիտասարդության նախարարությանը, որից էլ բուն ՍԵՅՆ տրամադրության տակ է 170.1 մլն. դրամը, 87.7 մլն.-ն նախատեսված է այլ ընթացիկ դրամաշնորհների համար:

## Առաջարկություններ

Հաշվի առնելով գնահատման արդյունքները՝ «Երիտասարդ ընտանիքին մատչելի բնակարան» ծրագրի բարելավման նպատակով առաջարկում ենք՝

- Հետագա փոփոխությունների ժամանակ հիմնվել ոչ միայն հեռախոսագանգերից ստացված տեղեկատվության վրա, այլև իրականացնել ծրագրի արդեն շահառու հանդիսացող ազդակիր ընտանիքների կարծիքը ծրագրի վերաբերյալ,
- Իրականացնել վիճակագրական տվյալների վերլուծություն՝ հասկանալու համար ծրագրի վերաֆինանսավորումների քանակների դինամիկան մի շարք սոցիալական և տնտեսական գործոնների համատեքստում, մասնավորապես ժամանակային շարքերի ուսումնասիրման մոտեցման կիրառմամբ:

## 3. «Գիտելիքների մրցարշավ ընդդեմ թրաֆիքինգի» ծրագրի գնահատում

### Ծրագրի նկարագիր

#### Ծրագրի հիմնախնդիրն ու նպատակ(ներ)ը

Բարձրացնել Ստեփանավան քաղաքի՝ որպես ՀՀ 2015 թվականի երիտասարդական մայրաքաղաքի, երիտասարդների թրաֆիքինգի կանխարգելման իմացության մակարդակը դասընթացի և մրցակցային խաղի միջոցով

#### Գործողության իրականացնողները՝

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» ՊՈԱԿ, (համաձայնությամբ), «Արտ Սայթ» ՍՊԸ

#### Ընտրված միավորի տեսակ՝

դասընթաց, հետո մրցակցային խաղ

#### Իրականացման ժամկետներ՝

Հունիս-հոկտեմբեր ամիսներ, 2015թ

#### Ծրագրերի թիրախը՝ Լոռու մարզ, Ստեփանավան քաղաք

Գերակայություն 3. Երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի խթանում

Ծրագրի արդյունքներ: Ծրագիրն իրականացվել է երեք տարի՝ 2014-2016թթ. ներառյալ, համապատասխանաբար Սիսիան, Ստեփանավան և Գյումրի քաղաքներում: Ընդհանուր թվով ունեցել է 140 մասնակից, ներգրավել է նաև ազատ ունկրդիների:

Դասընթացը կազմակերպվել է հետևյալ ձևաչափով՝

- դասընթաց – սեմինար,

16 ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայք: Ինտերակտիվ բյուջե => Հանգիստ, մշակույթ և կրոն => Կրոնական և հասարակական այլ ծառայություններ => Երիտասարդական ծրագրեր:

- ինտերակտիվ մրցակցային խաղ (Brain Ring),
- սոցիալական հոլովակների դիտում,
- խաղ-մրցույթ:

Մշակվել է համակարգչային ծրագիր, որը ամեն տարի ծրագրի շրջանակներում ունենում է վերամշակումներ: Ըստ ծրագրի հաշվետվությունների՝

- 2014թ. - Մասնակից երիտասարդները ձեռք են բերել գիտելիքներ թրաֆիքինգի վերաբերյալ:
- Մասնակիցները, հանդիսատեսը իրազեկվել է թրաֆիքինգի վերաբերյալ:
- 2015թ. - Հասարակության ավելի լայն զանգված մասնակից եղավ ծրագրին:
- Մասնակիցները ձեռք են բերել գիտելիքներ:
  - 70 մասնակիցներ, ավելի քան թվով 200 հանդիսատես իրազեկվել են թրաֆիքինգի վտանգների, կանխարգելման ուղիների, այդ խնդրով զբաղվող կազմակերպությունների մասին:
  - ՋԼՄ-ների լուսաբանության շնորհիվ իրազեկվել է հանրության ավելի լայն մասսաներ:
- 2016թ. - Մասնակիցները ձեռք են բերել գիտելիքներ,
- իրազեկվել են թեմայի վերաբերյալ:
  - Ապահովվել է տեխնիկական պաշտպանություն, բովանդակային թարմացումներ և ֆունկցիաների բարելավում [www.antitrafficking.am](http://www.antitrafficking.am) կայքում:

### Ծրագրի գնահատման մեթոդաբանությունը

**Նպատակ:** Գնահատել իրականացված ծրագրի արդյունավետությունը և պարզել միջոցառումների համապատասխանությունը Ռազմավարական նպատակներին:

#### Խնդիրները՝

1. Որո՞նք են եղել ծրագրի սկզբնական նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքը ծրագրի կազմակերպչի ու իրականացնող(ներ)ի կողմից,
2. Որքանով է ծրագիրը իր նպատակով, խնդիրներով, ակնկալվող արդյունքով համապատասխանում Ռազմավարության նպատակին,
3. Որքանով է առնչվում Ռազմավարության համապատասխան գերակայությանը, որի ներքո նախատեսված է եղել իրականացնել,
4. Ինչ հիմնական խոչընդոտներ են հանդիպել ծրագրի իրականացման ժամանակ,
5. Արդյոք եղել են փոփոխություններ՝ նախատեսված գործողությունների կատարման ժամանակ, ինչպես են դրանք կատարվել,
6. Որքանով է ծրագիրը հաջողվել՝ նախատեսված խնդիրների իրականացման հարցում,
7. Արդյոք նախատեսված խնդիրները թույլ են տվել հասնել ցանկալի արդյունքին,
8. Հաշվի առնելով ծրագրի արդյունքը՝ ծրագրի կրկնվելու դեպքում ինչ փոփոխություններ են նախատեսվում: Եթե այդպիսիք կան, ինչպես են դրանք իրականացվելու:

Նպատակներին հասնելու համար կիրառվել են տեղեկատվության ստացման հետևյալ մեթոդները՝

- Առանցքային տեղեկատուի հետ հարցազրույց,
- Ստեփանավան քաղաքում իրականացված դասընթացի մասնակիցների հետ ֆոկուս-խմբային քննարկում:
- Փաստաթղթերի ուսումնասիրություն՝
  - o «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի երիտասարդական մայրաքաղաք Ստեփանավանի երիտասարդներն ընդդեմ թրաֆիքինգի. «Գիտելիքների մրցարշավ ընդդեմ թրաֆիքինգի» ծրագրի հաշվետվություն

- o «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի երիտասարդական մայրաքաղաք Ստեփանավանի երիտասարդներն ընդդեմ թրաֆիքինգի. «Գիտելիքների մրցարշավ ընդդեմ թրաֆիքինգի» մշտադիտարկում ծրագրի զեկուլյոյ

### **Ծրագրի արդյունավետության գնահատում**

Ծրագրի սկզբնական նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքը՝ ըստ միջոցառման իրականացնողների

«Թրաֆիքինգի կանխարգելմանն ուղղված քարոզչական միջոցառումների կազմակերպում» միջոցառման ներքո արդեն 2014-2016թթ. երեք տարիներին գնումների համակարգով իրականացվել է տվյալ ծրագիրը, որի նպատակն է եղել բարձրացնել թրաֆիքինգի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը իրականացման քաղաքի երիտասարդների շրջանում:

Ինչպես նշում է կազմակերպիչը, իրենց կազմակերպությունը զբաղվում է թրաֆիքինգի հիմնահարցերով Հայաստանում, և ՍԵՀՆ տրամադրած միջոցները լրացնում են իրենց գործունեությունը, ինչն էլ եղել է պատճառը մրցույթին դիմելու: «Հայաստանի Հանրապետության երիտասարդական մայրաքաղաք» ծրագրի մեկնարկին զուգահեռ որոշել են ծրագիրը անցկացնել տարվա երիտասարդական մայրաքաղաքում՝ այդպիսով ծրագրերի ազդեցությունը օպտիմալացնելով: Մյուս կողմից 2014թ.-ին Մայրաքաղաք հռչակված Սիսիան քաղաքը, առանցքային տեղեկատուի խոսքերով, լինելով տեղակայված Երևան-Իրան մայրուղու հարևանությամբ, ունի թրաֆիքինգի զարգացման հեռանկարներ:

*«Սիսիանը գտնվում է Երևան-Իրան մայրուղու վրա.. բավականաչափ տիպիկ դեպքեր ենք ունեցել թրաֆիքինգի հետ կապված: Որպես այդպիսին դեպքեր չեն եղել, բայց կարող էին..:Իրենց մեջ մեծ պոտենցիալ էին պարունակում: Վարորդների փոխհարաբերություններ, պասիվ վարորդներ..», -առանցքային տեղեկատուի հետ հարցազրույցից մեջբերում:*

Հաջորդ տարիներին Ստեփանավանում և Գյումրիում ծրագրի իրականացնելը առանցքային տեղեկատուն հիմնավորում է նրանով, որ ՀՀ-ում թրաֆիքինգի տեսանկյունից առավել խոցելի են երկու մարզ՝ Լոռին և Շիրակը, ինչի պատճառով նպատակահարմար են գտել իրականացնել Մայրաքաղաքներում: Քանի որ թրաֆիքինգի վերաբերյալ վիճակագրության պակաս է նկատվում, և համացանցում չգտնվեցին թրաֆիքինգի վերաբերյալ տվյալներ՝ ըստ մարզերի, կամ առավել խոցելի մարզերի վերաբերյալ, ուստի դժվար է հաստատել առանցքային տեղեկատուի պնդումը:

Ինչպես նշում է առանցքային տեղեկատուն, ծրագիրը ներկայացնում է դիմող կազմակերպությունը: Իրականացված երեք տարիների ընթացքում գործել է նույն մոտեցումը:

Խոսելով ծրագրերի արդյունավետության մասին, առանցքային տեղեկատուները նշում են, որ թրաֆիքինգի թեման շատ լայն է, և հասարակության բոլոր խմբերին ինֆորմացնելու կարիք կա, և նույնիսկ մի մարդու հետ մի հանդիպումը բավարար չէ թրաֆիքինգի մասին կայուն գիտելիք փոխանցելու համար:

*«Տալիս ենք մի հատ դեպք, ասում ենք ձեզ էսքան գիտելիք տվել ենք, մի հատ կարդացեք դուք էս դեպքի մեջ թրաֆիքինգ տեսնո՞ւմ եք, թե ոչ: Շատ դեպքերում երկու ժամ լավագույն մասնագետները թրաֆիքինգի մասին ինֆորմացիան մատուցել են արդեն, մեծահասակ մարդը, ով ունի քառասուն տարվա աշխատանքային փորձ, մայրում է ասում սրա մեջ թրաֆիքինգ չկա», -առանցքային տեղեկատուի հետ հարցազրույցից մեջբերում:*

Դասընթացը կրում է մեկանգամյա բնույթ, ինչից հետո մասնակիցների գիտելիքների վերաստուգման հետադարձ կապ չի ապահովվում:

*«..մենք կանգնած չենք հետո իր [վերապատրաստում անցած մանկավարժի] կողքը, որ ասենք՝ գիտես էս բառը սենց օգտագործել չի կարելի», -առանցքային տեղեկատուի հետ հարցազրույցից մեջբերում:*

Քանի որ գիտելիքների թարմացումը և համալրումը թեմայի յուրահատկությունից կախված շատ կարևորվում են, առանցքային տեղեկատուները նշում են, որ 2017թ.-ին Չարենցավանում նպատակ ունեն միավորել նախորդ երեք տարիների թիմերին և Չարենցավանի երիտասարդներին մի խաղի մեջ:

Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ երեք տարիների ընթացքում գործել է նույն մոտեցումը՝ դիմորդ կազմակերպությունն ինքն է առաջարկել ծրագիր, ծրագրի իրականացման վայր, և երեք տարիների ընթացքում ծրագիրն իրականացվել է միևնույն կազմակերպության կողմից, ինչը ցույց է տալիս, որ Ռազմավարությունը չի ենթադրում ՀՀ-ում թրաֆիքինգի կանխարգելման մասին երիտասարդների շրջանում իրազեկվածության բարձրացման սեփական մեթոդաբանություն:

Թրաֆիքինգը հանդիսանում է ծրագիրն իրականացնող կազմակերպության գործունեության հիմնական ոլորտներից մեկը, հետևաբար ծրագրին դիմելիս, կազմակերպությունը շարժվում է սեփական աշխատանքային ծրագրով:

### **Ծրագրի իրականացման առանձնահատկությունները**

**Ծրագրին դիմելու ընթացակարգը:** Ծրագրին դիմելու մասով իրականացնող կազմակերպությունը խնդիրներ չի նկատում:

**Ծրագրի իրականացման ժամանակ հանդիպած խոչընդոտները, փոփոխությունները:** Ծրագիրն իրականացվում է պետական գնումների համակարգով, ինչը իրականացնողի տեսանկյունից առաջացնում է խնդիր այն հարցում, որ իրականացնող կազմակերպությունը ստիպված է միջոցներ սառեցնել բանկային հաշվի վրա, ինչը խոչընդոտում է փոքր դրամազևեղ կազմակերպությունների՝ մրցույթին դիմելիս: Սակայն այս հարցով ՍԵՅՆ-ը նշում է, որ այս ծրագրով բիզնեսի զարգացման աջակցության նպատակ չի հետապնդում, ինչպես նաև նշում է, որ բանկային հաշվի վրա սառեցվում է այնքան գումար, որքան անհրաժեշտ է պետական միջոցների անվտանգությունը ապահովելու համար:

Կազմակերպիչը նշում է, որ ծրագրի իրականացման համար դժվար է ասնակիցներին հավաքագրելը, քանի որ իր կարծիքով, երիտասարդները մոտիվացված չեն մասնակցելու:

### **Ծրագրի ֆինանսավորումն ու ժամանակացույցը:**

Ծրագիրը ֆինանսավորվում է պետական գնումների համակարգի միջոցով, հանդիսանում է ամենամյա ծրագիր:

**Ծրագրի մոնիթորինգ և գնահատում:** Ծրագիրը չի ենթադրում մոնիթորինգի և գնահատման համակարգ, սակայն իրականացնողները, սեփական ձեռքբերումներն ու բացթողումները պարզելու համար 2015թ. դիմել են առցանց դրամաշնորհային համակարգի մրցույթին ծրագրի մշտադիտարկման առաջարկով, շահել են դրամաշնորհ:

«Գիտելիքների մրցարշավ ընդդեմ թրաֆիքինգի» ծրագրի մշտադիտարկման բովանդակությունը ուսումնասիրելիս հարկ ենք համարում առաջնահերթ անդրադառնալ «Ծրագրի արդյունքները» բաժնին<sup>17</sup>:

Ընդհանուր առմամբ նշենք, որ ընտրված հարցերը թույլ չեն տալիս գնահատել ծրագրի արդյունավետությունը: Անդրադառնանք ավելի մանրամասն:

«Գրաֆիկ 1»-ում ներկայացված է «ՀԱՐՑ: Ինչպե՞ս կգնահատեք ձեր գիտելիքների մակարդակը թրաֆիքինգի թեմայի խաղի ավարտից հետո»՝ համապատասխան կարգային բնույթի պատասխաններով՝ «Գերազանց (24%), լավ (42%), բավարար (26%), անբավարար (2%)»: Հարցը խոցելի է հետևյալ պատճառներով՝

- Քանի որ թրաֆիքինգը հանդիսանում է բազմաչափ երևույթ, ուստի անձի՝ սեփական գիտելիքների մակարդակի վերաբերյալ ինքնագնահատականը չի կարող ցույց տալ անձի՝ իրական գիտելիքների մակարդակը, հետևաբար թրաֆիքինգի թեմայի վերաբերյալ փորձագիտական գիտելիքի չտիրապետող երիտասարդը չի կարող գնահատել սեփական գիտելիքների մակարդակը:
- Մոնիթորինգը դուրս չի բերել ծրագրի գնահատման ցուցիչներ, օրինակ դասընթացի թեմաների իմացություն կամ որոշակի հասկացությունների սահմանում, ինչը կչափվեր մինչև խաղը և խաղի ավարտից հետո: Այդ դեպքում միայն, ցուցիչների համապարփակ քանակի առկայության և գնահատման ճիշտ սանդղակների ընտրության դեպքում կարելի է խոսել՝ արդյոք երիտասարդի գիտելիքների մակարդակը «գերազանց» է, թե «անբավարար»:
- Տվյալ հարցը, իրենից ներկայացնելով անձի ինքնագնահատման օրինակ, ավելի շուտ կարող է խոսել երիտասարդի՝ տվյալ թեմայից իրազեկվածության հարցում սեփական ուժերի վրա վստահ լինելու մասին: Այդ տեսանկյունից հատկանշական է, որ մասնակիցների շուրջ 28%-ը սեփական գիտելիքները թրաֆիքինգի վերաբերյալ գնահատել է ոչ այդքան լավ, իսկ 6%-ը ընդհանրապես չի պատասխանել տվյալ հարցին:

17 «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի երիտասարդական մայրաքաղաք Ստեփանավանի երիտասարդներն ընդդեմ թրաֆիքինգի. «Գիտելիքների մրցարշավ ընդդեմ թրաֆիքինգի» մշտադիտարկում ծրագրի զեկույց, էջ 5

«Գրաֆիկ 2»-ում ներկայացված է «ՀԱՐՑ: Ի՞նչ եք կարծում Ձեր ստացած գիտելիքները բավարա՞ր են մարդկանց թրաֆիքինգից խուսափելու համար»: Հարցը ենթադրում է «այո» (59%), «ընդհանուր առմամբ՝ այո» (33%), «ոչ» (5%) պատասխանների տարբերակները: Հարցված երիտասարդների 3%-ը հարցին չի պատասխանել: Անդրադառնալով հարցի բովանդակությանը՝ պետք է նշել, որ նախորդ հարցի պես այս հարցը նույնպես միաչափ չէ, քանի որ ցույց չի տալիս երիտասարդների գիտելիքների մակարդակը՝ թրաֆիքինգի հնարավոր դեպքերի, թրաֆիքինգից խուսափելու հնարավոր ուղիների մասին: Հարցը դարձյալ պահանջում է բազմաչափ մոտեցում, այլապես ցույց է տալիս միայն երիտասարդների պատկերացումները թրաֆիքինգից խուսափելու սեփական գիտելիքների/հնարավորությունների մասին:

«Գրաֆիկ 3»-ում «Մինչ դասընթացը տեղա՞յ էիք մարդկանց միգրացիայի և թրաֆիքինգի հիմնախնդիրներին» և «Դասընթացի ավարտին ավելացա՞ն ձեր գիտելիքները նշված խնդիրների մասին» հարցերին պատասխանել է ընդամենը թվով 39 հարցվող, այն դեպքում, երբ Գրաֆիկ 1-ի հարցին պատասխանել է 71 հոգի, ովքեր կազմել են դասընթացի մասնակիցների 66%-ը:

Ծրագրի մեթոդաբանության մեջ<sup>18</sup> նշվում է՝ «իրականացվել են 10 փորձագիտական հարցազրույցներ, 20 հարցազրույցներ՝ հիմնական թիրախ խմբի հետ, ավելի քան 20 խմբային քննարկումներ: Ընդհանուր առմամբ ստացվել է 107 հոգու արձագանք ու կարծիք մշտադիտարկվող ծրագրի արդյունավետության վերաբերյալ»: Տվյալ ձևակերպումը թույլ չի տալիս պատկերացում կազմել, թե մշտադիտարկման բուն հարցմանը քանի հարցվող է մասնակցել: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ Գրաֆիկ 1-ին պատասխանել է 71 հոգի, իսկ Գրաֆիկ 3-ին՝ միայն 39, ցույց է տալիս, որ հարցազրույցները չեն կրել դեմ առ դեմ բնույթ, թեպետ մեթոդաբանության մեջ նույնիսկ նշված չէ հարցազրույցների բնույթը:

Ընդհանուր առմամբ կարող ենք ասել, որ հետազոտական ընթացակարգի տեսանկյունից՝

- իրականացվել է ոչ գրագետ և ոչ պրոֆեսիոնալ մշտադիտարկում,
- մշտադիտարկման գեկույցի բովանդակությունը աղքատ է, այն դեպքում, որ իրականացված քաղաքականություն մշակողների հետ 10 փորձագիտական, երիտասարդների հետ 20 անհատական հարցազրույցները, և ավելի քան 20 ֆոկուս-խմբային քննարկումները պետք է թույլ տային անդրադառնալ թրաֆիքինգի թեմաներին ավելի մանրամասն, քան պարզապես երիտասարդի՝ սեփական գիտելիքների ինքնագնահատումը:
- Տվյալ «մշտադիտարկում»-ը ցույց չի տալիս «Գիտելիքների մրցարշավ ընդդեմ թրաֆիքինգի» ծրագրի արդյունավետությունը:

Ծրագրի արդյունավետությունը հասկանալու համար ֆոկուս-խմբային քննարկում է իրականացվել ծրագրին մասնակցած երիտասարդների հետ: Նշենք, որ մասնակիցները դժվարանում էին սահմանել, թե ինչ է թրաֆիքինգը: Մասնակիցները նշեցին, որ ոստիկանությունից թրաֆիքինգի ոչ մի դեպք չի գրանցվել իրենց քաղաքում: Նշեցին նաև, որ զուցե եղել են տղամարդկանց արտագնա աշխատանքի «խաբվածության» դեպքեր, սակայն դրանք որպես լուրջ խնդիր չորակեցին:

*«Մեկ էլ միգրացե դա լինե՞ր արտագնա աշխատողների մոտ, տղամարդկանց, որ աշխատեցնում են, աշխատավարձը չեն տալիս, վատ պայմաններում են պահում, բայց ամեն դեպքում դա էլի ինչ-որ ծանր դեպքեր չեն, խաբվածություն է, ինչ-որ բացասական լուրջ գործեն չեն քննարկվել», -դասընթացի մասնակիցների հետ ֆոկուս-խմբային քննարկումից մեջբերում:*

Ըստ 2010թ.-ին ՄԱԿ-ի գերագույն հանձնաժողովի ընդունած «Միավորված Ազգերի կազմակերպության անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան լրացնող մարդկանց՝ հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին» արձանագրության մեջ թրաֆիքինգը սահմանվում է որպես՝ «Շահագործման նպատակով իրականացվող մարդկանց հավաքագրում, տեղափոխում, փոխանցում, թաքցնում կամ ձեռք բերում, որն իրականացվում է հարկադրաբար: Հարկադրանքի միջոցներն են՝ ուժի գործադրում, սպառնալիք, առևանգում, խարդախություն, **խաբեություն**, իշխանության կամ վիճակի խոցելիության չարաշահում, ուրիշ անձի կողմից վերահսկվող անձի համաձայնությունը ստանալու համար կաշառում»<sup>19</sup>:

18 Նույն աղբյուրը, էջ 4

19 <https://drive.google.com/file/d/0B9UN0mSisfcsZEhFXzFrYWdOdUxyM1dxRnAzU01HT1JneUFz/edit>

Այսինքն գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ վերապատրաստված երիտասարդի համար տղամարդուն խաբուխամբ արտերկիր տեղափոխելն ու աշխատանքը չարաշահելը դեռևս չի համարվում թրաֆիքինգ:

Այն հարցի վերաբերյալ, թե ինչու է դասընթացը իրականացվել հենց իրենց քաղաքում, երիտասարդները երկու հիմնական պատճառ նշեցին՝ 1.Լոռու մարզը համարվում է առավել խոցելի՝ արտագնա աշխատանքի, արտագաղթի տեսանկյունից, 2.Ստեփանավանը հռչակվել էր երիտասարդական մայրաքաղաք, այդ պատճառով բոլոր ծրագրերը իրականացվել են իրենց քաղաքում:

*«Այսինքն էս պարագայում, եթե չլիներ երիտասարդական մայրաքաղաքի գործոնը, շատ ծրագրեր չէին իրականանա քաղաքում: Այո, ինչը որ որոշակի ակտիվություն մտցրեց էստեղ երիտասարդների շրջանում, որոնք որ երիտասարդական մայրաքաղաքն ավարտվելուց հետո էլի ցրվեցին երևան, Վանաձոր, որոնք երիտասարդական մայրաքաղաքի արդյունքում հետ էին եկել, քանի որ քաղաքում իրականացվում էին տարբեր ծրագրեր», -երիտասարդների հետ ֆոկլուս-խմբային քննարկումից մեջբերում:*

Թե՛ մասնակիցները, թե՛ կազմակերպիչը նշեցին, որ ընտրվել էին հիմնականում այնպիսի երիտասարդներ, ովքեր ներգրավված են հասարակական աշխատանքներում, բացի այդ ծրագիրը թույլ է տվել ազատ ունկնդիրների մասնակցություն, սակայն վերոնշյալ մեջբերումը ցույց է տալիս, որ մասնակիցների մի մասը, ներկայացնելով Ստեփանավանի երիտասարդությունը, միևնույն ժամանակ բնակություն կամ գործունեություն ծավալում է այլ քաղաքում, ուստի տվյալ քաղաքում հետագայում երիտասարդության ակտիվացմանը որքանով կարող է մասնակցել, դժվար կլինի կանխատեսել: Մյուս կողմից երիտասարդների կարծիքով, նմանատիպ միջոցառումները քաղաքի երիտասարդության համար հանդիսանում են «գրավիչ», միևնույն ժամանակ առանցքային տեղեկատուները նշում են, որ քաղաքում դասընթացի մասնակցելու ցանկություն ունեցող երիտասարդներ գտնելը խնդիր է:

Երիտասարդները նույնպես նշեցին, որ դասընթացը հնարավորություն է տվել ազատ մասնակցության, ինչը նպաստել է տեղեկատվության տարածման:

*«Շարունակական դարձավ.. թիմերը ընդգրկված էին տարբեր կառույցներից, կրթօջախներից, հասարակական կազմակերպություններից, նույնպես կլոր-սեղանների, սեմինարների միջոցով տեղեկացրեցին բնակչությանը ու դա ինքնստիմբյան տարածում ստացավ, ու մարդիկ ձեռք բերեցին այդ գիտելիքը, էն իրագեկումը, որ ամտեղյակ էին: Որովհետև գործ չկա, գնում են արտագնա աշխատանքի», երիտասարդների հետ ֆոկլուս-խմբային քննարկումից մեջբերում:*

Մասնակիցների պատասխանների համաձայն՝ դասընթացը մասնակցին թույլ է տվել ծանոթանալ թրաֆիքինգի դեպքերին, կանխարգելման եղանակներին, առնչվող կառույցներին, թրաֆիքինգի գոհի հոգեբանության վերականգնման մեթոդներին, թրաֆիքինգի ենթարկված անձի՝ թրաֆիքյոր դառնալու կանխման մոտեցմանը:

*«..և վերջապես ինչպես վերականգնես տվյալ մարդու հոգեբանությունը, որ ինքը չդառնա, չեն հիշում տերմինը, որ ինքը ոնց որ ..թրաֆիքյոր, հիշեցի տերմինը, որ ինքը թրաֆիքյոր չդառնա, այսինքն ինքը, լինելով... թրաֆիքինգի կրող հետագայում չհանդիսանա: Այդ պահը բաց չթողնվի: Միգուցե դիմեն հոգեբանների կամ այլ կառույցների հետ շփվեն..», -երիտասարդների հետ ֆոկլուս-խմբային քննարկումից մեջբերում:*

Անհատական մակարդակում երիտասարդները նշեցին, որ ծրագիրը հնարավորություն է տվել ձեռք բերել թիմային աշխատանքի, վախի կառավարման հմտություններ, ինքնանդրսևորվելու, գիտելիք ստանալու, սեփական ուժերը ստուգելու համար: Բացի այդ, ծրագիրը մասնակիցներին թույլ է տվել տեսնել տեղական երիտասարդներին միավորված:

Թեպետ ֆոկլուս-խմբային քննարկման պահին դասընթացից անցել էր արդեն ավելի քան մեկ տարի, այնուամենայնիվ մասնակիցները հիշում էին դասընթացի հիմնական թեմաները, սակայն թե՛ առանցքային տեղեկատուների կարծիքով և թե՛ ֆոկլուս-խմբի արդյունքներից ելնելով՝ կարող ենք ասել, որ մեկ դասընթացը մեկ երիտասարդի հետ բավական չէ անձի մոտ թրաֆիքինգի վերաբերյալ հաստատուն գիտելիքի ձևավորման համար:

Դասընթացը երիտասարդների համար հանդիսանում էր ավելի շուտ անձնային որակների զարգացման, հաղորդակցման միջոց: Երիտասարդները չունեին ստույգ տեղեկատվություն իրենց մարզում տեղ գտած թրաֆիքինգի դեպքերի վերաբերյալ:

«Հայաստանի Հանրապետության երիտասարդական մայրաքաղաք» ծրագիրը ու դրա շրջանակներում Ստե-

փանավան քաղաքում անցկացված ծրագրերը հնարավորություն են տվել քաղաքի ակտիվ երիտասարդությանը ժամանակավոր վերադառնալու, ինչը թույլ է տվել նրանց այս ծրագրում ևս ընգրկվելու:

Սակայն դրանով հանդերձ ծրագրի արդյունքները խոցելի են հենց քաղաքում տեղեկացված անձանց մնալու հարցում:

### **Առաջարկություններ**

Հիմնվելով ծրագրի գնահատման արդյունքների, առանցքային տեղեկատուների ու երիտասարդների՝ քննարկման ժամանակ հնչած կարծիքների վրա՝ ուղղված ծրագրի հետագա բարելավմանը, առաջարկում ենք՝

- *Գնահատել՝ արդյոք տարվա կտրվածքով մեկ քաղաքում մեկանգամյա դասընթացը կարող է նպաստել ՀՀ երիտասարդների շրջանում իրազեկվածության բարձրացմանը, որոշել ազդեցության ժամկետները, սահմանել գնահատման չափանիշները:*
- *Դիտարկել երիտասարդության իրազեկման այլ միջոցները նույնպես, որոնք ավելի զանգվածային բնույթ կկրեն:*
- *Նոր ռազմավարության մշակման ժամանակ իրականացնել վիճակագրության ուսումնասիրություն վերջին հինգ տարիների կտրվածքով հասկանալու համար ձեռքբերած ազդեցությունը և թողնված բացերը:*
- *Մշակել թրաֆիքինգի կանխարգելման նպատակով երիտասարդության շրջանում իրազեկվածության բարձրացման մեթոդաբանություն որոշելու և ներդրումները համար հետագա ծրագրերի ուղղվածությունը:*

## **4. «Գյուղն է դառնում սահմանը» ծրագրի գնահատում**

### **«Գյուղն է դառնում սահմանը» ծրագրի նկարագիր**

#### **Ծրագրի հիմնախնդիրն ու նպատակ(ներ)ը**

Հանրապետության երիտասարդության շրջանում հայրենասիրական դաստիարակությանը, ազգային և մշակութային արժեքների պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացում

**Ծրագրի իրականացնող՝** «Հայկական ճամբար լեզվի և առաջատանավի դպրոց» բարեգործական ՀԿ

**Ընտրված միավորի տեսակ՝** Ուսուցողական հավաք-բանակում

**Իրականացման ժամկետներ՝** 01.05.2015-30.06.2015

#### **Դասընթացի մեթոդները՝**

- հավաք-բանակում,
- դասընթաց,
- թիմի ստեղծում,
- սինուլյացիոն, կոնֆրոնտացիոն վարժություններ,
- աշխատանք մեծ և փոքր խմբերում,
- ֆիլմի դիտումներ,
- հետախուզական արշավներ,
- ինտերակտիվ քննարկումներ:

**Ծրագրի թիրախը՝** Գեղարքունիքի մարզ, Դրախտիկ, Շորժա, Արտանիշ, Ջիլ սահմանամերձ համայնքներ

**Գերակայություն 4.** Երիտասարդների հոգևոր-մշակութային արժեքների զարգացում և ռազմահայրենասիրական դաստիարակություն

## **Ծրագրի արդյունքներ:**

Բարձրացել է սահմանամերձ գյուղական համայնքների 28 երիտասարդների իրազեկման մակարդակը,

- 28 երիտասարդներ ձեռք են բերել նոր գիտելիքներ և գործնական հմտություններ ուսումնասիրված թեմաներից,

- Չորս համայնքների դպրոցներին տրամադրվել են ուսուցողական նյութեր, թեմատիկ գրքույկներ հետևյալ թեմաներով՝

- Չենաշարժիչ համակարգի վնասվածքներ,
- Կողքային անվտանգ դիրք,
- Տուժածների շտապ դուրսբերումը և տեղափոխումը,
- Հիստերիկ և էպիլեպտիկ նոպաներ, լուսնոտություն,
- Արյունահոսություններ,
- Ահազանգում,
- Անվտանգությունը տանը,
- Վերքեր և վնասվածքներ,
- Արտաքին ազդակների ազդեցությունը օրգանիզմի վրա,
- Շնչառական ուղիների փակումը օտար մարմիններով,
- Սիրտ-թոքային վերակենդանացում,
- Վիրակապումը եռանկյունաձև վիրակապով և «պարսատիկներով»,
- Անվտանգությունը ջրում,
- Անվտանգությունը սառույցի վրա,
- Անվտանգությունը ճանապարհներին և տրանսպորտում,
- Օձեր,
- Անվտանգությունը կենդանիների հետ շփվելիս:

28 մասնակիցները համարվում են զինղեկերի անմիջական օգնականներ: Ծրագրով նախատեսվել է, որ վերապատրաստված երիտասարդները իրենց ստացած գիտելիքները կփոխանցեն 2015թ.-ից դպրոցներում պետական ծրագրով ստեղծվելիք հայրենասիրական ակումբների անդամներին:

## **Ծրագրի գնահատման մեթոդաբանությունը**

**Նպատակ:** Գնահատել իրականացված ծրագրի արդյունավետությունը և պարզել միջոցառումների համապատասխանությունը Ռազմավարական նպատակներին:

### **Խնդիրները՝**

1. Որոնք են եղել ծրագրի սկզբնական նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքը ծրագրի կազմակերպչի ու իրականացնող(ներ)ի կողմից,
2. Որքանով է ծրագիրը իր նպատակով, խնդիրներով, ակնկալվող արդյունքով համապատասխանում Ռազմավարության նպատակին,
3. Որքանով է առնչվում Ռազմավարության համապատասխան գերակայությանը, որի ներքո նախատեսված է եղել իրականացնել,
4. Ինչ հիմնական խոչընդոտներ են հանդիպել ծրագրի իրականացման ժամանակ,
5. Արդյոք եղել են փոփոխություններ՝ նախատեսված գործողությունների կատարման ժամանակ, ինչպես են դրանք կատարվել,
6. Որքանով է ծրագիրը հաջողվել՝ նախատեսված խնդիրների իրականացման հարցում,
7. Արդյոք նախատեսված խնդիրները թույլ են տվել հասնել ցանկալի արդյունքին,
8. Հաշվի առնելով ծրագրի արդյունքը՝ ծրագրի կրկնվելու դեպքում ինչ փոփոխություններ են նախատեսվում: Եթե այդպիսիք կան, ինչպես են դրանք իրականացվելու:



Նպատակներին հասնելու համար կիրառվել են տեղեկատվության ստացման հետևյալ մեթոդները՝

- Առանցքային տեղեկատուների հետ հարցազրույց,
- Ժրագրի մասնակիցների հետ ֆոկլուս-խմբային քննարկում, որն իրականացվել է Արտամիշ գյուղում
- փաստաթղթերի վերլուծություն՝
  - o Ծրագրի հաշվետվություն և եզրակացություն:

#### **«Գյուղն է դահուճ սահմանը» ծրագրի արդյունավետության գնահատում**

Ծրագրի սկզբնական նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքը՝ ըստ միջոցառման իրականացնողների

Ծրագրի սկզբնական նպատակն է եղել բարձրացնել համայնքների 28 երիտասարդների ռազմահայրենասիրական ոգին, տրամադրել նրանց նոր գիտելիքներ, կարողություններ, հմտություններ: Ծրագրի մասնակիցները նշում են, որ իրենց նպատակները իրականում ավելի լայն են եղել, իրենց ծրագրով փորձել են երիտասարդների շրջանում կերտել ԳԳ քաղաքացի, պետության ներկայացուցիչը, որը մտածում է իր երկրի, համայնքի մասին: Այդ առումով առանցքային տեղեկատուները կարծիք են հայտնում, որ Ռազմահայրենասիրական գերակայությունը պետք է ընդլայնի իր նպատակները ընդհանուր առմամբ՝ «պետականաշինությանը» միտված միջոցառումներ իրականացնելու համար:

*«Մի հատ ձևակերպում լինի ու միտք լինի, որը բխում է երկրի գերակայություններից, պետության շահից, պետականությանը, պետության ամրապնդմանը, ոչ զուտ ազգային.. «ռազմա»-ն ընդհանրապես պետք չի.. միտված լինի երիտասարդների պետականաշինությանը, քաղաքացիական դաստիարակություն.. ավելի գլոբալ բան, քան քաղաքացի լինելն է.. ով ենք մենք, ուր ենք գնում, որն է մեր տեսլականը, ինչ ենք ուզում: Լինեն հստակ ծրագրեր, որոնք միտված կլինեն անհատական զարգացմանը որպես քաղաքացի..»*, -առանցքային տեղեկատուի հետ հարցազրույցից մեջբերում:

«Գյուղն է պահում սահմանը» հանդիպում տիպի ծրագիր էր, որը իրականացվել է ընտրված չորս գյուղական համայնքների բարձր դասարանի երեխաների համար: Ծրագրի ավարտին ակնկալել են, որ երիտասարդները «կնվիրվեն» իրենց համայնքին, կճանաչեն իրենց համայնքը, կսովորեն օգտագործել բնության ռեսուրսները, պատկերացում կկազմեն համայնքը զարգացնելու հնարավորությունների մասին

Նախքան ծրագրի մեկնարկը, իրականացնող կազմակերպությունը բազմիցս աշխատանքներ տարել է համայնքներում, պատկերացում է ունեցել գյուղական համայնքների կարիքների մասին, ունեցել է տարածաշրջանը զարգացնելու սեփական մոտեցումները:

*«Մենք անընդհատ աշխատում ենք այդ համայնքների հետ, կարիքների բացահայտում արդեն արվել էր: Պրիմիտիվ հմտություններ չունեն, գյուղը բուժկետ չունի ամենամոտը 25 կմ հեռավորության վրա ճամբարակ քաղաքում..մարդիկ ապրում են լճի մոտ, չգիտեն ուրիշ ոնց օգտագործեն, բացի նրանից, որ սպառեն մեջի ծուկը»*, -առանցքային տեղեկատուի հետ հարցազրույցից մեջբերում:

Ծրագրի ընթացքում իրականացնողները երիտասարդներին մատուցել են տեսական և գործնական գիտելիքներ՝ բուժօգնությունից ու անվտանգությունից:

*«Ափին են հիմնականում տղաները, արևահարվում են, չգիտեն ինչ անեն, երբ կողքը մեկը խեղդվեց..»*, -առանցքային տեղեկատուի հետ հարցազրույցից մեջբերում:

Որպես ծրագրի մասնակիցներ ընտրվել են տարածաշրջանի բարձր դասարանների աշակերտները, քանի որ, ըստ իրականացնողների, այդ տարիքում են հիմնականում երիտասարդները որոշում մնալ համայնքում, գնալ, սովորել, հետ գալ, թե գնալ ու չվերադառնալ:

Ծրագրի իրականացնողների մոտ առկա է ծրագրի հստակ գծապատկեր՝ նպատակ, խնդիրներ, ակնկալվող արդյունք: Ծրագիրը միտված է եղել նարգային համայնքների զարգացմանը և իր բնույթով հայրենասիրական և անձի զարգացմանն է ուղղված: Ծրագրի իրականացնողները կարևորում են գյուղաբնակի առօրյա գործունեությանը նպաստող գիտելիքների փոխանցումը, նարգային համայնքների զարգացման գործնական հեռանկարները՝ առկա բնական ռեսուրսների օգտագործման միջոցով:

## **Ծրագրի իրականացման առանձնահատկությունները**

### **Ծրագրին դիմելու ընթացակարգը:**

Ինչպես նշում են ծրագրի իրականացնողները, դիմելու ժամանակ դժվարություններ չեն ունեցել, քանի որ արդեն հմուտ են համակարգի հետ աշխատելուն: Սակայն նաև նշում են, որ անհրաժեշտ տեղեկատվությունը միշտ չէ, որ հասանելի է լինում առցանց տարբերակով: Մասնավորապես կարևորվեց այն խնդիրը, որ [www.cragrer.am](http://www.cragrer.am) կայքում եռամսյակային հաշվետվության թարմացման դեպքում նախորդ եռամսյակների շահած ծրագրերի մասին տեղեկատվությունը այլևս հասանելի չէ: Գնահատման պահին համապատասխան կայքում ծրագրեր բաժնում նախատեսված չորս տիպի ծրագրերի համար շահած ծրագրերը անհասանելի էին սկսած 2016թ.-ի 3-րդ կամ 4-րդ եռամսյակներից (նվազման կարգով եռամսյակների ներքո առկա տեղեկատվությունը բացակայում է):

Առանցքային տեղեկատուները նաև նշեցին, որ առավել օպտիմալ են համարում աշխատանքը այն դեպքում, երբ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացված է առցանց համակարգով և անձնական շփման կարիք չկա, սակայն ոչ բոլոր դեպքերում է իրենց համար հնարավոր դրանք գտնել: Օրինակ, հաշվետվության ձևերը դիմելու դեպքում են տրամադրվում:

Առանցքային տեղեկատուները նշեցին, որ ԵՄԻԿ ՊՈԱԿ-ին դիմում են մասնավորապես հաշվապահական բնույթի հարցերով, ստանում են իրենց անհրաժեշտ պարզաբանումները, ծրագրերի բաժնի աշխատանքով նույնպես բավարարված են:

### **Ծրագրի իրականացման ժամանակ հանդիպած խոչընդոտները, փոփոխությունները:**

Բուն ծրագրի նպատակների ու խնդիրների իրականացման մասով խոչընդոտներ չեն եղել: Սակայն, ինչպես նշում են կազմակերպիչները, ծրագիրը հնարավորություն է ունեցել ավել բաղադրիչ իրականացնելու՝ ներառելով դպրոցների գինղեկներին վերապատրաստումների ժամանակ, սակայն դա հաջողվել է միայն մեկ դպրոցում, քանի որ ծրագրի իրականացման ժամկետները համընկել են խոտհունձի աշխատանքների հետ:

*«Եթե գյուղական համայնք է, պետք է հաշվի առնել, որ խոտհունձի ժամանակը չլինի, ցանքսի ժամանակը չլինի, բերքահավաքը չլինի...բա էլ երբ կլինի»*, -առանցքային տեղեկատուի հետ հարցազրույցից մեջբերում:

Ծրագրի շրջանակներում ծրագրի իրականացնողները համագործակցել են մարզային կառույցների հետ՝ գյուղապետարան, դպրոցներ, որոնց աշխատանքը որակեցին շատ բաց:

### **Ծրագրի ֆինանսավորումն ու ժամանակացույցը:**

Ծրագիրն իրականացվել է առցանց դրամաշնորհային համակարգի միջոցով մեկ անգամ:

### **Ծրագրի մոնիթորինգ և գնահատում:**

Ծրագրով նախատեսված չի եղել մոնիթորինգի կամ գնահատման մեթոդաբանություն:

### **Ծրագրի արդյունավետությունը**

Խոսելով ծրագրի արդյունավետության մասին՝ պետք է նշել, որ խմբային քննարկման բոլոր մասնակիցները բավարարված էին «Գյուղն է պահում սահմանը» ծրագրով, կարևորեցին դասընթացների թեմաները, ձեռքբերած գիտելիքներն ու կարողությունները:

Նմանատիպ ծրագրերին մասնակցությունը երիտասարդները մեծապես կարևորեցին հետևյալ պատճառներից ելնելով՝

- բնակվում են սահմանամերձ շրջանում և կարիք ունեն բարձր պահելու մարտական ոգին,
- քանի որ գյուղում բուժկետ չկա, անհրաժեշտ են համարում բուժօգնության կանոններին տիրապետել,
- ապրում ու աշխատում են բնության մեջ, հարկ են համարում ինքնապաշտպանական կարողությունները զարգացնել:

*«Քանի որ մենք սահմանամերձ գյուղում ենք բնակվում, կարողա մենք այնպիսի դրության մեջ ընկնենք, որ կարիք լինի ցույց տալ առաջին բուժօգնություն»*, -ֆոկուս-խմբային քննարկումից մեջբերում:

Մասնակից աղջիկները նշեցին, որ դա իրենց համար հնարավորություն էր ինքնապաշտպանության, կռվել

սովորելու համար, նաև նշեցին, որ կցանկանային հենց աղջիկների ինքնապաշտպանության դասեր ստանալ հետագայում, պատերազմի դեպքում մասնակցություն ունենալու, սեփական անվտանգությունը ապահովելու համար:

Մասնակիցները պատմեցին, որ դասընթացները անցկացվել են «գինվորի ռեժիմով», ինչին շատ դրական էին վերաբերվում:

*«Քանի որ մենք սահմանամերձ գյուղում ենք ապրում թշնամու մոտ, դրա համար բացատրում էին, որ մենք պետք է կարողանանք պահել ու պաշտպանել մեր գյուղը: Նրանք առաջին բուժօգնության մասին են ասել, բայց մենք հասկացել ենք, որ մենք պետք է պաշտպանենք մեր գյուղն ու երկիրը»,- ֆոկուս-խմբային քննարկումից մեջբերում:*

Դասընթացների ժամանակ երիտասարդները սովորել են վիրակապել, պաշտպանվել օձերի խայթոցներից, սովորել են սուզվել, ստացել են գործնական գիտելիքներ, սովորել են պատրաստել օդապարուկ և այլն: Մասնակիցների շրջանում շատ բարձր էր գնահատվում դասընթացի արդյունքը, քանի որ ստացած պրակտիկ հմտությունները կարողանում էին նաև կիրառել իրենց առօրյայում:

*«Այ, օրինակ, Սպարտակ Չովհաննիսյանը, մեզ ցույց տվեց, թե ինչպես կարելի է ձեռքի արմունկի կոտրված մասը ամրացնել շշով, գիպս դնել: Անգամ գյուղում մեր հարևաններից մեկը ընկել էր, ես փորձեցի մինչև հիվանդանոցը հասցնելը օգնել նրան, հետո բժիշկը հարցրել էր թե ով է այսպես կապել, ասել էին», - ֆոկուս-խմբային քննարկումից մեջբերում:*

Թեպետ ծրագրի իրականացումները նշում էին, որ ռազմահայրենասիրական գերակայությունը իրենց կարծիքով չպետք է կրի ռազմական ուղղվածություն, այնուամենայնիվ սահմանամերձ գյուղի երիտասարդները քննարկման ժամանակ բազմիցս նշեցին, որ ցանկանում են սովորել կրակել, ուսումնասիրել զենքերը, ֆիզիկապես պատրաստվել:

Երիտասարդները նշեցին, որ իրենց տրամադրվել է տեսր ու գրիչ՝ դասերը գրի առնելու համար, առաջին օգնության գրքեր, DVD սկավառակ, որտեղ տրամադրված նյութը ներկայացված է նկարներով:

Նաև կարևորեցին, որ ընկերներ են ձեռք բերել հարևան գյուղերից:

*«Մենք սովորել ենք այդ ծրագրի ժամանակ, որ բոլորս համախմբված լինենք, իրար թիկունք կանգնենք, որ պատերազմի ժամանակ կարողանանք մեկս մյուսին օգնենք»,-ֆոկուս-խմբային քննարկումից մեջբերում:*

Քննարկման ժամանակ երիտասարդները նշեցին գյուղի բազմաթիվ կարիքներ, ինչպիսին են՝ դեղատան, աղբամանների ու աղբահանության, լուսավորության, «սրճարանատիպ մի բանի», երեխաների համար խաղահրապարակների, ֆիզիկական պատրաստվածության խմբակների, բացակայությունը, ճանապարհների անսարք վիճակը: Նշեցին, որ կցանկանային սովորել հող մշակել, իրենց ստացած բերքը վաճառել իրենց գյուղում, քանի որ «հարևան գյուղերից են մեքենաներով գալիս միրգ-բանջարեղեն վաճառում»։ Գյուղը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ: Հետաքրքիր է, որ երիտասարդները մտածում էին գյուղում տուրիզմի զարգացման ուղղությամբ, ինչի նպատակով ցանկություն ունեին սովորելու առագաստանավեր վարել ու հարևան սարի վրայի եկեղեցին ու խաչքարերը վերանորոգել:

*Ընդհանուր առմամբ կարող ենք ասել, որ ծրագիրը եղել է արդյունավետ, կատարել է իր առջև դրված խնդիրները՝ ունենալով շոշափելի արդյունքներ, ազդել է երիտասարդության մտածողության վրա, զարգացրել նրանց ինքնապաշտպանման, առաջին բուժօգնության հմտությունները: Երիտասարդների շրջանում առկա է ոգևորություն և գործելու, զարգանալու, պաշտպանվելու ցանկություն: Թեպետ դասընթացները եղել են հազեցած, երիտասարդները նշում էին շարունակության, լրացման կարիքը: Մասնավորապես կարևորվել են հետևյալ թեմաները՝ զենքերի տեսակների ուսումնասիրություն և կիրառման ուսուցում, ինքնապաշտպանության [մարտարվեստների] գործնական դասընթացներ, արդեն ուսումնասիրած թեմաների կրկնություն և խորացում՝ ավելի երկար ժամանակահատվածով:*

## **Առաջարկություններ**

Հիմնվելով ծրագրի գնահատման արդյունքների, առանցքային տեղեկատուների ու երիտասարդների՝ քննարկման ժամանակ հնչած կարծիքների վրա՝ ուղղված ծրագրի հետագա բարելավմանը, առաջարկում ենք՝

- Մշակել նմանատիպ ամենամյա ծրագրեր, քանի որ ծրագիրը ուղղված է մարզային զարգացմանը և բարձրացնում է ռազմաօդային տեսչական ոգին, մյուս կողմից ողջունվում է երիտասարդների շրջանում:
- Հետագա աշխատանքներում ներառել նաև երիտասարդների կարիքներին համապատասխան դասընթացներ, մասնավորապես՝ զենքերի ուսումնասիրության ու կիրառման յուրահատկությունները, իքնապաշտպանական գործնական պարապմունքներ, ինչը կարող է ՀՀ պաշտպանության նախարարության հետ համատեղ իրականացվել:
- Համագործակցելով մարզային ռեսուրսների ուսումնասիրության այնպիսի կառույցների և կազմակերպությունների հետ՝ ինչպիսիք են, օրինակ, ՀՀ բնապահպանության և գյուղատնտեսության նախարարությունները, Երկրագործության գիտական կենտրոնը, Անտառների պետական մոնիտորինգի կենտրոնը, Կովկասի Բնապահպանական ոչ կառավարական կազմակերպությունների ցանցը և այլն, մշակել մարզային համայնքները զարգացնելու հնարավոր ուղիները և մարզային երիտասարդներին ներգրավել համապատասխան միջոցառումների մեջ:
- Գյուղական համայնքներից երիտասարդների արտագաղթը ու գործազրկությունը կրճատելու նպատակով ՀՀ գյուղատնտեսության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների հետ համատեղ իրականացնել գյուղատնտեսական՝ անասնապահության և հողագործության ուղղվածության գործնական վերապատրաստումներ՝ փորձնական տեսանելի արդյունքներով:

## **5. «100 գաղափար Հայաստանի համար» հանրառեական երիտասարդական մրցույթ» ծրագրի գնահատում**

### **Ծրագրի նպատակն ու խնդիրները**

**Համաձայն «100 գաղափար Հայաստանի համար» ծրագրի կանոնակարգի՝ ծրագրի հիմնական նպատակներն են՝**

Մրցույթի նպատակն է՝ «Մրցույթն անցկացվում է երիտասարդների նորարարական մտածողությունը զարգացնելու, ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների լուծման գործընթացներում երիտասարդներին ներգրավելու գիտատեխնիկական մշակումներ և նորարարական նախագծեր իրականացնելու քաղաքացիական նախաձեռնությունների խթանման նպատակով»

Մրցույթի հիմնական խնդիրներն են՝

- 1) երիտասարդության գյուտարարության, նորարարության խթանումը և զարգացումը,
- 2) երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համար գործնական նշանակություն ունեցող նորարարական նախագծերի և գիտատեխնիկական մշակումների հայտնաբերումը և հնարավոր ներդրումը,
- 3) սոցիալական և հասարակական կարևոր խնդիրների լուծման գործընթացներում հասարակական միավորումների, տնտեսվարող սուբյեկտների և կառավարման պետական մարմինների միջև բոլոր մակարդակներում համագործակցության կատարելագործումը:

### **Ծրագրի իրականացնողները՝**

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի երիտասարդական հիմնադրամ (համաձայնությամբ)

### **Ընտրված միավորի տեսակ՝** Գաղափարների մրցույթ

**Իրականացման ժամկետներ՝** 2014-2017թթ.

### **Ծրագրի թիրախը՝** ՀՀ երիտասարդությունը

**Ծրագրի արդյունքներ:** Ծրագիրն իրականացվում է արդեն երկու տարի, որի ընթացքում առաջին տարին մրցույթն ունեցել է երեք շահող, ովքեր մասնակցել են Բելոռուսում կայացած «100 գաղափար ԱՊՀ-ի համար» երիտասարդական մրցույթին: 2015թ.-ին սահմանված մրցանակներ չեն նախատեսվել: 2016թ.-ին մրցույթը ունեցել է վեց շահողներ՝ երկու գլխավոր մրցանակ շահած երիտասարդ և չորսը՝ խրախուսական: 2016թ.-ին

հաղթողների համար սահմանվել է 500.000 դրամական պարգևներ, իսկ որպես խրախուսական պարգև՝ յուրաքանչյուր երիտասարդին 250.000 դրամական միջոց:

Մրցույթի առաջին տարին եղել է փորձնական-նախապատրաստողական, և կրել է երկիրը ԱՊՀ շրջանում ներկայացնելու առանջահերթ խնդիր, այնինչ հաջորդ տարի ավելի լուրջ միջոցառումներ են ձեռնարկվել կազմակերպչական հարցերում, և մրցույթը ուղղվել է արդեն Հայաստանի երիտասարդներին:

Ծրագրի գնահատման մեթոդաբանությունը

Նպատակ: Գնահատել իրականացված ծրագրի արդյունավետությունը և պարզել միջոցառումների համապատասխանությունը Ռազմավարական նպատակներին:

Խնդիրները՝

1. Որոնք են եղել ծրագրի սկզբնական նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքը ծրագրի կազմակերպչի ու իրականացնող(ների) կողմից,
2. Որքանով է ծրագիրը իր նպատակով, խնդիրներով, ակնկալվող արդյունքով համապատասխանում Ռազմավարության նպատակին,
3. Որքանով է առնչվում Ռազմավարության համապատասխան գերակայությանը, որի ներքո նախատեսված է եղել իրականացնել,
4. Ինչ հիմնական խոչընդոտներ են հանդիպել ծրագրի իրականացման ժամանակ,
5. Արդյոք եղել են փոփոխություններ՝ նախատեսված գործողությունների կատարման ժամանակ, ինչպես են դրանք կատարվել,
6. Որքանով է ծրագիրը հաջողվել՝ նախատեսված խնդիրների իրականացման հարցում,
7. Արդյոք նախատեսված խնդիրները թույլ են տվել հասնել ցանկալի արդյունքին,
8. Հաշվի առնելով ծրագրի արդյունքը՝ ծրագրի կրկնվելու դեպքում ինչ փոփոխություններ են նախատեսվում: Եթե այդպիսիք կան, ինչպես են դրանք իրականացվելու:

Նպատակներին հասնելու համար կիրառվել են տեղեկատվության ստացման հետևյալ մեթոդները՝

- առանցքային տեղեկատուների հետ անհատական հարցազրույցներ,
- փաստաթղթերի վերլուծություն,
- մրցույթի երկու տարիների շահողների հետ ֆոկուս-խմբային քննարկում,

Իրականացվել է հետևյալ փաստաթղթերի վերլուծություն՝

- իրականացված դրամաշնորհային ծրագրերի հաշվետվություններ,
- ծրագրի կանոնակարգ,
- մրցույթի գնահատման չափորոշիչներ:

### **«100 գաղափար Հայաստանի համար» ծրագրի արդյունավետության գնահատում**

Ծրագրի սկզբնական նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքը՝ ըստ միջոցառման իրականացնողների

Ինչպես ներկայացնում են հետազոտության առանցքային տեղեկատուները, ովքեր եղել են հենց Հայաստանում ծրագրի նախաձեռնողները, գաղափարը եկել է Բելառուսիայում իրականացվող «100 գաղափար ԱՊՀ-ի համար» երիտասարդական մրցույթին մասնակցելու հրավերից: Ժամանակի սղության պատճառով տեղեկատուները ցածր են գնահատում առաջին տարվա մրցույթը՝ մրցույթի PR-ի, կազմակերպվածության, ներկայացված գաղափարների առումով: Առաջին տարին մրցույթը շահողների համար խրախուսում հանդիսացել է ««100 գաղափար ԱՊՀ-ի համար» երիտասարդական մրցույթին մասնակցելու հնարավորությունը:

«Երբ մասնակցեցինք Բելառուսում կազմակերպված մրցույթին, հասկացանք, որ մենք թույլ ենք շատ, մեր գաղափարները թույլ էին», -առանցքային տեղեկատուի հետ հարցազրույցից մեջբերում:

Առաջին տարվա փորձը, կազմակերպիչների խոսքերով, օգնեց իրենց ավելի լավ պատկերացնել գործընթացը, որոշել մրցույթի դերը Հայաստանի երիտարասարդության համար: 2016թ.-ի մրցույթի մասին տեղեկատվու-

թյունը ավելի երկար ժամանակ է շրջանառվել, ներկայացվել են 30 դիմումներ, մշակվել է կանոնադրություն, գործել է կազմկոմիտե:

Այսպիսով, ինչպես նշում են ծրագրի կազմակերպիչները, ի սկզբանե մրցույթի անցկացման նպատակը եղել է Հայաստանը ԱՊՀ երկրների մրցույթում ներկայացնելը, սակայն հետագայում մրցույթի նպատակները ուղղվել են տեղական երիտասարդության գիտական շահերին:

Ծրագիրն իրականացնելիս ակնկալվել է երիտասարդության շրջանում շրջանառության մեջ դնել գիտական գաղափարների գնահատված լինելու կարևորությունը, դրդել երիտասարդներին նոր գաղափարներ արտադրել, հասցնել մինչև վաճառքի արտադրանքի մակարդակի:

Գնահատումը ցույց է տալիս, որ Մրցույթը թե՛ կազմակերպչական, թե՛ բովանդակային տեսանկյունից ունեցել է աճ, ինչը վկայում է, որ կազմակերպիչները ծրագրի իրականացման հիմքում դրել են իրականացված աշխատանքի հիման վրա խնդիրների դուրսբերման/ճանաչման, հաղթահարման մոտեցումը:

### **Ծրագրի իրականացման առանձնահատկությունները**

**Ծրագրին դիմելու ընթացակարգը:** Ծրագիրն մասնակցելու համար մասնակիցները պետք է դիմում հայտ ներկայացնեն, որտեղ մանրամասն կնկարագրեն նորարարական նախագիծը, դրա արդիականությունը, նորույթն ու յուրահատկությունը, դրա իրականացման նպատակն ու դրա միջոցով լուծվելիք խնդիրները, նորարարական ծրագրի առավելությունները և այլ բնութագրիչ տեղեկություններ: Ծրագրի մասին հայտարարությունները տարածվել են Սպորտի ու երիտասարդության հարցերի նախարարության պաշտոնական կայքում, [erit.am](#) կայքում, տարբեր օրաթերթերի միջոցով, ԱՐՄԱԿԱԴ տեղեկատվական հարթակի միջոցով, երիտասարդական հասարակական կազմակերպությունների ցանցերի միջոցով:

Ինչպես նշում են մրցույթը շահած երիտասարդները, լրացման հետ կապված որևէ խնդիր չեն ունեցել:

Թեպետ առաջին տարվա համեմատ ծրագրի PR-ը առանցքային տեղեկատուների կարծիքով ավելի լավ է արվել, այնուամենայնիվ նրանք նշում էին, որ ծրագրի լուսաբանման աշխատանքները բարելավման կարիք ունեն:

### **Ծրագրի իրականացման ժամանակ հանդիպած խոչընդոտները, փոփոխությունները:**

Ծրագրի կազմակերպիչների խոսքերով, քանի որ առաջին տարին Մրցույթի անցկացումը հիմնականում կրում էր երկիրը ԱՊՀ երկրների շրջանում ներկայացնելու նպատակ, և կազմակերպման աշխատանքները իրականացվել են սուղ ժամկետներում, մի շարք կարևոր հարցեր մնացել են չլուծված, ինչպես օրինակ, Կազմկոմիտեի ձևավորումը, Մրցույթի մասին տեղեկատվության տարբեր ուղիների ապահովումը, դիմումների ժամանակը և այլն: Այս և նման այլ հարցեր լուծում են ստացել հաջորդ տարի, երբ մրցույթը միտված է եղել հայաստանյան երիտասարդության կարիքներին:

Ինչպես նշում են առանցքային տեղեկատուները, մրցույթի երկրորդ տարում առաջ եկած խոչընդոտ է եղել փորձագետների՝ ըստ երկրի առաջնային կարիքների առանձնացրած ուղղությունների և երիտասարդների հետաքրքրությունների անհամապատասխանությունը: Երբ, օրինակ, տեղեկատվական տեխնոլոգիաները, փորձագետների կողմից համարվելով արդեն իսկ զարգացած ուղղություն, չի ներառվել մրցութում, ստացել է բազմաթիվ հայտեր, այնինչ փորձագետների կողմից կարևորված ռազմական ուղղությամբ հայտ չի ներկայացվել: Արդյունքում Կազմկոմիտեն, հիմնվելով երիտասարդների հետաքրքրությունների վրա, փոխել է Մրցույթի ուղղությունները:

### **Ծրագրի ֆինանսավորումն ու ժամանակացույցը:**

Ըստ «100 գաղափար Հայաստանի համար» ծրագրի կանոնակարգի՝ Մրցույթի ֆինանսավորումն իրականացվում է երիտասարդական պետական քաղաքականության իրականացման համար ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներով, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներով:

Նույն կանոնակարգով սահմանվում է, որ Մրցույթն անցկացվում է ամեն տարի:

Ծրագրի արդյունքների ու ազդեցության համար սահմանված գնահատման և մոնիթորինգի համակարգ ծրագրի կանոնակարգով սահմանված չէ:

Ծրագրի արդյունավետությունը, նախատեսվող փոփոխությունները

Ծրագրի արդյունավետությունը հասկանալու համար անդրադառնանք ծրագրի կանոնակարգի մեջ նշված նպատակին ու խնդիրներին:

**Նպատակ:** «Մրցույթն անցկացվում է երիտասարդների նորարարական մտածողությունը զարգացնելու, ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների լուծման գործընթացներում երիտասարդներին ներգրավելու գիտատեխնիկական մշակումներ և նորարարական նախագծեր իրականացնելու քաղաքացիական նախաձեռնությունների խթանման նպատակով»

Անդրադառնանք ավելի մանրամասն. «Մրցույթն անցկացվում է՝

- երիտասարդների նորարարական մտածողությունը զարգացնելու,

Քանի որ, մրցույթն իր բնույթով պարտադրում է գաղափարի նորարարականությունը, ուստի մրցույթին էլ կարող են դիմել միայն նրանք, ովքեր, կարծում են, որ իրենց գաղափարը նորարարական է, սակայն նորարարականության չափանիշները միևնույն ժամանակ կանոնադրությամբ սահմանված չեն և հիմնվում են կազմկոմիտեի անդամների մոտեցման վրա:

Մրցույթի՝ նախագծերի գնահատման չափանիշների մեջ առանձնանում են՝ գաղափարի արդիականությունը, նորությունը, յուրօրինակությունը:

Մրցույթը շահած երիտասարդների հետ ֆոկուս-խմբային քննարկման ժամանակ հնչեցին գաղափարներ, որ աշխատանքը ներկայացնելիս իրենք էլ չեն իմացել՝ արդյոք իրենց գաղափարը աշխարհում նորարարական է թե ոչ, քանի որ ՀՀ երիտասարդ գիտնականները չեն ապահովվում աշխատանքային պայմաններով, ինչպես օրինակ ինտերնետով, լաբորատոր ռեսուրսներով: Գիտական թեմայի նորություն, այդ ուղղությամբ աշխարհում տարված աշխատանքներին ծանոթ լինելու հարցում, մասնավորապես, շատ կարևորվեց միջազգային վճարովի անսագրերից օգտվելու անհրաժեշտությունը, ինչը մասնակիցների համար չի ապահովվել:

«Մի բան անես, պարզվի մեկը դա ոչ թե մի օր, այլ մի տարի առաջ է արել», -երիտասարդների հետ ֆոկուս-խմբային քննարկումից մեջբերում:

- ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների լուծման գործընթացներում երիտասարդներին ներգրավելու

Նպատակի այս բաղադրիչին հասնելու համար Մրցույթի կազմկոմիտեի անդամներ են ընտրվում տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչները՝ երիտասարդների նորարարական նախագծերին առավել մոտ ծանոթացնելու նպատակով: Արդյունքում, ինչպես նշում է առանցքային տեղեկատուն, որոշ գերատեսչությունների ներկայացուցիչներ փորձել են կապ հաստատել երիտասարդների հետ՝ հետազայում կապվելու և գաղափարը իրականացնելու նպատակով:

2015թ.-ին մրցույթը հաղթել են հետևյալ ծրագրերը՝

- «Առեղծվածների երկիր»,
- «Դու դեռ շարունակո՞ւմ ես ծխել» և
- «Արևային էլեկտրակայան»:

2016թ.-ին «Բժշկական և դեղագործական գիտություններ» անվանակարգում հաղթել է «Կրծքագեղձի քաղցկեղի ախտորոշման նոր գենետիկական թեստ» նախագիծը, «Գյուղատնտեսական գիտություններ» անվանակարգում՝ «Կարկտային ամպերի հայտնաբերման և չեզոքացման լազերային համակարգ», «Տեխնիկական գիտություններ» անվանակարգում՝ «Energy Globe», «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» անվանակարգում՝ «Crossroad» նախագծերը: Խրախուսական մրցանակներ են ստացել «Բնական ծակոտկեն նյութերի հիման վրա կոմպոզիտային ֆլոկուլյանտներ և սորբենտներ թափոնային ջրերի մաքրման համար» և «Պատրաստական թիկունք» նախագծերը:

Այնուամենայնիվ, Մրցույթը չի նախատեսում հետադարձ կապ՝ որոշելու համար, թե, օրինակ, ներկայացված կամ շահած նախագծերից քանիսը առաջ բերեցին հետագա հետաքրքրություններ, ինչպես Մրցույթը նպաստեց նախագծերի հետագա զարգացմանը:

Գնահատման չափանիշների մեջ առանձնանում է՝ «Նորարարական նախագծի իրականացման լուծվելիք խնդիրները և նպատակը»:

Գնահատման ընթացքում երիտասարդների հետ խմբային քննարկման արդյունքները ցույց տվեցին, որ այսօր երիտասարդների մոտ նկատվում է երկրում խնդիրների լուծման, մասնակցության պատրաստակամություն:

«Առաջնային չկա մեր երկրում ուղղակի: Էս գաղափարական առաջնայնությունը ինչ-որ մի քանի հոգի չպետք է որոշի, դու պետք է տեսնես՝ ինչն ա գնում կործանման, մի քիչ առաջ տանես», -ֆոկուս-խմբային քննարկումից մեջբերում:

- գիտատեխնիկական մշակումներ և նորարարական նախագծեր իրականացնելու քաղաքացիական նախաձեռնությունների խթանման նպատակով»:

Ինչպես նշում է առանցքային տեղեկատու, մրցույթի խնդիրներից է երիտասարդության շրջանում «գաղափարի խրախուսման», «երիտասարդի արժևորման» արժեքները սերմանելը, հանրության շրջանում երիտասարդների գաղափարների ճանաչելիության միջոցով ցույց տալ, որ պետությունը «զբաղվում է մեծան երիտասարդներով»: Կազմակոմիտեում պետական գերատեսչությունների ներկայացուցչությունը ինքնին փորձ է երիտասարդներին և նրանց նախագծերը՝ պետական կառավարման համակարգի մասը դարձնելու:

Սակայն երիտասարդները գտնում են, որ մրցույթը պետք է ունենա ոչ միայն ճանաչողության բարձրացման գործառույթ, այլ պետք է ուղղված լինի գիտական մտքի զարգացման իրական խնդիրների լուծմանը, ինչպես օրինակ՝ երիտասարդին աշխատանքային ռեսուրսներով ապահովմանը, երիտասարդ գիտնականի նյութական խնդիրների լուծմանը, գաղափարի առաջխաղացման և իրացման ճանապարհների մատնանշմանը:

*«Ես կուզենայի եմ լավագույնները, ովքեր իրականում աշխատել են էտ ամեն ինչի վրա ու ուզում են անեն, սենց պուճուր հետևից բրդեն, ասեն՝ գիտես ինչ կա, սրանից հետո գնա ստեղ, էս մարդուն կասես ու դու արդյունքը կտեսնես»,* -ֆոկուս-խմբային քննարկումից մեջբերում:

*Թեպետ Մրցույթն իր իրականացրած աշխատանքներով համապատասխանում է կանոնակարգի նպատակին, այնուամենայնիվ շահած երիտասարդների շրջանում տարակուսանքներ են առկա հենց Մրցույթի նշանակության հետ կապված: Այն պարագայում, երբ ծրագիրը ուղղված է երիտասարդների գաղափարների ճանաչողության բարձրացմանը, երիտասարդները ակնկալում են գաղափարների իրականացման աջակցություն:*

Մրցույթի հիմնական **խնդիրներն** են՝

1)երիտասարդության գյուտարարության, նորարարության խթանումը և զարգացումը,

Մրցույթը իրենով հնարավորություն է տալիս երիտասարդներին նորարարական մտքերի շուրջ մտածելու և ներկայացնելու: Եթե Մրցույթի անցկացման առաջին տարին եղել է 10 հայտ, ապա հաջորդ 2016 թվականին ստացվել է շուրջ 30 հայտադիմում, որոնցից 16-ը փորձագետների կողմից արժանահավան է համարվել պաշտպանության ներկայացվելու:

2)երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համար գործնական նշանակություն ունեցող նորարարական նախագծերի և գիտատեխնիկական մշակումների հայտնաբերումը և հնարավոր ներդրումը,

Մրցույթը նպաստում է նորարարական գաղափարների հայտնաբերմանը, բարձրաձայնմանը, սակայն ներդրման ուղղությամբ աշխատանքներ չեն նախատեսվում:

3)սոցիալական և հասարակական կարևոր խնդիրների լուծման գործընթացներում հասարակական միավորումների, տնտեսվարող սուբյեկտների և կառավարման պետական մարմինների միջև բոլոր մակարդակներում համագործակցության կատարելագործումը

Ծրագրի այս խնդրին հասնելու համար ծրագրի կանոնակարգում սահմանվում է Կազմակոմիտեի և Հանձնաժողովի ընտրության մոտեցումը՝

«Կազմակոմիտեն բաղկացած է տասը անդամից, որոնցից հինգ ներկայացնում են պետական կառավարման մարմինները, իսկ հինգը՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, գիտության և նորարարության ոլորտներին առնչվող ՀՀ հասարակական կազմակերպությունները: Կազմակոմիտեի և Հանձնաժողովի կազմերը հաստատվում են ՍԵՀՆ նախարարի հրամանով՝ համաձայնեցված այն պետական մարմինների հետ, որոնց ներկայացուցիչները ընգրկվելու են Կազմակոմիտեի և Հանձնաժողովի կազմերում»: Կազմակոմիտեի և Հանձնաժողովի կազմերը ընտրվում են մեկ տարի ժամկետով:

Հասարակական կազմակերպությունները ծրագրում ներգրավվում են որպես տեղեկատվության տարածման ցանցեր:



Ինչպես նշում են առանցքային տեղեկատուները, մրցույթը բացառապես նպատակ է ունեցել աշխատելու երիտասարդի հետ: Ենթադրվել է, որ երիտասարդին անհատական մակարդակով Մրցույթը պետք է նպաստի՝ նորարարական մտածողություն զարգացնելու, ծրագիր մշակելու, սեփական նախագիծը ներկայացնելու, տարբեր մարզերի երիտասարդների հետ հաղորդակցվելու, սեփական գաղափարները հանրության լայն շերտերին ներկայացնելու, աշխատանքների պաշտպանության միջոցով/ժամանակ ոչ ֆորմալ կրթությանը մասնակցելու:

*Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ Մրցույթն իր բնույթով ավելի ճանաչողական է, որի նպատակն է բացահայտել երիտասարդների շրջանում «նորարարական» գաղափարները և դրանք «ճանաչելի» դարձնել՝ ներկայացնելով տեղական հանրությանը, պետական գերատեսչությունների ներկայացուցիչների, գիտությամբ ու նորարարական գաղափարներով զբաղվող կազմակերպությունների շրջանում, և այդքանով Մրցույթի նպատակները իրականացման երկու տարիների ընթացքում սահմանափակվում են: Մրցույթը չի սահմանում գաղափարների զարգացման և ներդրման մեխանիզմներ, սակայն միևնույն ժամանակ Մրցույթը նպաստում է միևնույն գաղափարների շուրջ տարբեր գերատեսչությունների, կազմակերպությունների ներկայացուցիչների, փորձագետների թեկուզ կարծաժամկետ համախմբմանը:*

Ծրագրի համապատասխանությունը Ռազմավարության նպատակին և գերակայություններին

Ռազմավարության նպատակն է՝ «9. Ռազմավարության նպատակն է բարձրացնել երիտասարդների քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին **մասնակցության աստիճանը**, փաստարկված և իրատեսական **լուծումներ առաջարկել** երիտասարդների զբաղվածության, սոցիալ-տնտեսական խնդիրների հաղթահարման ուղղությամբ, **խթանել** առողջ ապրելակերպը, **նպաստել** հոգևոր-մշակութային արժեքների զարգացմանը և ռազմահայրենասիրական դաստիարակությանը, ինչպես նաև **ապահովել** կրթության շարունակականությունը և ոչ ֆորմալ կրթության ճանաչելիությունը: Սույն ռազմավարության մեջ երիտասարդությունն անմիջական շահառու է և ծավալվող գործընթացներում իր ավանդը ներդնող կարևոր մասնակից»:

Մրցույթը իր նպատակով և խնդիրներներով հնարավորություն է ստեղծում ուղղակիորեն երիտասարդի համար իր «գաղափարով» մասնակցել երկրի սոցիալ-տնտեսական խնդիրների հաղթահարմանը, մասնակցել ոչ ֆորմալ կրթության ճանաչելիության բարձրացմանը: Մրցույթը ինքնին հնարավորություն է ստեղծում երիտասարդի համար ներկայացնել խնդրի վերաբերյալ իր գիտական մտածողությունները, ձեռք բերել համախոհներ, ներկայացնել իր գիտական միտքը լայն հանրությանը, այդ թվում նաև հնարավոր գործատուներին և գործընկերներին:

## Առաջարկություններ

Հիմնվելով ծրագրի գնահատման արդյունքների, ոլորտի ներկայացուցիչների ներկայացրած կարծիքների վրա՝ ուղղված ծրագրի հետագա բարելավմանը, առաջարկում ենք՝

- Հստակեցնել Մրցույթի իրականացման նպատակը՝ սահմանելով առաջադրվող ուղղությունների որոշման հիմքը՝ ըստ երկրի սոցիալ-տնտեսական կարիքների լուծմանը նպաստող գաղափարների կարևորման կամ երիտասարդների հետաքրքրությունների համապատասխանության:
- Փորձագետների շրջանում զարգացնել ուղղությունների սահմանման հիմնավորման մշակույթը՝ վիճակագրական տվյալներով, երկրի առաջնայնությունների ծրագրերով և այլն:
- Հստակ չափանիշներով սահմանել «նորարարականություն» հասկացությունը:
- Երիտասարդների համար ապահովել սեփական գաղափարի նորարարականության ստուգման հարթակներ, ինչպես օրինակ՝ գիտական ամսագրերի հասանելիություն:
- Մշակել գնահատման բազմաչափ սանդղակ յուրաքանչյուր չափանիշի համար՝ առանձնացնելով արդիականության, նորության, յուրօրինակության և այլ մանրամասն ցուցիչներ, որոնք կապահպանվեն մրցույթին ներկայացված հայտադիմումների կանոնակարգված արխիվացման և հետագա ուսումնասիրությունները հնարավոր դարձնելու համար:
- Ուսումնասիրել նման մրցույթների փորձը և սահմանել չափորոշիչ Մրցույթին մասնակցած ծրագրերի զարգացման դինամիկայի վերաբերյալ, ու քանի որ մրցույթն ամենամյա է, զուցե արժեքավոր կլինի ամեն տարի տեղեկատվություն հավաքել նախորդ տարիների մասնակիցների շրջանում՝ արդյոք ծրագիրը հետագա զարգացում ստացել է, և որն է եղել մրցույթի դերը, ինչը ցույց կտա ծրագրի արդյունավետությունը:

- Քանի որ մրցույթի նպատակների մեջ մտնում է գաղափարների հնարավոր ներդրումները, հնարավորության դեպքում մրցույթը լրացնել հետագա աջակցմանն ուղղված հավելյալ փուլով՝ շահած աշխատանքների առաջխաղացմանն ուղղությամբ միջազգային տեղեկատվական ուղիների օգտագործմամբ, իրականացվելիք աշխատանքների համար հնարավոր ֆոնդահայթայթման միջոցով: Այս փուլում կարող են ներգրավվել հասարակական գիտական, պետական և միջազգային կազմակերպությունները, ինչը կնպաստի «երիտասարդ-հասարակական կազմակերպություն-պետություն» եռակողմ համագործակցության զարգացմանը: Նույն նպատակով կարելի է նաև կազմակերպել առանձին նախագծերի ներկայացումը ավելի մեղ շրջանակների համար:
- Ներառել երիտասարդների շրջանում գաղափարների առաջխաղացման ինքնուրույնության մշակույթի ձևավորման բաղադրիչ, քանի որ գնահատումը ցույց է տալիս, որ երիտասարդները մոտիվացված չեն սեփական գաղափարները ինքնուրույնաբար առաջ տանելու:

## **Հավելված.**

### **Գնահատման մասնակցած փորձագետների ցանկ**

1. Թամարա Թորոսյան, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդական հարցերի վարչության պետ
2. Դավիթ Հայրապետյան, «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
3. Արեգ Թադևոսյան, ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի անդամ, Թրեյներների ազգային ասոցիացիայի նախագահ
4. Հոսթ-Բիմ Աճեմյան, Հայաստանում ԵՄ պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավար
5. Ղարիբ Հարությունյան, «Կոմպաս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն ՀԿ նախագահ
6. Արուսյակ Պողոսյան, Հայաստանի երիտասարդական հիմնադրամի Ծրագրերի իրականացման ծառայության ղեկավար
7. Լիանա Սարգսյան, Վորլդ Վիժն Հայաստանի երիտասարդական ծրագրերի համակարգող, Գայանե Վարդանյան, Վորլդ Վիժն Հայաստանի շահերի պաշտպանությանն ուղղված ծրագրերի ղեկավար
8. Արսեն Սիմոնյան, ՕքսեՋեն հիմնադրամի Աղետների ռիսկի նվազեցման ծրագրի համակարգող
9. Քրիստինե Սարգսյան, Հայաստանում Թեդէքս կազմակերպիչ
10. Անահիտ Մինասյան, Կազա հիմնադրամի տնօրեն
11. Արմենուհի Պետրոսյան, ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, Ծրագրերի մշակման եվ իրականացման բաժնի պետ

### **Առանցքային տեղեկատուների ցանկ**

1. Յողիկ Բեժանյան, Զբաղվածության պետական գործակալության տեղեկատվության ապահովման բաժնի պետ
2. Գայանե Հովակիմյան, տնօրեն, ՀՀ արդարադատության նախարարության Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն ՊՈԱԿ-ի տնօրեն
3. Արշակ Գասպարյան, «Սոցիալական Արդարություն» ՀԿ-ի նախագահ
4. Վարդուհի Արամյան, ««Հայկական ճամբար» լեզվի և առազաստանավի դպրոց» ՀԿ, ծրագրերի համակարգող
5. Արզուման Հարությունյան, «Արտ Սայթ» ՍՊԸ տնօրեն
6. Հակոբ Զեյնալյան, Արարատի մարզի Արմաշ համայնքի ղեկավար
7. Ռուզաննա Մկրտչյան, Արմավիրի թիվ 1 ավագ դպրոցի կրթական ծրագրի համակարգող/ուսուցիչ
8. Խաչիկ Վարդանյան, Աշտարակի Սուրբ Մարինե եկեղեցուն կից երիտասարդաց միության պատասխանատու
9. Լիլիթ Խաչատրյան, Եղեգնաձորի Քաղաքացիական երիտասարդական կենտրոն ՀԿ-ի համակարգող
10. Իշխան Նազարյան, Գավառի «Ափի Մեջ» սոցիալական ՀԿ նախագահ
11. Արման Ղազարյան, «Երիտասարդ ժուռնալիստների ասոցիացիա» ՀԿ նախագահ
12. Արթուր Խոջաբաղյան, Գորիսի «ՕգմենթԱր»/ AugmentAr սոցիալական ձեռնարկության տնօրեն
13. Վարսիկ Ներկարարյան, Եվրասիա համագործակցության հիմնադրամի հյուսիսային մասնաճյուղի երիտասարդական ծրագրերի համակարգող
14. Արշալույս Հակոբյան, Սյունիքի մարզային երիտասարդական կենտրոնի ծրագրերի օգնական
15. Լիլիթ Սինդոյան, Ջինիշյան հիշատակի հիմնադրամի Վանաձորի համակարգող
16. Արտուշ Մկրտչյան, Գյումրու համայնքապետարան, Մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ
17. Գառնիկ Բեգլարյան, Չարենցավանի համայնքապետարան, Մշակույթի, կրթության, սպորտի և երիտասարդության հարցերով բաժնի գլխավոր մասնագետ
18. Գայանե Գրիգորյան, Չարենցավանի «Ռեսուրս կենտրոն» բարեգործական ՀԿ նախագահ



# Report on the Monitoring and Evaluation of the 2013-2017 Strategy of State Youth Policy of the RA

## Executive Summary

### Introduction

The 2013-2017 Strategy for the State Youth Policy of the Republic of Armenia (hereinafter Strategy) was developed in 2012 on the basis of the Armenian Youth National Report and the comprehensive study of “Aspirations and Expectations of the Youth of Armenia”. According to the 2015-2025 Concept of the State Youth Policy of the Republic of Armenia, State Youth Policy is an integral part of the RA state policy and has a strategic importance. It is meant to create legal, economic and organizational conditions for the comprehensive development, self-affirmation and self-expression of the youth. The state youth policy is developed and implemented by the state authorized body with the participation of state and regional government bodies, local authorities, state youth policy subjects, as well as international organizations.

The aim of “The Monitoring and Evaluation of the 2013-2017 Strategy for the State Youth Policy of the Republic of Armenia” is due to the fact that the previous Strategy needs to be evaluated from the perspectives of youth needs compliance, logical structure, measurability, etc., to develop the 2018-2022 Strategy for State Youth Policy of the Republic of Armenia. Besides, a need has arisen to evaluate to what extent the Strategy, together with its activities, has been implemented so far.

The evaluation was conducted by Youth Studies Institute in October-December, 2016 with the support of the RA Ministry of Sport and Youth Affairs.

The evaluation findings are expected to be used to organize a more effective process of developing the 2018-2022 Strategy for the State Youth Policy of the Republic of Armenia.

### Data Collection Methods and Sources

